



Ուրբաթ  
1 Յունուար

### Որոշումներ

Կարդա՛  
Նէմիա 10. 28-31

(Անոցք) երդում քրից  
...Աստուծոյ օրէնքին  
ճամաճայն ընթացալ,  
եւ մեր Տէրոջ բոլոր  
պատուիրանները...  
պահեն եւ գործադրեն:  
—Նէմիա 10. 29

Աստուծո՞րն է՞ Մէս  
Տարուաւ Մէս:  
■ Ծննդոց 1-3  
■ Առակաց 1. 1-7



- ♦ Ամէն օրուան, ամսուան եւ տարուան աւարտին, հարց տալ՝ թէ արդեօք ատկէ աւելի լաւ կ'ընայի՞<sup>®</sup> ընել:
- ♦ Մինչեւ մահ գործել ոչ թէ ինծի համար, այլ Աստուծոյ համար:

Նէմիայի 10-րդ գլուխին մէջ կը կը կարդանք, որ Աստուծոյ ժողովուրդը երդում կ'ընէ, հետեւելու Տէրոջ պատուէրներուն եւ օրէնքներուն: Այդ երդումը այնքան լրջօրէն նկատի առնուած էր, որ անոնք պատրաստ էին Աստուծոյ անէծքը ընդունելու, եթէ օրինազանց գտնուելու ըլլային:

Թէրեւս նոր տարուան սկզբնաւորութեան առած մեր որոշումները այդքան լուրջ բաներ չեն: Սակայն, Աստուծոյ հետեւելու որեւէ որոշում պատահական խոստում մը ըլլալու չէ: Այլ խոր ակնածանքով եւ լրջութեամբ եղած ուխտ մը նկատուելու է, Սուրբ Հոգիին օգնութեամբ, ամէն օր նորոգուելու նպատակով:

Ի՞նչ են քու որոշումներդ այս Նոր Տարուան ընթացքին:

**Չամբ ըրէ՛ հաստատ մնալ որոշումներուդ վրայ:**

**Չ**ոնաթան հտուրրտ անունով  
աւետարանիչ մը, 1722-ին, 70  
տարբեր որոշումներ առաւ իր  
կեանքը Աստուծոյ եւ շուրջիննե-  
րուն հետ աւելի ներդաշնակ  
պահելու համար: Հետեւեալները մի  
քանի օրինակներ են.—

- ♦ Ընել այն բաները, որոնք աւելի Աստուծոյ փառքին համար ըլլան:
- ♦ Պարտականութիւններս կատարել ընդհանրապէս ուրիշներու բարօրութեան համար:
- ♦ Երբեք չընել որեւէ բան, որ պիտի վախնայի ընել, երբ իմ կեանքիս վերջին ժամը եղած ըլլար:
- ♦ Սերտել Աստուծոյ Խօսքը հաստատօրէն, չարունակաբար եւ հաւատքով:





Շարաթ  
2 Յունուար

**Տէր, Խանդավառուած Եմ**

Կարդա՛  
Սաղմոս 119. 17-24

Բա՛ց իմ աչքերս,  
որպէսզի քու օրէնքէդ  
սքանչելիքներ  
տեսնեմ:  
—Սաղմոս 119. 18

Աստուծու Մէջ  
Տարուա՛ Մէջ  
■ Ծննդոց 4-6  
■ Առակաց 1. 8-19



**Սուրբ Գրային Հատուածը:** Եթէ Հատուածը կարճ է, կը կարդամ անկէ առաջ կամ վերջ եղող Համարներն ալ: Կը խորհրդածեմ անոնց վրայ եւ գրի կ'առնեմ կարգ մը բաներ տեսնելու համար, թէ Աստուած ի՞նչ պէս ներշնչած է այդ օրուան խորհրդածութեան հեղինակը: Կը ցանկագրեմ ընթերցանութեան Հատուածներուն տեղերը եւ նիւթերը, որպէսզի վերակոչեմ զանոնք, երբ պէտք զգամ: Շատ կը սիրեմ այս բոլորը ընել:

Ամենէն աւելի գիտ սպաւորողը այդ ընթերցողին անհամբեր եւ խանդավառ սպասելն էր, թէ Աստուած Իր Խօսքին միջոցով ի՞նչ ունէր իրեն ըսելիք այդ օր: Ան կ'արձագանգէր սաղմոսերգուին աղօթքը. «Բաց իմ աչքերս, որպէսզի քու օրէնքէդ սքանչելիքներ տեսնեմ» (119. 18):

Գրողի մը խորհուրդները անշուշտ չեն կրնար փոխարինել Աստուծոյ ուժեղ Խօսքը: Միայն Աստուծոյ Խօսքէն կրնանք հոգեւոր սնունդ եւ գորութիւն ստանալ: Եւ այդ է խանդավառողը:

**Աստուածաշունչը կենաց Հաց է, որ երբեք օթեկ չի դառնար:**



**Մ**արդիկ կը գործածեն ԶԼաց Մեր Հանապազորդը շատ մը ձեւերով: Գործաւորներու խմբակ մը կ'ըսէ, թէ կը կարդան զայն գործի սկսելէ առաջ: Ընտանիքներ կը կարդան ճաշատեղանին շուրջ: Ուրիշներ դադար մը կամ հանդարտ պահ մը կ'օգտագործեն ընթերցելու զայն: Ընթերցողէ մը ստացուած նամակ մը զիս շատ ներշնչեց, ամէն առաւօտ օրուան խորհրդածութիւնը կարդալու առնչութեամբ: Ան կը գրէր. «Ամէն առտու երբ բանամ գրքոյկը, Աստուծոյ կ'ըսեմ, թէ անհամբեր եմ, տեսնելու թէ Իր Խօսքը ի՞նչ պիտի ուսուցանէ ինձի: Ապա կը կարդամ նշանակուած



Կիրակի  
3 Յունուար

### Սկսէ՛ Այսօր

Կարդա՛  
Սաղմոս 119. 25-32

Քու վկայութիւններուդ  
յարեցայ, ո՛վ Տէր, մի՛  
ամչցներ զիս: Քու  
պատուիրացներուդ  
ճամբուն մէջ պիտի  
վազեմ:  
—Սաղմոս 119. 31-32

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ  
■ Ծննդոց 7-9  
■ Առակաց 1. 20-33



**Շ**ատեր որոշումներ կ'առնեն  
Նոր Տարուան սեմին, իրենք  
իրենց խոստանալով (երբեմն ալ Աս-  
տուծոյ), որ եկող տարի ամէն բան  
տարբեր պիտի ըլլայ: Կը վճռենք  
մեր գէշ սովորութիւնները փոխել  
եւ նոր ու օգտակար վերաբեր-  
մունքներ կազմել մեր կեանքին մէջ:

Ասոր նման որոշումներ մեծա-  
պէս յանձնարարելի են, եւ յաճախ  
կրնան ծառայել որպէս մղիչ ուժ  
մեր հոգեւոր աճումին: Բայց ոչ  
միշտ: Երբեմն մեր այդ որոշումները  
կարճ ժամանակի համար կը  
գործադրենք եւ ապա կը մոռնանք:

Սամուէլ ճանարն հաւատացեալ  
մըն էր, որ ապրեցաւ 18-րդ դարուն:  
Ան յաճախ գրած է որոշումներու մասին իր թերթին մէջ:  
Ան կ'ըսէ. «Ես չարագրեցի ոչ մէկ ծայրայեղ բնաւոր-  
ութիւն՝ ոչ ալ կրցայ հաստատ մնալ Նոր Տարուան սեմին  
առած որեւէ որոշումիս վրայ: Սակայն, այդ բոլորէն ետք,  
կը յուսամ բարեփոխուած ըլլալ եւ կեանքս չկորսնցնել  
պարսպ նպատակներու համար»:

Լաւ է մերթ ընդ մերթ անձնաքննութիւն կատարել:  
Մենք պէտք է դիմագրաւենք այն փոփոխութիւնները, որ  
կը զգանք, թէ պէտք է ըլլան, եւ ապա ծրագիրներ մշա-  
կել, թէ ի՞նչպէս կարելի է գանոնք իրագործել: Օրինակ,  
եթէ կը զգանք, թէ աւօրեայ մեր խորհրդածութեան  
սովորութիւնները տկար են կամ ոչ կայուն, լաւ է, որ  
որոշենք քիչ մը աւելի ժամանակ տրամադրել աղօթքի  
մտերմանալով Աստուծոյ հետ, մեր հաղորդակցութիւնը  
աւելի գօրացնելու համար:

Խնդրենք Սուրբ Հոգիէն, որ օգնէ մեզի մեր որոշումին  
մէջ հաստատակամ մնալու:

**Աստուած կը խօսի անոնց, որոնք ժամանակ կու տան լսելու:  
մտիկ կ'ըմէ անոնց, որոնք ժամանակ կու տան աղօթելու:**





Երկուշաբթի  
4 Յունուար

### Ի՞նչ Պիտի Գրես

Կարդա՛  
Սաղմոս 90

Դուք որ չէք գիտեր, թե ի՞նչ պիտի պատահի վաղը: Քանի որ ի՞նչ է ձեր կեանքը. արդարեւ շոգի մըն է, որ քիչ մը ատեն կ'երեւնայ, յետոյ կ'աներեւութանայ: —Յակոբ 4, 14-15

ԱՍՏՈՒՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՁ  
■ Ծ'ննդոց 10-12  
■ Առակաց 2. 1-11



**Յ**ունուար 2006-ին, Վըրճինիա նահանգի մէկ Հանքահորին մէջ պատահած պայթումը վտանգեց 13 Հանքագործերու կեանքը: Այդ նահանգին մէջ մեծցած ըլլալուս Համար, ես ալ, միլիոնաւոր ուրիշ մարդոց հետ, դամուած մնացի հետագայ օրերուն Հաղորդուած լուրերուն: Ցաւալի էր, որ բոլոր Հանքագործերը՝ բացի մէկէն՝ մահացած էին: Դժբախտաբար, ընտանիքներու Հասած նախնական տեղեկութիւնը ըսած էր, թէ բոլորը՝ բացի մէկէն՝ ողջ էին: Բայց երբ մահացողներու դաժան լուրը տարածուեցաւ, մարդոց ցաւը վերածուեցաւ ցատումի եւ անոնք սկսան փնտռել

մէկը մեղադրելու այդ ցաւալի աղէտին Համար:

Թաղման պաշտամունքի ընթացքին, Հոգեւոր Հովիւ մը խնդրեց սգակիրներէն, որ Հարցին նայէին տարբեր ուղղութեամբ – ներքնապէս: Կարգ մը Հանքագործեր, իրենց վերջին ժամերուն գրած էին նամակներ իրենց ընտանիքներուն, տեսակ մը միտքարութիւն եւ յոյս տալով անոնց: Հոգեւոր Հովիւը, այդ բոլորին լոյսին տակ, յանցաւորը փնտռելու եւ մեղադրելու փոխարէն, կոչ ըրաւ ներկաներուն, որ իրենք ինչ պիտի ուզէին գրել իրենց կեանքի վերջին երկու ժամերուն, որպէս Հրաժեշտի խօսք:

Ձեռով մը մենք ալ այդ Հանքագործերուն պէս ենք: Արգելափակուած մութ աշխարհի մը մէջ, կը դիմադրաւենք մարմնաւոր մահը: Ինչպէ՞ս կ'սպրինք մեր կեանքը որպէս Յիսուսի Հետեւորդներ եւ ի՞նչ պիտի ըլլայ մեր խօսքը աշխարհին ուղղուած: Յակոբոս կ'ըսէ. «Շոգի մըն է, որ քիչ մը ատեն կ'երեւնայ, յետոյ կ'աներեւութանայ» (4, 15): Ի՞նչ պիտի գրես այսօր դուն քու կեանքովդ:

**Քրիստոսանման կեանք մը, յոյսի պատգամ մըն է որոնող աշխարհի մը համար:**





Երեքշաբթի  
5 Յունուար

**Երրորդ Արագ՝  
Ոչ Մէկ Տեղ**

Կարդա՛  
Բ. Օրինաց 4. 1-10

Միայն թէ զգուշացի՛ր դու՛ն քեզի, շատ ուշադիր եղի՛ր քու անձիդ, որ աչքերուդ տեսած բաները չմոռնաս:  
—Բ. Օրինաց 4. 9

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԵՆ  
ՏԱՌՈՒԸ ՄԷՋ  
■ Մատթէոս 1-6  
■ Առակաց 2. 12-22



**Ք**արեցի այնքան արագ, որքան կարելի էր: Մղոնի մը չափ վազելէ ետք, քիչ մը դանդաղացուցի վազքս, ապա նորէն արագացուցի քալելս, այնքան՝ որքան կրցայ: Ի վերջոյ, 25 վայրկեան վազելէ ետք, կանգ առի: Միտս արագ կը գարնէր: Շապիկս քրտինքներու մէջ թափառած էր: Այդ բոլորէն ետք, ես տեղ մը չէի գացած: Մարզական մեքենայի մը վրայ վազած էի 2.5 մղոն:

Հանդարտելէ ետք, նստայ եւ Աստուածաշունչս ձեռքս առի: Մասնաւոր ընթերցանութեան ծրագրի մը կը հետեւէի եւ այդ օր հասած էի թուոց գիրքին: Կարգ մը մասեր դանդաղօրէն կարդացի, իսկ կարգ մը այլ հատուածներ շատ արագ: Զգացի, որ տեղ մը չեմ հասնիր, ինչպէս մարզանքի մեքենային վրայ: Մարդահամարներ կատարուած էին, երկար ճամբորդութիւնը կրկնուած էր, Իսրայէլի ցեղերը կրկին անգամներ ցանկագրուած էին: Յաջորդ օր անցայ Բ. Օրինաց գիրքին: Հոն ալ կային թափառումներ եւ աւելի բաներ Իսրայէլացիներու եւ անոնց երկրին մասին: Բայց երբ հասայ 4-րդ գլխուն, սկսայ համկնալ, թէ ինչո՞ւ կարեւոր էին այդ կրկնութիւնները: Մովսէս պատուիրած էր ժողովուրդին, որ «չմոռնան այն բաները, որոնք իրենց աչքերով տեսած էին... եւ գանոնք ուսուցանէին իրենց զաւակներուն» (4. 9): Նախապէս արագ ընթերցանութիւնս Իսրայէլի ժողովուրդին մասին տեղ երթալու առնչութեամբ, դաս մըն էր Աստուծոյ անցեալի ըրածներուն մասին, որպէս ուղեցոյց ապագայի՝ աստուածափախ կեանք մը ապրելու:

Ամբողջ գիրքը Աստուծոյ Շունչն է: Պէտք է շարունակ կարդալ եւ անոր իմաստը գտնել իր ամբողջութեան մէջ:

**Աստուած կը խօսի մեզի Իր Խօսքին միջոցով:  
Ժամանակ տամք մտիկ ընելու:**





Չորեքշաբթի  
6 Յունուար

**Էմմանուէլ՝  
Աստուած**

Կարդա՛  
Մատթ. 1. 18-25

«Ահա կոյսը պիտի  
յղանայ ու որդի պիտի  
ծնանի, եւ Անոր  
անունը Էմմանուէլ  
պիտի կոչեն», որ կը  
թարգմանուի  
Աստուած մեզի հետ:  
—Մատթէոս 1. 23  
ԱՍՏՈՒԱԾՈՒԿՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՆ  
■ Սաղմոս 1-2

**Ք**րիստոսի Հրաշափառ ծնունդը  
կը բացատրուի Աստուծոյ մար-  
դեղութեամբ: Յովհաննէս Աւետարա-  
նիչ կ'ըսէ. «Խօսքը մարմին եղաւ  
ու մեր մէջ բնակեցաւ» (Յովհ.  
1. 14): Իսկ Մատթէոս Աւետարանիչ  
չակերտելով Եսայի մարգարէին  
խօսքը կ'ըսէ. «"Ահա կոյսը պիտի  
յղանայ ու որդի պիտի ծնանի, եւ  
Անոր անունը Էմմանուէլ պիտի  
կոչեն", որ կը թարգմանուի Աստուած  
մեզի հետ» (Մատթ. 1. 23):

Միաստուածութեան միւս կրօնք-  
ները չեն ըսեր, թէ ճիշդ ո՛վ է  
Աստուած եւ ի՛նչ է Անոր կամքն  
ու գործելակերպը, որովհետեւ Ի՛նք  
Աստուած է, եւ մենք մարդ ենք:

Սակայն, քրիստոնէութեան մէջ, այդ խորհրդաւոր ճշմար-  
տութիւնը՝ Քրիստոսի Հրաշափառ ծնունդով յայտնուած է:  
Աստուած «Էմմանուէլ» է, այսինքն Աստուած մեզի հետ:

Ծնող Յիսուս Հաստատեց այս ճշմարտութիւնը, երբ իր  
աշակերտներէն մէկը անմեղօրէն Հարցուց. «Տէ՛ր, ցո՛յց  
տուր մեզի Հայրը (Աստուած), ու կը բաւէ մեզի»: Յիսուս  
ըսաւ. «Ան որ տեսաւ զիս՝ տեսաւ Հայրը» (Յովհ. 14. 8-9):

Քրիստոնէական կրօնքին մէջ «Ո՛ր է Աստուած» Հար-  
ցումը անհեթեթ է: Երբ կարդանք Աւետարանը ու ճանչ-  
նանք այնտեղ գտնուող Քրիստոսը, ինքնաբերաբար  
ճանչցած կ'ըլլանք Հայր Աստուածը: Ասոր Համար, Քրիս-  
տոսի Հրաշափառ յայտնութիւնը մեծ յեղաշրջում մը եւ  
բարեկարգչական յեղափոխութիւն մը կը նկատուի, ինչպէս  
Աւետարանիչը կ'ըսէ. «Լոյսը աշխարհ եկաւ» (Յովհ. 3. 19):  
Աստուած՝ Յիսուսի ծնունդով ոչ միայն մարդ եղաւ, այլ  
մեզի հետ եղաւ, մեզի հետ մնալու խոստում տուաւ Սուրբ  
Հոգիին միջոցով: Մեզի կը մնայ Հաւատալ եւ ընդունիլ:

**Աստուած Քրիստոսով մեզի հետ ըլլալու նկաւ.  
Դուն իր հետ եղած էս:**





Հինգշաբթի  
7 Յունուար

**Զգուշանալ Բաց  
Դուռներէ**

Կարդա՛  
Փիլիպ. 1. 8-11

Պակասամիտ մարդուն  
յիմարութիւնը ուրա-  
խութիւն է, իսկ  
հանճարեղ մարդը  
ուղղամտութեամբ  
կ'ընթանայ:  
—Առակաց 15. 21

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Ծ'ննդոց 13-15  
■ Առակաց 3. 1-10



**Ե**րբեմն Քրիստոնեաներ կը հե-  
տեւին «բաց դուռ» քաղաքա-  
կանութեան: Երբ պատեհութեան մը  
դուռը բացուի, անոնք կ'ենթադրեն,  
թէ Աստուծոյ կամքն է, որ իրենք  
այդ առիթը օգտագործեն:

Նշանաւոր հեղինակ Թէրի Պէքըր-  
թըն, գիտէ, թէ այդ մէկը շիտակ  
չէ: Ան երբեք բացայայտօրէն  
չընդվզեցաւ Աստուծոյ դէմ, սակայն  
ինքզինք շատ հեռու գտաւ Աստուծ-  
մէ, երբ հետեւեցաւ այդ «բաց դուռ»  
քաղաքականութեան, օգտագործելով  
շատ մը առիթներ: Ան կ'ըսէ. «Ես  
ինծի թոյլատրեցի հաւատալ, թէ  
Աստուած կ'օրհնէր իմ ապրած  
կեանքս եւ կատարած գործերս...

որովհետեւ Ան բացած էր բոլոր դուռերը իմ առջեւ»:

Թէեւ ան գործի ասպարէզով գտած էր այն՝ ինչ որ կը  
փնտռէր – յաջող վիպագիր եւ փնտռուած հեղինակ –  
սակայն կը զգար, թէ ինք կորսնցուցած էր իր սերտ եւ  
անմիջական յարաբերութիւնը Աստուծոյ հետ:

Օր մը, երբ ընդունեց, թէ իր զբաղումն էր, որ զինք  
հեռու կը պահէր Աստուծմէ, կռնակը դարձուց իր  
ասպարէզի յաջողութեան եւ նորոգեց իր նուիրումը Աս-  
տուծոյ հանդէպ: Այդ մեծ որոշումէն ետք, անոր գրելու  
աշխատանքը վերաշխուժացաւ եւ ան բարձրագոյն  
մրցանակը շահեցաւ քրիստոնեական վէպեր գրելով:

Եթէ Աստուած մեզ չի կեցներ գործէ մը, չի նշանակեր,  
որ մեր ըրածը շիտակ է եւ Ան կ'ուզէ որ շարունակենք:  
Կարենալ զանազանելու համար, թէ ո՞ր առիթին պիտի  
հետեւինք, պէտք է «զատորոշենք տարբեր բաները անկեղ-  
ծօրէն... լեցուած արդարութեան պտուղներով... Աստուծոյ  
փառքին եւ գովութեան համար» (Փիլիպ. 1. 10-11):

**Լաւագոյն անը Աստուծոյ կամքը հասկնալու,  
«Ես պիտի» ըսելն է Աստուծոյ:**





Ուրբաթ  
8 Յունուար

**Երբ Կեսանքը Գեշ  
Կ'ընթանայ**

Կարդա՛  
Ա. Թագ. 30. 1-6

Դաւիթ ինքզինք  
գորացուց Իր Տէր  
Աստուծոյ միջոցաւ:  
—Ա. Թագ. 30. 6

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ԱՒԷՁ  
■ Ծ'ննդոց 16-18  
■ Առակաց 3. 11-26



**Ա**մէն բան տխուր երեւցաւ Դաւիթի եւ իր մարդոց, երբ անոնք Սեկելակ հասան (Ա. Թագ. 30. 1-6): Ամաղեկացիները յարձակած էին քաղաքին վրայ եւ անոնց կիներն ու մանուկները գերի տարած: Մարդիկ այնքան յուսախաբ էին քաղաքին աւերումները տեսնելով, որ անընդհատ լացին մինչեւ որ ուժասպառ եղան: Դաւիթ՝ իրենց առաջնորդը՝ «չափէն աւելի տագնապած էր», որովհետեւ ժողովուրդը զինք քարկոծելու մասին կը խօսէր (Հ. 6):

Վերջաւորութեան, Դաւիթի բանակը կրկին վերակազմուեցաւ եւ ազատեց իրենց ընտանիքները Ամաղեկացիներէն, զանոնք պարտութեան մատնելով: Բայց պատմութիւնը մեծ անկիւնադարձ մը ունեցաւ, երբ «Դաւիթ՝ Տէրոջմով՝ իր Աստուծոմով, կրկին կը գործանայ» (Հ. 6): Ուրիշ թարգմանութիւններ կը գործածեն «քաջալերուած» կամ «թարմացած» բառերը:

Բնագիրը չ'ըսեր ճիշդ ի՞նչպէս Դաւիթ իրագործեց այդ մէկը: Սակայն, ինծի համար հետաքրքրական է գիտնալ, թէ ի՞նչ ձեւով մենք կրնանք մենք մեզ գորացնել, քաջալերել եւ կամ թարմացնել Տէրոջմով, երբ մենք մեզ կատարեալ յուսախաբութեան մէջ գտնենք:

**Առաջին, կրնանք յիշել, թէ Աստուած ի՞նչ ըրած է մեզի համար:** Կրնանք թուել այն դէպքերը, որոնցմով Աստուած փրկած է մեզ, որպէս պատասխան մեր աղօթքներուն:

**Երկրորդ, կրնանք յիշել, թէ Աստուած ի՞նչ խոստացած է մեզի:** «Ուժովցի՛ր ու քաջ եղի՛ր, մի՛ ահաբեկիր ու մի՛ զարհուրիր, որովհետեւ Տէրը՝ քու Աստուածդ քեզի հետ է՝ ո՛ւր որ երթաս» (Յեսու 1. 9):

**Դաւիթի պէս, սորվինք մենք մեզ գորացնել Տէրոջմով:**

**Մեր մեծագոյն գորութիւնը յաճախ յայտնուած է մեր հանդարտ մնալուն եւ Աստուծոյ վստահելուն մէջ:**







Շարաթ  
9 Յունուար

**Վերքեր, Որոնք  
Կը Բուժեն**

Կարդա՛  
Բ. Կորնթ. 1. 1-7

(Աստուած) կը մխիթարէ մեզ..., որպէսզի մենք ալ կարենանք մխիթարել անոնք, որ... տառապանքի մէջ են: —Բ. Կորնթ. 1. 4

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Ծննդոց 19-21  
■ Առակաց 3. 27-35



Իմ կացութեանս: Շնորհալի նախախնամութեամբ, Աստուած գործածեց այդ պատկերը զիս մխիթարելու: Ինծի համար յատակ եղաւ, թէ բուժումը կը հոսէր Յիսուսի վիրաւոր ձեռքերէն: Եւ այդ էր այն, ինչ որ կ'ըսուէր՝ մեր վերքերը կրնան օգնել ուրիշներու վերքերուն բուժման:

Այդ փորձառութենէն սորվեցայ, թէ ի՛նչպէս Աստուծոյ մխիթարութիւնը՝ տառապանքի ընթացքին, կրնայ ցաւի մէջ եղող մարդոց միջեւ կամուրջներ հաստատել: Առաքեալը այս կէտը յատակ կ'ընէ. «Օրհնեալ ըլլայ Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը... ամէն մխիթարութեան Աստուածը, որ կը մխիթարէ մեզ մեր ամբողջ տառապանքին մէջ, որպէսզի մենք ալ կարենանք մխիթարել զանոնք, որոնք որեւէ տառապանքի մէջ են, այն մխիթարութեամբ՝ որով մենք կը մխիթարուինք Աստուծմէ» (Բ. Կոր. 1. 3-4):

Յաւերդ Աստուծոյ տար: Անոր հոգեկան բուժումը կրնայ օգնել որ դուն ալ քու կարգիդ ուրիշներուն մխիթարութեան միջոց դառնաս:

**Քրիստոս մեզի համար տառապեցաւ, մխիթարելու մեր շուրջ գտնուող տառապեալները:**



**Տ**արիներ առաջ, ցաւալի կորուստի մը փորձառութիւնը ունեցայ: Միստուսը բարեկամ մը, որ նման փորձառութիւն մը ունեցած էր, մխիթարեց զիս ըսելով. «Յիսուս կրնայ քու զգացական վերքդ գործածել ուրիշներուն բուժումին օգտակար ըլլալու»: Ատեն մը ետք, երբ կ'այցելէի միստուսները պատրաստող դպրոց մը, ուր ինծի գիշերելու տեղ սրուած էր, Յիսուսի մէկ նկարը կար, ձեռքերը զամերով ծակուած: Նկարին տակ, գրակալի մը վրայ «Ան դպաւ ինծի...» երգին նօթերու էջը դրուած էր:

Հագուադէպ էր, որ երեւոյթ մը ինծի այդ քան կենսականօրէն խօսէր իմ կացութեանս: Շնորհալի նախախնամութեամբ, Աստուած գործածեց այդ պատկերը զիս մխիթարելու: Ինծի համար յատակ եղաւ, թէ բուժումը կը հոսէր Յիսուսի վիրաւոր ձեռքերէն: Եւ այդ էր այն, ինչ որ կ'ըսուէր՝ մեր վերքերը կրնան օգնել ուրիշներու վերքերուն բուժման:

Այդ փորձառութենէն սորվեցայ, թէ ի՛նչպէս Աստուծոյ մխիթարութիւնը՝ տառապանքի ընթացքին, կրնայ ցաւի մէջ եղող մարդոց միջեւ կամուրջներ հաստատել: Առաքեալը այս կէտը յատակ կ'ընէ. «Օրհնեալ ըլլայ Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը... ամէն մխիթարութեան Աստուածը, որ կը մխիթարէ մեզ մեր ամբողջ տառապանքին մէջ, որպէսզի մենք ալ կարենանք մխիթարել զանոնք, որոնք որեւէ տառապանքի մէջ են, այն մխիթարութեամբ՝ որով մենք կը մխիթարուինք Աստուծմէ» (Բ. Կոր. 1. 3-4):

Յաւերդ Աստուծոյ տար: Անոր հոգեկան բուժումը կրնայ օգնել որ դուն ալ քու կարգիդ ուրիշներուն մխիթարութեան միջոց դառնաս:

**Քրիստոս մեզի համար տառապեցաւ, մխիթարելու մեր շուրջ գտնուող տառապեալները:**



Կիրակի  
10 Յունուար

## Չքմեղանքի Անմիջական Գիծ

Կարդա՛  
Մատթ. 5. 21-26

Հոն ձգէ՛ զոհասեղա-  
նին առջեւ, նախ գնա՛  
նաշտուէ եղբօրդ  
նետ, եւ այն ատեն  
եկուր, որ  
մատուցանես ընծադ:  
—Մատթ. 5. 24

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՑ  
■ Ծ'ննդոց 22-24  
■ Առակաց 4. 1-17



**Ձ**էյսի ձէյքըպս ստեղծած է ներողութիւն խնդրելու յատուկ ձեւ մը, որ կոչած է «Չքմեղանքի Անմիջական Գիծ»: Այդ չքմեղանքի հաղորդակցութեան հեռաձայնի գիծով, ենթական իր ներողամտութիւնը կը յայտնէ այն անձին, զոր վշտացուցած է, առանց հետը ուղղակի խօսելու: Մարդիկ, որոնք կ'ուզեն իրենց խիղճը հանդարտեցնել ներողութիւն խնդրելով, կը հեռաձայնեն յատուկ թիւի մը եւ հեռաձայնի մեքենային մէջ կ'արձանագրեն իրենց խօսքը, առանց ուղղակի անձին հետ խօսելու: Այդպէս, կարգ մը մարդիկ այդ ձեւը սկսած են գործածել, իրենց վիրաւորական խօսքին, գողութեան կամ անհաւատարմութեան համար ներողութիւն խնդրելու: Հեռաձայնային այդ դրութիւնը ձեւով մը եւ որոշ չափով կը թեթեւցնէ յանցագործին հոգեկան բեռը, կ'ըսէ ձէյքըպս: Չքմեղանքի անմիջական այդ միջոցը կրնայ թերեւս քիչ մը յանցանքի բեռը թեթեւցնել, բայց Յիսուս այդէս չպատուիրեց իր հետեւորդներուն: Յիսուս ըսաւ, որ մենք ըլլանք առաջին քայլը առնողը եւ անձնապէս երթանք մեր վշտացուցած եղբօր քով եւ ներողութիւն խնդրենք (Մատթ. 18): Ան ա'յնքան կարեւոր նկատեց մարդոց գիրար վշտացնելու այս իրավիճակը, որ պատուիրեց նոյնիսկ եկեղեցիի պնակին մէջ մեր դրած ընծան կէս ձգել, երբ մեր միտքը իյնայ, թէ մեր եղբայրը վշտացուցած ենք եւ երթանք հաշտուելու մեր եղբօր հետ (Մատթ. 5. 24): Յիսուս կը պատուիրէ իրարու հետ հաշտուիլ անմիջականօրէն, համաձայնութեամբ, շուտով եւ անձնապէս (Կ. 25):

Նեղուա՞ծ ես մէկու մը հետ: Եղի՛ր նախապարձակ: Գնա՛ հիմա եւ հաշտուէ:

**Բոլոր վեներուն արմատը անձնատէր հոգի մը  
ունենալու մէջ է:**





Երկուշաբթի  
11 Յունուար

**Յրուած Պստուղներ**

Կարդա՛  
Յովհ. 13. 3-15

Ինձի՛ Գմանցեք,  
ինչպէս ես ալ  
Քրիստոսի:  
—Ա. Կորնթ. 11. 1

ԱՍՏՈՒԱԾՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒԱԸ ՄԷՁ  
■ Ծ'ննդոց 25-27  
■ Առակաց 4. 18-27

**Պ**ատմութիւն մը լսած եմ Հաւատացեալ երիտասարդի մը մասին, որ բանակին մէջ կը ծառայէր եւ արձակուրդով, օր մը տուն կը վերադառնար: Ծոգեկառքի կայարանը, երբ արագ կը վազէր շոգեկարգը չփախցնելու, յանկարծ ձեռքի պայուսակը կը գարնուի մայթին վրայ դրուած սեղանի մը, որուն վրայ, պատանի մը խնձորներ կը ծախէր: Խնձորները գետին կը թափին:

Խեղճ պատանին կը սկսի դժուարութեամբ հոս ու հոն գլորուած խնձորները հաւաքել: Զինուորը, ներդրութիւն կը խնդրէ պատանիէն ու ձեռքի պայուսակը մէկ կողմ դնելով, կը սկսի օգնել պատանիին: Ան հաւաքուած խնձորները մէկ առ մէկ կը սրբէ իր դաշկինակով եւ կը շարէ սեղանին վրայ: Պատանին այնքան կը տպաւորուի զինուորին ըրածէն, որ երախտագիտութեամբ կը հարցնէ. «Դուն Յիսուսն ես»: Զինուորը ժպտելով կը պատասխանէ. «Ո՛չ: Բայց կը ջանամ Անոր պէս ըլլալ»:

Երբեմն, երբ կ'աճապարենք մեր պատասխանատուութիւններուն հասնելու, կը մոռնանք մեր շուրջիները: Սակայն, որպէս Հաւատացեալներ, պէտք չէ մոռնանք, թէ մեր Տէրը՝ Յիսուս կ'ուզէ, որ կարեկցութիւն եւ Հոգածութիւն ցոյց տանք մեր շուրջիներուն: Ան ազդեցիկ օրինակ մը ներկայացուց իր աշակերտներուն, որպէս ծառայ անոնց ոտքերը լուալով (Յովհ. 13): Արդեօք մէկը կրնա՞յ ըսել մեզի, «Դուն Յիսուսն ես»: Եւ կրնա՞յ մեր պատասխանը ըլլալ «Ո՛չ, ես Յիսուսը չեմ, բայց կը փորձեմ Անոր պէս ըլլալ»: Յիսուսանման ազնուութիւն մը կրնայ յուզիչ եւ միեւնոյն ատեն տպաւորիչ վկայութիւն մը ըլլալ:

**Ոչինչ կայ աւելի գրաւիչ քան Յիսուսի նմանիլը:**





Երեքշաբթի  
12 Յունուար

**Աստուծոյ  
Արցունքները**

Կարդա՛  
Յովհ. 11. 28-37

Յիսուս լացաւ:  
-Յովհ. 11. 35

ԱՍՏՈՒԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵՆ  
ՏԱՐՈՒԱԸ ՄԵՋ  
■ Մատթ. 7-11  
■ Առակաց 5. 1-14



**Ա**նգլիացի հանրաժանութ աստուածաբան Լէվիս, իր «Կախարդին Եղբորորդին» պատմուածքին մէջ կը յիշէ մարդ մը, որ մտահոգուած էր իր անբուժելի հիւանդութենէ տառապող մօր մասին: Իր յուսահատ վիճակին մէջ, արցունքոտ աչքերով, կը խնդրէ Քրիստոսը ներկայացնող Ասլանէն՝ մեծ առիւծէն. «Կ'աղերսեմ, հաճիս, չե՞ս ուզեր, չե՞ս կրնար բան մը ճարել, որ մայրս բժշկուի»:

Ապա, իր յուսահատութեան մէջ կը նայի Ասլանին երեսին: Խոշոր արցունքի կաթիլներ կը փայլէին առիւծին աչքերուն մէջ: Անոնք այնքան մեծ եւ փայլուն էին բաղդատելով իր արցունքներուն, որ պահ մը կը մտածէ, թէ Առիւծը իսկապէս աւելի ցաւ կը զգար իր մօր հիւանդութեան համար քան ինք: «Որդիս, որդիս», կ'ըսէ Ասլան, «Գիտեմ վիշտդ մեծ է: Միայն դուն եւ ես այս երկրի վրայ գիտենք այդ: Եկո՛ւր, լաւ բարեկամներ ըլլանք իրարու»:

Ասիկա ինձի մտածել տուաւ Յիսուսի արցունքներուն մասին՝ Ղազարոսի գերեզմանին քով (Յովհ. 11. 35): Կը հաւատամ, որ Ան լացաւ Ղազարոսի՝ եւ միեւնոյն ատեն Մարիամի եւ Մարթայի վիշտին համար: Անկէ ետք, ուրիշ անգամ մը Յիսուս լացաւ Երուսաղէմի համար (Ղուկ. 19. 41-44): Ան գիտէ եւ կը բաժնեկցի մեր վիշտն ու ցաւը այսօր եւս: Բայց, ինչպէս Ան խոստացած է, պիտի տեսնենք Ձինք դարձեալ այնտեղ՝ որ կը պատրաստէ մեզի համար (Յովհ. 14. 3): Երկինքի մէջ մեր վիշտը վերջ պիտի գտնէ: «Ինք պիտի սրբէ (մեր) աչքերէն բոլոր արցունքները, ա՛լ մահ պիտի չըլլայ, ո՛չ սուգ, ո՛չ գոչիւն» (Յայտն. 21. 4): Մինչեւ այն ատեն պէտք է գիտնանք, թէ Աստուած կու լայ մեզի համար:

**Եթէ կը կասկածիս, որ Յիսուս կը հոգայ, յիշէ՛  
Անոր արցունքները:**





Չորեքշաբթի  
13 Յունուար

**Սուրբ Գրային  
Երգեր**

Կարդա՛  
Կողոս. 3. 15-17

Քրիստոսի Խօսքը ճոխութեամբ թող բնակի ձեր մէջ... որպէսզի սաղմոսներով, օրհներգներով ու հոգեւոր երգերով, շնորհակալութեամբ երգելով Աստուծոյ՝ ձեր սրտերուն մէջ:  
—Կողոս. 3. 16

ԱՍՏՈՒԱԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 3-5

**Ե**րգահան ձան Փիթըրսըն, լազգիտէր Աստուածաշունչի խօսքերը պատշաճօրէն գործածել իր յօրինած երգերուն մէջ: Երբ պատանի էի, եկեղեցիի երգչախումբով երգեցինք անոր «Յիսուս Կու գայ» երգը: Երգին բառերը առնուած էին Բ. Տիմ. 3. 1 Համարէն, ուր կը կարդանք «Վերջին օրերը դաժան ժամանակներ պիտի գան, որովհետեւ մարդիկ պիտի ըլլան անձնատէր»: Յետոյ ան թուած էր բոլոր այն գէշ նշանները, որոնք պիտի յայտնուէին վերջին օրերուն (Հ. 2-7): Այդ երաժշտութիւնը շատ սիրած ըլլալուս, տակաւին մինչեւ այսօր իսկ կը յիշեմ անոր թուած նշաններուն ցանկը:

Երբեմն, կարգ մը մարդիկ դժուարութիւն ունին Աստուծոյ Խօսքէն Համարներ գոց սորվելու եւ պէտք եղած ատեն զանոնք յիշելու: Մեր ուղեղին մէջ կազմուածք մը կայ, որ կ'օգնէ մեզի կարգ մը երգերու բառերը վերյիշել: Եթէ մենք վերլուծելու ըլլանք կարգ մը մեր սիրած հոգեւոր երգերն ու կրկներգները, պիտի նկատենք, թէ անոնք դուրս բերուած են Աստուածաշունչէն: Այդ ձեւով մենք երաժշտութեան մղումը գործածած կ'ըլլանք որ Աստուծոյ շունչը եղող Խօսքը թափանցէ մեր սիրտերէն ներս (Բ. Տիմ. 3. 16): Երգեր, ինչպէս՝ «Բաց սրտիս աչքերը» (Եսայի 6. 9-10, Եփես. 1. 18), «Բու խօսքդ սրտիս մէջ պահեցի» (Սաղմ. 119. 11, 105) առնուած են Աստուածաշունչէն: Մեր յիշողութեան մէջ թաղնուած այս երգերը, փառաբանութեան երգի կը վերածուին մեր շուրթերուն վրայ:

Հոգ չէ, թէ ի՛նչ տեսակ ձայն ունիս, երբ կ'երգես Սուրբ Գրային Խօսքերով երգ մը, այդ երգը քաղցր կը հնչէ Աստուծոյ ականջներուն:

**Հոգեւոր երգեր խումկ են զԱստուած պաշտող եւ փառաբանող հոգիի մը համար:**





Հինգշաբթի  
14 Յունուար

**Վերագտնել  
Կարեկցութիւնը**

Կարդա՛  
Յայտ. 2. 1-7

Ուրեմն յիշէ՛ թէ ուրկէ  
ինկար, ապաշխարիէ՛,  
եւ ըրէ՛ առաջին  
գործերդ:  
—Յայտ. 2. 5

ԱՍՏՈՒԱՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ  
■ Ծննդոց 28-30  
■ Առակաց 5. 15-23



միշտ կը գգացնէ իր ծարաւը, վերագտնելու այն ջերմութիւնը, որ ունէինք Ձինք ճանչցած առաջին օրերուն:

Յարուցեալ Տէրը գովաբանելէ ետք Եփեսոսի եկեղեցիի հաւատացեալները իրենց հաւատարիմ ծառայութեան համար, կ'ըսէ. «Սակայն սա ունիմ քեզի դէմ, որ թողուցիր առաջին սէրդ: Ուրեմն յիշէ՛, թէ ուրկէ՛ ինկար, ապաշխարէ՛ եւ ըրէ՛ առաջին գործերդ» (Յայտ. 2. 4-5):

Օգվըլտ Չէմպըրս ըսած է. «Հին գրողներ ընդհանրապէս խաչը կը ներկայացնէին որպէս մեր Տէրոջ չարչարանքին խորհրդանիշը: Խաչը այն մեծ բացումն է, որուն մէջէն կը հոսի քրիստոնէական պաշտամունքին ամբողջ արիւնը»:

Եթէ մեր հոգեւոր եռանդը պաղած է, լաւ է, որ անգամ մը եւս յիշենք այն մեծ գոհաբերութիւնը, որ Քրիստոս իր խաչին մահով յանձն առաւ, մեր մեղքերու թողութեան համար (Եբր. 12. 3), եւ հրաժարինք աւանդութիւն դարձած պաշտամունքներէ եւ թոյլ տանք, որ Քրիստոսի Խաչին հրաշքը վերագարթնէ մեր սէրը Անոր հանդէպ:

**Կարեկցութիւն մը Յիսուսի հանդէպ, կրնայ վերածուիլ կարեկցութեամ մը՝ ուրիշներում պատմելու Յիսուսի մասին:**



**Ա**ռաջին կարգի պէյսալով խաղացող մը, յանկարծ կը յայտարարէ իր հանգստեան կոչուիլը, ըսելով. «Պէյսալով խաղալու այդ կիրքը յանկարծ չքացաւ: Ֆիզիքապէս թէեւ տակաւին լաւ եմ եւ կրնամ խաղալ, բայց բան մը, որուն ամբողջ կեանքիս մէջ այնքան խոր սիրով կապուած էի եւ գլխաւոր գործս նկատած, հիմա ա՛լ սրտիս չի խօսիր»:

Ի՞նչ կրնանք ընել, երբ ատեն մը գործ մը մեզ բարոյական կորով կը հայթայթէր, յանկարծ ծանր բեռան մը կը վերածուի: Ասպարէզ մը կրնայ փոխուիլ, բայց մեր սրտի խորունկ հարցերը, մանաւանդ մեր յարաբերութիւնը Քրիստոսի հետ,



Ուրբաթ  
15 Յունուար

### Կապակցիլ Աստուծոյ Հետ

Կարդա՛  
Սաղմ. 63. 1-8

Քանի որ քու կարեկցութեանդ կեանքէն լա է, իմ շրթունքներս քեզ պիտի օրհնաբանեն:  
—Սաղմ. 63. 3

ԱՍՏՈՒԾԱԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Ծննդոց 31-33  
■ Առակաց 6. 1-11



**Ի**ր կարեկցութեան Առարկաները գիրքին մէջ, Հեղինակը կ'ուզէ բաժնեկցիլ իր ունեցած փորձառութիւնը Աստուծոյ կարեկցող սիրոյն, որ անձնապէս զայն վայելելու փորձառութիւնը ունեցած է: Երբ պատանի տղայ մըն էր ան, անակնկալօրէն կորսնցուցած էր մայրը ինքնաշարժի արկածով մը: Այդ աղէտին պատճառաւ, ան գոցած էր իր վիրաւոր սիրտը ուրիշներուն առջեւ, նոյնիսկ Աստուծոյ առջեւ: Տարիներ ետք, պատահած էր, որ ան Քրիստոսը ընդունէր որպէս իր Փրկիչը եւ սկսած՝ սորվիլ քրիստոնէութեան կարգ մը ճշմարտութիւնները: Սակայն, այդ օրերուն, տակաւին իր յարաբերութիւնը Տէրոջ Հետ «կողք կողքի էր, քան դէմ առ դէմ: Կարեւոր՝ բայց ոչ մտերմական»:

Դուն ալ երբեմն այդպէս կը զգամ: Աղօթքի միջոցով քիչ մը կը խօսիս Աստուծոյ Հետ, կը կարդաս Անոր Խօսքը Աստուածաշունչին մէջ, սակայն չես զգար եռանդուն եւ անմիջական կապակցութիւն մը Անոր Հետ, ինչպէս Սաղմոսերգու Դաւիթ կ'ըսէ 63-րդ սաղմոսին մէջ: Վերը յիշուած գիրքին Հեղինակը կը թելադրէ երկու կարեւոր սկզբունքներ, Աստուծոյ Հետ մտերմութիւն ստեղծելու համար:

Ապրէ Անկեղծօրէն: Ցաւ սիրտդ բաց Աստուծոյ եւ ընդունէ՛ սխալներդ: «Մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ Ան պիտի մօտենայ ձեզի» (Յակոբ 4, 8, տես նաեւ Ա. Յովհ. 1. 9):

Հաւասա՛ եւ Խորհրդածէ՛ Աստուծոյ Խօսքին ու կարեկցութեան վրայ: «Քանի որ քու կարեկցութիւնդ կեանքէն լա է» (Սաղմ. 63. 3, տես նաեւ Սաղմ. 139 եւ Եփես. 1. 3-6):

Յարաբերութեան մէջ մտնել կը կարօտի ժամանակի եւ ջանքի - նոյնիսկ երբ հարցը Աստուծոյ Հետ է:

Աստուած կը հետեւի մեզի մեր անհանդարտութեան մէջ, կ'ընդունի մեզ մեր մեղքերով եւ կը կարեկցի մեզի:





Շաբաթ  
16 Յունուար

**Ի՞նչ կ'ընես այս երկրի վրայ: Այս  
Երկրի Վրայ**

Կարդա՛  
Ա. Կոր. 10. 31 - 11. 1

Ուրեմն, թե՛ ուտէք,  
թե՛ խմէք, եւ թե՛ ինչ  
որ ընէք, ամէնը ըրէք  
Աստուծոյ փառքին  
համար:  
-Ա. Կոր. 10. 31

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Ծանոց 34-36  
■ Առակաց 6. 12-19



**Ի՞նչ կ'ընես այս երկրի վրայ: Այս  
խօսքը թերեւս լսած ես, երբ  
մայրդ օր մը քեզի ըսած է, որ սեն-  
եակդ մաքրես եւ սակայն, տեսած է,  
որ կը խաղաս խաղալիքներուդ հետ:  
Կամ լսած ես այդ խօսքերը  
ուսուցիչէդ քննութեան մը ատեն,  
երբ կը փորձես խարդախել:**

**Սակայն եթէ Աստուած ըլլար  
այս հարցումը հարցնողը, ի՞նչ  
պիտի ըլլար պատասխանը: Պօղոս  
Առաքեալ կ'ըսէ, թէ որպէս Յիսուսի  
հետեւորդներ աշխարհ եկած ենք  
Աստուծոյ փառք եւ պատիւ բերելու  
ամէն բանի մէջ, որ կ'ընենք: Ուրեմն,  
ինչպէ՞ս կարելի է այդ մէկը ընել:**

**Աստուծոյ փառքը յայտնութիւնն  
է այն բոլոր բաներուն, որոնք անդերազանցելի են, ապ-  
շեցուցիչ եւ կատարեալ: Այդ փառքը իր սքանչելի սէրն է,  
իր անսահման կարեկցութիւնը եւ իր շնորհքի խորութիւնը:  
Անոր փառքը յայտնուած է իր ճշմարտութեան, արդա-  
րութեան, իմաստութեան եւ գօրութեան մէջ: Փառաբանել  
Ձինք կը նշանակէ, թէ մենք առանձնաշնորհումը ունինք  
Ձինք ներկայացնելու աշխարհի մը, որ ամբողջութեամբ  
անտեղեակ է իր ո՛վ ըլլալուն: Անոր կարեկցութիւնը՝ անար-  
ժան եղողներուն, գութը՝ կարօտեալին, ներողամտութիւնը՝  
նախատուածին եւ իր կամքին համեմատ՝ իմաստութեամբ  
ապրիլը - ասոնք բոլորն ալ կը յայտնաբերեն Աստուծոյ  
նկարագրի յատկանիշերն ու փառքը:**

**Շատ մը սխալ հասկացողութիւններ կան Աստուծոյ  
ինքնութեան մասին: Մեր պարտաւորութիւնն է ցոյց տալ  
մեր շուրջիններուն, թէ ո՛վ է Ան: Եւ երբ մարդիկ սիրեն  
այն՝ ի՞նչ որ կը տեսնեն մեր մէջ, ցոյց տուած կ'ըլլանք,  
թէ ո՛վ սորվեցուց մեզի այդպիսի կեանք մը ապրիլ:**

**Թող մեր կեանքը ըլլայ Աստուծոյ փառքը  
«Ցոյց տալ եւ պատմել»:**







Կիրակի  
17 Յունուար

### Ծրագրուած՝ Աստուծոյ Կողմէ

Կարդա՛  
Հռովմ. 12. 3-8

Ինչպէս մէկ մարմինի  
մէջ ունինք շատ  
անդամներ, եւ այդ  
բոլոր անդամները  
միեւնոյն պաշտօնը  
չունին:  
—Հռովմ. 12. 4

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒԼ ՄԷՋ  
■ Ծննդոց 37-39  
■ Առակաց 6. 20-35

**Վ**այրի եզը ունի այնպիսի մարմնական կառուցուածք, որ միշտ հակամէտ է դէպի վար նայելու: Անոր վրիզին ձեւն է, որ կը դժուարացնէ դէպի վեր նայիլ: Ճիշդ ատոր հակառակը, ընձուղտն ալ ունի մարմնական եւ վրիզի այնպիսի կառուցուածք, որ շատ դիւրին է անոր համար վեր նայիլ, իսկ միւս կողմէ շատ դժուար դէպի վար նայիլ: Երկուքն ալ ստեղծուած են նոյն Աստուծոյ կողմէ, սակայն մարմինի յատկանշական տարբեր մասերով եւ նպատակներով: Ընձուղտը ծառերու բարձր ճիւղերուն վրայ գտնուող տերեւները կ'ուտէ: Իսկ վայրի եզը գետնին վրայ փռուած խոտն է որ կ'արածի:



**Աստուած երկուքին ալ կերակուր կու տայ, եւ իւրաքանչիւրը իր տեսակին մէջ, տարբեր շնորհներով օժտուած է:**

Աստուած իւրաքանչիւրս ստեղծած է որպէս անզուգական արարած, յատուկ նպատակի մը համար: Մէկու մը բնական միտումը կրնայ ըլլալ դէպի վեր նայիլ եւ տեսնել «մեծ նկարը», մինչ ուրիշ մը վար կը նայի եւ կը կեդրոնանայ այնտեղ եղող մանրամասնութեանց: Երկուքն ալ կարեւոր են: Մէկը միւսէն աւելի լաւ չէ: Աստուած մեզի անձնական տաղանդներ տուած է, եւ հոգեւոր շնորհներ, որպէսզի միասնաբար աշխատինք որպէս մէկ մարմին:

Մարդ արարածը, գլուխ գործոցն է արարչութեան: Մենք ամենէն աւելի կը փայլինք, ո՛չ թէ երբ տեսնենք մեր նմանութեան արտացոլացումը ուրիշներուն վրայ, այլ երբ կատարենք իւրապատուկ գործ մը, որ Աստուած ծրագրած է մեզի համար: «Ուստի ունենալով շնորհներ, որոնք կը տարբերին այն շնորհքին համեմատ, որ մեզի տրուած է՝ գործածենք զանոնք» (Հռովմ. 12. 6):

**Յիսուսի մարմինին մէջ չկան անկարելոր անդամներ:**





Երկուշաբթի  
18 Յունուար

## Հիւրասիրութեան Վարիչը

Կարդա՛  
Հոովմ. 12. 9-21

Սուրբերու  
կարիքներուն  
նաղորդակից եղէք,  
նիւրասիրութեան  
նետամուտ եղէք:  
—Հոովմ. 12. 13

ԱՍՏՈՒԱՍԻՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ  
■ Ծննդոց 40-42  
■ Առակաց 7. 1-5



**Վ**իքթորիայի ընտանիքը գինք կը կոչեն տան «Հիւրասիրութեան Վարիչը»: Ան կ'ապրի իր աղջկան եւ փեսային հետ՝ Սինկափուր: Անոր փեսան «Զհաց Մեր Հանապազորդ» գրքոյկի միսիոնարութեան միջազգային տնօրէնն է, եւ յաճախ այցելուներ կ'ունենայ: Վիքթորիա որպէս կամաւոր կ'աշխատի միսիոնարական գրասենեակը եւ իր գլխաւոր գործն է հոգ տանիլ եւ հիւրասիրել այցելու հիւրերը: Ան այցելուներուն լաւ զգալ կու տայ, միշտ ժպտելով եւ զանոնք սիրով դիմաւորելով:

«Հիւրասիրութիւն» բառը կը նշանակէ «հիւրը՝ օտարականը սիրելու տրամադրութիւն»: Եւ ճիշդ այս է, ինչ որ Պօղոս Առաքեալ կոչ կ'ընէ մեզի ընելու Հոովմ. 12-րդ գլխուն մէջ: Ան հաւատացեալներուս կոչ կ'ընէ, որ գործնականապէս ցոյց տանք մեր յարաբերութիւնը Աստուծոյ եւ մեր նմաններուն հանդէպ եւ կ'ըսէ. «Սուրբերու կարիքներուն հաղորդակից եղէ՛ք, հիւրասիրութեան հետամուտ եղէ՛ք» (հ. 13): Թերեւս նման կոչ մը կ'ընայ մեր հանգիստը քիչ մը խանգարել, երբ սէր, հոգածութիւն եւ ժամանակ տրամադրելու կանչուինք անոնց, որոնց կը հանդիպինք մեր ճամբուն վրայ: Եբր. 13. 2-ը այս կոչին վրայ կ'աւելցնէ ուրիշ գաղափար մըն ալ, երբ կ'ըսէ. «Մի՛ մոռնա՛ք հիւրասիրութիւնը, որովհետեւ ոմանք անով հրեշտակներ հիւրընկալեցին թաքուն կերպով»:

Յաճախ անտեսուած եւ, երբեմն ալ, թերազնահատուած հաւատացեալի պարտականութիւն մը նկատուած է հիւրասիրութիւնը: «Հիւրասիրութեան վարիչ» ըլլալ մեծ շնորհք մըն է, եւ իր հետ կ'ընայ բերել շատ մը կարելիութիւններ եւ անակնկալ օրհնութիւններ:

Հոգիդ լայն բանալու համար, ֆրիստօսի սիրով մօտեցի՛ր մարդոց:





Երեքշաբթի  
19 Յունուար

## Հնագանդելու Կոչ

Կարդա՛  
Ծննդոց 12. 1-9

Հաւատքով Աբրահամ  
ճնազանդեցաւ, երբ  
կանչուեցաւ երթալու  
տեղ մը:  
—Եբրայեցիս 11. 8

Աստուծո՞ւնը Մէջ  
Տարուա՞ն Մէջ  
■ Մատթէոս 12-17  
■ Առակաց 7. 6-27

**Մ**եծ Հայրս մեծցած է Հիւսիսային Ամերիկայի սահմանային հողամասին վրայ եւ ազարակի մը մէջ հողացած է իր ընտանիքը: Ժամանակ անցընելու եւ չձանձրանալու համար, ան յաճախ երգեր կ'երգէր: Անոր ամենէն շատ սիրած երգերէն մէկը գետի մը նուիրուած երգ մըն էր: Հեղինակը ծնած եւ ապրած էր այդ գետին մօտ, եւ ապա ստիպուած էր հեռանալ իր ծննդավայրի այդ գետէն: Երգին մէջ, հեղինակը կը յիշէ գետին ջուրերը եւ կ'ուզէ դարձեալ լսել իր ականջին անոյշ հնչող գետին կարկաչը:

Ծննդավայրի գետի մը կարօտն ու սէրն էր, որ հեղինակը կ'արտայայտէր իր այդ երգով: Չեմ գիտեր, թէ ինչո՞ւ այդ երգը շատ կը խօսէր նաեւ մեծ հօրս սրտին եւ զայն յաճախ կ'երգէր ապրումով եւ յուզումով:

Այս ճշմարտութիւնը ինծի կ'օգնէ, որ հասկնամ նաեւ Աբրահամի պարագան: Աստուած կանչեց Աբրահամը, որ իր ծննդավայր՝ Ուր քաղաքը ձգէ եւ անծանօթ վայր մը տեղափոխուի (Ծննդ. 12. 1): Հակառակ այդ հեթանոս քաղաքին կռապաշտութեան, քանի Աբրահամ հոն ծնած ու մեծցած էր, հոգեկան կապ մը ստեղծուած էր իր եւ այդ քաղաքին միջեւ, ուր ծանօթներ եւ բարեկամներ ունէր: Սակայն հակառակ այդ բոլորին, Աբրահամ հետեւեցաւ Աստուծոյ առաջնորդութեան եւ «Հաւատքով... հնազանդեցաւ, երբ կանչուեցաւ երթալու տեղ մը» (Եբր. 11. 8):

Երբ փորձառութիւնը ունենանք Աստուծոյ կոչին հնազանդելով ուրիշ տեղ մը երթալու, այդ կը նշանակէ ետեւ ձգել մեր սիրելիները եւ սիրած բաները: Բայց երբ հնազանդինք Աստուծոյ, Ան աւելի լաւը պիտի հայթայթէ մեզի:

**Պետք չունիս ճամբան գիտնալու, երբ հետեւիս Մէկու մը, որ ճամբան ինձն է:**





Չորեքշաբթի  
20 Յունուար

**Մեծ ապէս  
Արժեւորում**

Կարդա՛  
Ռ. Թազ. 9

Մեմփիբոսթե...  
Թագաւորին որդիներէն  
մէկուն պէս իմ  
սեղանս հաց պիտի  
ուտէ:  
—Ռ. Թազ. 9. 11

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԵՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԷՑ  
■ Սաղմոս 6-8

**Ա**նգլիոյ գործարաններէն մէկուն մէջ աշխատող գործաւոր մը եւ անոր կիներ մեծապէս կ'ուրախանան, երբ իրենց ամուսնութենէն երկար տարիներ ետք, յանկարծ կը գիտնան, թէ կիներ յղի էր եւ պիտի ունենար իրենց առաջին զաւակը: Երբ մարդը իր գործակիցներուն կ'ըսէ, թէ Աստուած իր աղօթքներուն պատասխանած էր, անոնք վրան կը խնդան Աստուծոյ զաւակ խնդրած ըլլալուն համար:

Երբ մանուկը կը ծնի, ան կ'ախտահանաչուի մոնկոլական հիւանդութեամբ: Մանուկին ծնելէն ետք, երբ հայրը առաջին անգամ գործի կ'երթայ, իրեն հարց կ'ըլլայ, թէ ի՞նչպէս պիտի դիմագրաւէ զինք ծաղրողները: Կը խնդրէ Աստուծոյ. «Ո՛վ Աստուած, ինծի իմաստութիւն տուր»: Իր վախցածին պէս, ոմանք կը ծաղրեն զինք ըսելով. «Աստուած քեզի հիւանդ մանուկ մը տուաւ»:

Ան, պահ մը կը կենայ եւ լուութեամբ կը խնդրէ, որ Աստուած օգնէ իրեն, եւ ապա կը պատասխանէ. «Ուրախ եմ, որ Աստուած այս մանուկը ինծի տուաւ, եւ ո՛չ թէ ձեզի»:

Ինչպէս որ այդ մարդը ընդունեց իր անկար մանուկը որպէս Աստուծոյ պարգեւը, Դաւիթ ալ ուզած էր ազնիւ վերաբերմունք ցուցաբերել Յովնաթանի զաւակին, որուն «ոտքերը կաղ» էին (Ռ. Թազ. 9. 3): Շատեր թերեւս աննկատ ձգած էին Մեմփիբոսթէն, անոր կաղ ըլլալուն, կամ քանի որ անոր՝ Սաւուղի ընտանիքէն ըլլալուն համար: Սակայն Դաւիթի վերաբերմունքը ցոյց տուաւ, որ ան իրեն համար մեծ արժէք ունէր:

Երախտագիտութեամբ յիշենք, որ Աստուած արժէք կու տայ մեզմէ իւրաքանչիւրին: Ան իր Միածին Որդին զրկեց մեզի համար մեռնելու:

**Ամէն մարդ արժէքաւոր է Աստուծոյ ինչ:**





Հինգշաբթի  
21 Յունուար

**Մեր Լաւագոյն Պաշտպանութիւնը**

Կարդա՛  
Սաղմ. 3. 1-8

Ամբոց եւ վէմ եղիր  
իցծի, բերդ ու տուճ՝  
գիս ապրեցնելու  
նամար:  
—Սաղմոս 31. 2

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԵ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՁ  
■ Ծննդոց 43-45  
■ Առակաց 8. 1-11

**Յ**ունուար 1956-ին Մանթկոմբրիի իրաւունքներու պաշտպան եւ առաջնորդ՝ Մարթին Լուտեր Քինկ չկրցաւ քնանալ: Հեռաձայնի կանչ մը գինք սարսափեցուցած էր: Ան աղօթեց. «Ո՛վ Տէր, այն բանին համար որ կը պայքարիմ, կը հաւատամ շիտակ է: Սակայն, Տէր, պէտք է խոստովանիմ, թէ տկար կը զգամ հիմա եւ կը վարանիմ: Սկսած եմ կորսնցնել քաջութիւնս: Կը վախնամ...: Ժողովուրդը ինծի կը նայի առաջնորդութեան համար: Եթէ անոնց առջեւ անզօր եւ վախկոտ կենամ, անոնք ալ պիտի վարանին: Ես իմ զօրութեանս աւարտին հասած եմ...»

չեմ կրնար դիմադրաւել եղածը առանձինս...»: Ետքը, Դոկտ. Քինկ գրած է. «Այդ վայրկեանին, ես փորձառութիւնը ունեցայ Երկնաւորին ներկայութեան ինծի հետ ըլլալուն: Բան մը, որ չէի զգացած ատկէ առաջ: Ինծի կը թուէր, թէ կը լսէի ապահովութիւն ներչնչող ներքին մեղմ ձայն մը, որ կ'ըսէր. «Կանգնէ՛ արդարութեան համար: Կ'անգնէ՛ ճշմարտութեան համար, եւ Աստուած քու կողմդ պիտի ըլլայ միշտ: Գրեթէ մէկէն ամբողջ վախերս անհետացան, անորոշութիւնս չքացաւ: Պատրաստ էի դիմադրաւելու որեւէ դժուարութիւն»: Դոկտ. Քինկ կ'ուզէր տեսնել ամէն գոյնի պատկանող մարդիկ իրենց հաւասար իրաւունքներուն մէջ՝ ձերբազատուած ազգամոլութեան վնասակար նախապաշարումներէն:

Եթէ հակառակութիւն մը դիմադրաւենք մինչ կը փորձենք ճշմարտութիւն մը պաշտպանել, ինդրենք Աստուծոյ անմիջական օգնութիւնը: Միայն Ա՛ն է մեր «ամբոցն ու վէմը, մեր պաշտպանութեան բերդը» (Սաղմ. 31. 2):

**Նրբ վստահիմք Աստուծոյ զօրութեան, խաղաղութեան եւ զօրութեան փորձառութիւնը կ'ունենանք:**





Ուրբաթ  
22 Յունուար

### Էլիանայի Աշխարհը

Կարդա՛  
Սաղմոս 127

Առա՛ որդիները Տէրոջ  
ժառանգութիւնն են,  
որովայնի պտուղը  
անոր վարձատ-  
րութիւնն է:  
—Սաղմոս 127. 3

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Ծ'նդոց 46-48  
■ Առակաց 8. 12-31



**Ա**յն օրը, երբ Միացեալ Նահանգ-  
ները կորսնցուց իր ամենէն  
աւելի յարգուած նախագահներէն  
մէկը՝ տիկինա եւ ես ողջունեցինք  
մեր առաջին թոռնուհին: Ճէրըլտ  
Փօրտ մահացաւ ճիշդ այն օրը, երբ  
մեր աղջիկը եւ իր ամուսինը բախտա-  
ւորուեցան աղջիկ գաւակով մը եւ  
գայն կոչեցին էլիանա: Ան եկաւ այս  
աշխարհ Հիւանդանոցի մը մէջ, որ  
միայն մէկ մղոն հեռու կը գտնուի  
նախագահ Փօրտի թաղման վայրէն:

Կը մտածեմ, եթէ մեր թոռնու-  
հին ապրի եւ հասնի այն տարիքին,  
որ նախագահ Փօրտ մահացաւ, ան  
ապրած պիտի ըլլայ մինչեւ 22-րդ  
դար: Հարց է, թէ ի՞նչ յիշատակելի  
հետք պիտի թողու այս պզտիկ աղջիկը այս աշխարհին  
մէջ, եւ ի՞նչ տեսակ ընկերութեան մը մէջ ապրելու  
փորձառութիւնը պիտի ունենան ինք եւ իր տարեկիցները:

Իւրաքանչիւր մանուկ, որ կը ծնի այս աշխարհի մէջ,  
կարելիութիւնը ունի աստուածաշունչութեան եւ մեծու-  
թեան: Այն յատկանիշերը, որոնց պէտք ունին այսօրուան  
մանուկները, ապագայի ընկերութիւնը առաջնորդելու  
համար, պատահաբար չէ որ մէջտեղ կու գան, այլ միայն  
կը ստացուին աստուածավախ, նախանձախնդիր եւ գիտա-  
կից ծնողներու ջանքերուն շնորհիւ: Աստուծոյ Խօսքը կոչ  
կ'ընէ մեզի, որ մեր մանուկները Քրիստոսի տանինք (Մարկ.  
10. 14-16), դաստիարակենք զանոնք Աստուծոյ ճամբուն  
մէջ (Ք. Օր. 6. 4-9), կրթենք զանոնք աստուածաշունչութեամբ  
(Առակ. 19. 18) եւ սիրենք զանոնք առանց պայմանի (Ղուկ.  
15. 11-32): Եթէ էլիանայի սերունդի ծնողները այսպէս  
կրթեն իրենց գաւակները, անոնք ալ իրենց կարգին պիտի  
ստեղծեն բարեփոխուած սերունդ մը եւ աշխարհ մը:

**Շիտակ նամբու մէջ առաջնորդելու համար մեր  
գաւակները, նախ մեմֆ երթալու եմք այդ նամբն:**





Շաբաթ  
23 Յունուար

**Ապրող  
Թագաւորութիւն**

Կարդա՛  
Կողոս. 1. 3-14

Ազատեց մեզ խաւարի  
իշխանութենէն ու  
փոխադրեց իր սիրելի  
Որդիին  
թագաւորութեան:  
—Կողոս. 1. 13

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒԸՆ ՄԷՆ  
■ Ծննդոց 49-50  
■ Առակաց 8. 32-36



**Ո**ւնիմ շատ մը բարեկամներ,  
որոնք կ'աշխատին քիչ մը գէշ  
չըջաններու մէջ: Անոնցմէ մէկը  
ընտանեօք փոխադրուած էր նաեւ  
քաղաքի այդ մասերուն մէջ: Օր մը,  
երբ ան շէնքին նրբանցքէն դէպի  
իր յարկաբաժինը կ'երթար, կը  
նկատէ երկու մարդիկ թմրեցուցիչ  
կը գործածեն: Որպէսզի իր պատանի  
զաւակները չտեսնէին այդ վնասա-  
կար բաները եւ գէշ օրինակ չառնէին,  
կը մօտենայ թմրեցուցիչ գործածող-  
ներուն եւ կ'ըսէ, որ այդ վնասակար  
բանը չընեն: Երիտասարդներէն մէկը  
ջղայնացած բռունձքի հարուած մը  
կու տայ բարեկամիս քիթին եւ  
բերնին: Արիւնլուայ ան կը  
պատասխանէ. «Երբ Յիսուս իր արիւնը թափեց ինծի համար,  
ես ալ կրնամ իմ արիւնս թափել ձեզի համար»:

Ցնցուած բարեկամիս արտայայտութենէն, թմրեցուցիչ  
գործածողները կը փախչին: Մի քանի օրեր ետք, անոնցմէ  
մէկը կը վերադառնայ եւ կը բախէ բարեկամիս դուռը  
եւ կ'ըսէ. «Ես չկրցայ մոռնալ ըսած խօսքերդ: Եթէ քու  
Աստուածդ այդքան ճշմարտութիւն է քեզի համար, ես ալ  
կ'ուզեմ ճանչնալ Ձայն»: Այդ օրէն ետք, այդ երիտասարդը  
«Աստուած ազատեց խաւարի իշխանութենէն» եւ փոխադրեց  
«Իր սիրելի Որդիին թագաւորութեան» (Կող. 1. 13):

Մեզմէ բոլոր անոնք, որոնք փրկուած են «խաւարի  
իշխանութենէն», կրնան պզտիկ կտոր մը երկինքի լոյսէն  
բերել երկիր, ուր կարելի կ'ըլլայ մեզի ցոյց տալ Աստուծոյ  
զօրութիւնը եւ իւրապատուկ մօտեցումը կեանքին: Նոյնիսկ  
մեր տկարութեան պահերուն, յաճախ առիթը կ'ունենանք  
ցոյց տալ Աստուծոյ ներողամտութեան հրաշալի զօ-  
րութիւնը, երբ ցոյց տանք Անոր սէրը մեր թշնամիներուն:

**Մթութեամ մէջ եղող աշխարհ մը, պէտք ունի  
Աւետարանի լոյսին:**





Կիրակի  
24 Յունուար

**Քացարձակ  
Կարիքներ**

Կարդա՛  
Յովհ. 4. 7-15

Եւ իմ Աստուածս  
պիտի լեցնէ ձեր բոլոր  
կարիքները Իր  
ճոխութեանը  
ճամբմատ՝ փառքով  
Քրիստոս Յիսուսի  
միջոցաւ:  
—Փիլիպ. 4. 19

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՆ  
■ Ելից 1-3  
■ Առակաց 9. 1-9

**Մ**եր առաջին շունչէն մինչեւ վերջինը, կարգ մը հիմնական կարիքներ ունինք: Օրինակ, առանց թթուածինի մէկ վայրկեանէն կրնանք մեռնիլ: Պէտք ունինք ամէն օր կերակուրի եւ ջուրի: Մեր մարմինը երբ յոգնի, պէտք ունի հանգիստի: Խիստ օդի պարագային, պէտք ունինք ապաստարանի: Արդ, թէեւ կարիքներ ունինք, բայց մեր հիմնական կարիքները այնքան ալ շատ չեն:

Սակայն հարցը երբ մեր պահանջներուն կը վերաբերի, անոնք անհամար կը թուին: Ծանուցումներու ամբողջ ճարտարարուեստը մեր անհամար պահանջներուն գոհացում տալու համար են:

Ի՞նչ է մեր կեցուածքը մեր հոգեւոր կարիքներուն հանդէպ, որոնք յաճախ կ'անտեսենք: Ի՞նչ է մեր կեցուածքը «Կեանքի Հացին» եւ Աստուծոյ ճշմարտութեան կենդանի ջուրին հանդէպ: Ի՞նչ կ'ընենք մեր հոգեւոր հաղորդակցութեան կարիքին համար, որ գորութիւն, յոյս, խաղաղութիւն եւ մխիթարութիւն կու տայ մեզի: Շատ մը մարդոց անհանգստութեանց պատճառը հետեւանքն է հոգեւոր սնունդի անբաւարար ստանալուն: Յիսուս ըսաւ Սամարացի կնոջ Իր տալիք ջուրին մասին, որ անոր ներսիդին պիտի ըլլայ «ջուրի աղբիւր մը, որ յաւիտենական կեանքի համար կը բխի» (Յովհ. 4. 14): Պետրոս Առաքեալ զայն կը կոչէ «Յաւիտենական Կեանքի Խօսքեր» (Յովհ. 6. 68):

Կ'անտեսենք Յիսուսի խօսքը՝ «Մարդ չի կրնար միայն հացով ապրիլ» (Ղուկ. 4. 4): Մեր հոգիները կը սնուցանենք մինչ մեր պահանջներուն ետեւէ ենք: Յիսուս ըսաւ. «Առաջ խնդրեցէք Աստուծոյ Թագաւորութիւնը եւ Անոր արդարութիւնը ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին (Մատթ. 6. 33):

**Ինչպէս մեր մարմինը ամէն օր կերակուրի պէտք ունի, նոյնպէս ալ մեր հոգին:**







Երկուշաբթի  
25 Յունուար

**ԱՄԵՆԵՆ Վհատե-  
ցուցիչ Օրը**

Կարդա՛  
Ելից 6. 1-9

Քաջալերուեցէ՛ք, ես  
եմ, մի՛ վախճաք:  
—Մատթ. 14. 27

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ԱՄԵՆ  
■ Ելից 4-6  
■ Առակաց 9. 10-18



**Ը**ատ կարգ մը գիտնականներու, տարուան ամենէն վհատեցուցիչ օրը Յունուարի երրորդ շաբթուան մէջ է: Զմուռն օրերը մութ եւ պաղ են: Տօնական եղանակի խանդավառութիւնը նուազած է, Միունդի շրջանին եղած պարտքերը վճարելու թուականը մօտեցած է եւ Նոր տարուան սեմին առնուած որոշումներուն գրեթէ բոլորը անտեսուած են: Տօնակատարութիւնները, նուէրներու փոխանակումները եւ բարի մտադրութիւնները, որոնք մեզ կ'ընդառնեն, հիմա մեր վրայ կը ճնշեն եւ մեզ յուսահարութեան կը տանին:

Դարեր առաջ, Իսրայէլի ժողովուրդը մեծ յոյսեր ունէր, թէ Մովսէս զիրենք պիտի ազատէր գերութենէն: Սակայն անոնց յոյսերը խափանած էին, երբ Մովսէսի բարի նպատակը զիրենք հասցուցած էր շատ գէշ պայմաններու: Փոխանակ ազատութիւն գտնելու, անոնք աւելի ճնշումներու տակ ինկած էին եւ զիրենք գերեվարող մարդիկ իրենց տրուած նիւթերէն աւելի աղիւս արտադրել կը պահանջէին:

Մովսէս աղերսեց Աստուծոյ ըսելով. «Քու անունովդ Փարաւոնին խօսելու համար գալէս ի վեր, ան այս ժողովուրդը չարչարեց, իսկ Դուն բնաւ չփրկեցիր քու ժողովուրդդ» (Ելից 5. 23): Մովսէս եւ ժողովուրդը սորվելու էին, թէ Աստուծոյ փրկութեան ծրագիրները չեն յայտնուիր մինչեւ յոյսը ամբողջութեամբ չմարի:

Սիրելի ընթերցող բարեկամ, եթէ կեանքիդ պայմանները վատն դէպի վատագոյնին կ'ընթանան եւ քեզի վհատութիւն եւ յուսալքութիւն կը պատճառեն, մի՛ մոռնար, թէ Աստուած միշտ կը լսէ պաղատանքներդ եւ կը պատասխանէ անոնց – ոչ քու ուզած ատենդ, այլ իր ծրագրած ժամուն:

**Երբ Դուն գճեզ անոյս կը գգաս,  
ճայէ՛ Յիսուսի:**





Երեքշաբթի  
26 Յունուար

### Յիսուսի Դժուար Բառերը

Կարդա՛  
Յովհ. 6. 44-58

Այս պատճառով իր աշակերտներէն շատեր ճեղատու են և ա՛լ չէին շրջեր Իրեն ճեղատու:  
—Յովհ. 6. 66

ԱՍՏՈՒԱԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՆ  
■ Մատթէոս 18-22  
■ Առակաց 10. 1-11

**Վ**երջերս խաղալիք շինող ընկերութիւն մը գովազդը կ'ընէր խաղալիքի մը, ըսելով: «Կը լուացուի կը գրկուի եւ կը խօսի»: Յիսուս կողոսած այդ խաղալիքը «Համարներ կ'արտասանէ Աստուածաշունչէն բոլոր տարիքի մանուկներու եւ կը ներկայացնէ Աստուծոյ Խօսքին իմաստութիւնը»: Խաղալիքը երբ խօսի, կ'ըսէ: «Ես շատ հետաքրքրական ծրագիր մը ունիմ քու կեանքիդ համար եւ քու կեանքդ ինծի համար կարեւոր է: Ո՞վ պիտի չուզէ այսպիսի Յիսուսի մը հետեւիլ»:

Յիսուս կը ներկայացնէ շատ սքանչելի ծրագիր մը մեր կեանքին համար: Սակայն ան չի ծառայեր մեզի որպէս տիեզերական ոգի մը կամ անուշիկ պուպրիկ մը՝ մեր բոլոր քմայքներուն գոհացում տալու համար: Յովհաննէս իր Աւետարանին 6-րդ գլխուն մէջ կը ներկայացնէ Յիսուսի մէկ նկարը, որ այնքան ալ փայփայելի չի թուիր ըլլալ: Նոյնիսկ Ան երբեմն յարձակողական ըլլալ կը թուի: Փոխանակ Իրեն հետեւողներուն անձնասիրական փափաքներուն գոհացում տալու, Ան կը խանգարէ անոնց ակնկալութիւնները: Ան ինքզինք կը ներկայացնէ որպէս հոգեւոր հաց երկինքէն եկած եւ կ'ըսէ: «Եթէ չուտէք Մարդու Որդիին մարմինը ու չխմէք Անոր արիւնը, կեանք չէք ունենար ձեր մէջ» (Յովհ. 6. 54):

Այս պատգամը՝ մարմին ուտել եւ արիւն խմել նախատական, դժուար եւ ոչ հաճելի է: Ասոր համար շատեր հրաժարեցան Յիսուսի հետեւելէ (Հ. 66): Մենք ալ յաճախ կ'ուզենք Յիսուս մը, որ մեր անձնասիրական կարիքները կը հոգայ: Սակայն, հրաշալի կեանքին կը հասնինք միայն այն ատեն, երբ հետեւինք Իր պատուէրներուն:

**Յիսուսի նամբան միշտ դիւրիւն չէ:**





Չորեքշաբթի  
27 Յունուար

### Անկեղծ Հրճուանք

Կարդա՛  
Սաղմոս 37. 1-11

Տէրոջմով  
ուրախացի՛ր, քանզի  
Անիկա կու տայ քեզի  
քու սրտիդ  
խնդրուածքները:  
—Սաղմոս 37. 4

ԱՍՏՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 9-11



**Ե**րկրորդական վարժարանը աւարտելէ ետք՝ 1941-ին, Քլէր Հէս ուզեց ծառայել իր երկրին բանակին: Սակայն, սրտի անհանգստութեան պատճառով, մերժուեցաւ բանակին մաս կազմելէ: Ան սկսաւ նախանձիլ իր շրջանաւարտ ընկերներուն եւ շատ մը այլ մարդոց, որոնք իրենց յատուկ տարազներով պաշտօնի անցած էին: Սակայն կրցած էր իր նախանձոտ կեցուածքին յաղթահարել, կարդալով *ՅՐդ Սաղմոսը*: Այս Սաղմոսը կը խօսէր Դաւիթ թագաւորին մասին, թէ ան ինչպէս կրցած էր վարուիլ նախանձին դէմ:

Մինչ Քլէր կը զարմանար Աստուծոյ իր կեանքին ուղղութիւն տալուն, Հօրեղբայրը ըսաւ, թէ կրնար ըլլալ, որ Տէրը զինք իր ծառայութեան կանչէր: Ուրեմն, Քլէր արձանագրուեցաւ Մուտի Աստուածաշնչական Դպրոցը որպէս աշակերտ եւ երգելը իրեն ասպարէզ ընտրեց: Ապա «ՁՀաց Մեր Հանապազորդ» հրատարակութեան ծառայութեան գործին մէջ մտաւ: Այդ ծառայութիւնը ան կը կոչէ «Բացարձակ Երջանկութիւն»:

Դաւիթ ՅՐդ Սաղմոսին մէջ կը քաջալերէ մեզ, որ ուրախանանք Տէրոջմով եւ չնախանձինք ուրիշներու (Հ. 1-4): Թէեւ ան կը խօսի նախանձող մարդոց մասին, որոնք անիրաւութիւն կը գործեն Սատանայէն մղուած, սակայն կրնանք վերագրել զայն նաեւ ուրիշ տեսակ նախանձի: Փոխանակ մենք մեզ ուրիշներուն հետ բաղդատելու, պէտք է ուրախանանք Աստուծով: Աստուած, իր ծրագրած ժամանակին, պիտի իրականացնէ մեր սրտին փափաքները եւ պիտի հաստատէ իր կամքը մեզի համար: Աստուծոյ ծառայել բացարձակ երկաջանկութիւն է:

**Գոհումակութիւնը կու գայ, երբ Աստուծոյ կամքը աւելի կարեւոր նկատուի քան մեր ուզածը:**





Հինգշաբթի  
28 Յունուար

**Զինուած եւ Մե-  
ծապէս Ազդեցիկ**

Կարդա՛  
Եփես. 6. 10-18

Որովհետեւ մեր  
գօտեմարտը մարմինի  
եւ արիւնցի հետ չէ,  
հապա... չար  
ոգիներու հետ:  
—Եփես. 6. 12

Աստուծոյ Մէջ  
Տարուաւ Մէջ  
■ Եփեց 7-9  
■ Առակաց 10. 12-21



2007-ի Յունուար ամսուն, Մէքսի-  
քոյի թիճուանա շրջանին մէջ ոտախ-  
կաններուն զէնք կրել արգիւտեցաւ:  
Դաւադրութեան մը կասկածը կար  
ոտտիկանութեան եւ թմրեցուցիչի  
մազսանենդերու միջեւ: Ոտտիկան-  
ները վախնալով իրենց ապահովու-  
թենէն, կեցուցին պահակութիւնը:  
Բայց ի վերջոյ անոնցմէ ոմանք  
վերադարձան գործի, իրենց հետ  
պարսատիկներ կրելով: Երեք  
չաբաթներ ետքն էր, որ զէնքերը  
վերադարձուեցան անոնց:

Թէեւ կրնանք յիշել, թէ ինչպէս  
պատանի հովիւ Դաւիթ պարատիկով  
եւ պզտիկ յղկուած քարով կրցաւ  
դէմ դնել հակայի մը եւ զայն գետին  
տապալել (Ա. Թագ. 17), սակայն, մեզմէ քիչեր քաջութիւնը  
կրնան ունենալ դիմակալելու զինուած մարդոց, այդպիսի  
տկար պաշտպանութեամբ: Սակայն ամէն օր, թէեւ շատ  
տկար պատրաստութեամբ, ստիպուած ենք դիմակալել  
սպառնալիք մը: Որպէս հաւատացեալներ, մեր գօտեմարտը  
մարմինի եւ արիւնցի հետ չէ, հապա ...չար ոգիներու հետ»  
(Եփես. 6. 12): Այս պատերազմին արդիւնքը, որոշապէս  
յայտնի է: Յիսուս Ինքն է յաղթականը: Մենք ալ կրնանք  
յաղթական դուրս գալ այդ գօտեմարտէն, երբ գործածենք  
այն զէնքերը, որ Յիսուս կը հայթայթէ (Հ. 13): Այդպէս  
ընելով, կուուած կ'ըլլանք իր ոյժն ու գօրութիւնը  
գործածելով:

Ամէն օր պէտք է Աստուծոյ սպառազինութեամբ  
զինուիրք, «Հագած արդարութեան զրահը ...հաւատքի վա-  
հանը ...հոգիին սուրը, որ Աստուծոյ իտքն է» (Հ. 13-17):  
Պատրաստութիւնը եւ պաշտպանութիւնը կարեւոր  
ազդակներ են, հոգեւոր պատերազմը շահելու:

**Հոգեւոր յաղթանակը կրնան շահիլ միայն անոնք,  
որոնք պատրաստուած են պայքարելու:**





Ուրբաթ  
29 Յունուար

**Մնաց Բարով  
Ըսել**

Կարդա՛  
Մատթ. 11. 7-19

...Յովհաննէս Մկրտի-  
չէն աւելի մեծը եղած  
չէ: Սակայն երկինքի  
թագաւորութեան մէջ,  
ամենէն պզտիկը  
անկէ աւելի մեծ է:  
-Մատթ. 11. 11

Աստուծո՞ւնչը ՄԵ՛Կ  
Տարու՛ն ՄԵ՛Ձ  
■ Ելից 10-12  
■ Առակաց 10. 22-32



**Դ**ժուար, բայց միեւնոյն ատեն կարենոր բան է երկու խօսք ըսել յիշատակի պաշտամունքի մը ընթացքին: Հեղինակ մը, որ երկու գիրքերու մէջ համադրած է նշանաւոր մարդոց մահուան առիթով խօսուած յարգանքի խօսքեր, կ'ըսէ. «Լա գովասանութիւն մը մահուան առիթով, թէ՛ արուեստ է եւ թէ ճարտարապետութիւն - կամուրջ մը ապրողին եւ մեռնողին միջեւ, յիշատակ եւ յաւիտենականութիւն»:

Աստուածաշունչը շատ քիչ բան կ'ըսէ մեր ներկայ գովասանութեան վերաբերող: Սակայն Յիսուս մեծ յարգանքի տուրք մը մատուցանեց Յովհաննէս Մկրտիչի, երբ ան կը դիմագրաւէր իր նահատակութեան սպառնալիքը Հերովդէսի կողմէ: Բանտի մէջ եղած ատեն, Յովհաննէս իր աշակերտները դրկած էր, որպէսզի հաստատէին Յիսուսի ինքնութիւնը որպէս Մեսիա (Մատթ. 11. 2-6): Յիսուս Իր ինքնութիւնը յայտնելէ ետք, կ'ըսէ. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի, կիներու մէջ ծնածներուն մէջ Յովհաննէս Մկրտիչէն աւելի մեծը եղած չէ, սակայն երկինքի թագաւորութեան մէջ ամենէն պզտիկը անկէ աւելի մեծ է» (Հ. 11): Յիսուսի գովաբանութիւնը կը շեշտէր անապատ ապրող ու քարոզող Յովհաննէս Մկրտիչը, որ սխալ հասկցուեցաւ եւ վնասակար նկատուեցաւ, երբ կը պատրաստէր ճամբան՝ Աստուծոյ Որդիին: Յովհաննէսի մեծութիւնը անձնական ըլլալէ աւելի էր: Ան կը պարփակուէր Աստուծոյ թագաւորութեան մէջ: Ան ինքն իր գովաբանութիւնը գտած էր իր գործերով:

Երբ խորհրդածենք թէ ի՞նչ կրնանք ըսել ծանօթի մը մահուան առիթով, լա է նաեւ հարց տալ. «Մարդիկ ի՞նչ պիտի ըսեն իմ մասիս, երբ իմ ժամանակս գայ»:

**Ապրիլ Տերոջ համար այսօր, կը թողու  
յաւիտեական կտակ մը:**





Շաբաթ  
30 Յունուար

## Արցունքները Սրբել

Կարդա՛  
Յայտ. 21. 1-7

Աստուած անոնց  
աչքերէն պիտի սրբէ  
բոլոր արցունքները...  
ա՛լ ցաւ պիտի չըլլայ,  
որովհետեւ առաջուան  
բաները անցան:  
—Յայտ. 21. 4

ԱՍՏՈՒԱԾՈՒՆԵՐԸ ՄԷՆ  
ՏԱՐՈՒԱԸ ՄԷՆ  
■ Ելից 13-15  
■ Առակաց 11. 1-11

**Հ** ազիւ աւարտած էի պատգամս  
մարդկային վիշտի եւ ցաւի  
մասին, դրան մօտ գոյգ մը մօտեցաւ  
եւ ուզեց հետս խօսիլ: Կինը պատմեց  
այն ծանր բեռան մասին որ  
ընտանիքը կը կրէր: Իրենց դերա-  
տի գաւակը մարմնական շատ լուրջ  
տկարութիւն մը ունէր եւ իրենց  
անյոյս եւ անվերջանալի հոգածու-  
թիւնը մեծ վիշտ կը պատճառէր:  
Մանաւանդ երբ դիտէին, թէ ոչ մէկ  
բան պիտի փոխուէր իրենց գաւակին  
վիճակէն:

Մինչ անոնք արցունքոտ աչքե-  
րով կը խօսէին ինձի, անոնց փոքրիկ  
աղջիկը, իրենց մօտը կեցած կը  
դիտէր եւ մտիկ կ'ընէր: Նկատե-  
լով մօր վիշտը ու անոր երեսն ի վար հոսող արցունքները,  
ձեռքը բարձրացուց եւ սկսաւ սրբել մօրը արցունքները:  
Եղածը պարզապէս սիրոյ եւ կարեկցութեան արտա-  
յայտութիւն մըն էր եւ մտահոգութիւն մը՝ այդքան փոքր  
աղջնակի մը կողմէ՝ հանդէպ իր մօր:

Մեր արցունքները յաճախ կ'աղօտեն մեր տեսողութիւնը  
եւ արդեւ կ'ըլլան իրերն ու հարցերը յստակ կերպով  
տեսնելու: Նման պայմաններու տակ, քաջալերական կ'ըլլայ  
ուսնեալ բարեկամ մը, որ իսկապէս մեզ կը սիրէ, կը  
մտահոգուի մեր ցաւով եւ կ'ուզէ մեզի հետ ըլլալ մեր  
պայքարին մէջ:

Թէեւ բարեկամներ կրնան օգտակար ըլլալ, սակայն միայն  
Քրիստոս կրնայ մեր արցունքներէն աւելի անդին երթալ  
եւ հասնիլ խորը մեր վշտահար սիրտերուն: Անոր մխիթա-  
րութիւնը կրնայ մեզ գորացնել մեր ցաւի դէմ պայքարի  
ընթացքին, մինչեւ հասնինք այն օրուան, երբ Աստուած  
ինք պիտի սրբէ արցունքները մեր աչքերէն (Յակ. 21. 4):

**Այն Աստուածը, որ լուսցած է մեր մեղքերը,  
պիտի սրբէ նաեւ մեր Արցունքները:**





Կիրակի  
31 Յունուար

**Խորհրդատու  
Վարչապետ**

Կարդա՛  
Ելից 18. 13-24

Մովսէս աներոջ  
խօսքը մտիկ ըրաւ, եւ  
անոր բոլոր ըսածները  
ըրաւ:  
– Ելից 18. 24

ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Ելից 16-18  
■ Առակաց 11. 12-21

**Ե**րբ Լի Քուան Եու 1959-ին դարձաւ Սինկափուրի Վարչապետը, իր առաջնորդութեան շրջանին, սկսաւ ազգային բարեփոխութեան երկար ընթացք մը: Սկզբնական շրջանին, ցեղային խումբերու անհամաձայնութիւններն ու երկրին տկար տնտեսութիւնը, երկրին ապագան անորոշութեան մէջ ձգեցին: 1990-էն ետք, երբ Լի քաշուեցաւ իր Վարչապետի պաշտօնէն, Սինկափուր դարձած էր օրինակելի երկիր մը ցեղային խումբերու համագոյակցութեան եւ տնտեսական բարգաւաճութեան: Որպէս գլխաւոր Վարչապետ ծառայելէ ետք, 2004-ին Լի յօժարեցաւ ըլլալ Խորհրդատու Վարչապետ:

Անկէ ի վեր, ան կը նկատուի թանկագին խորհրդատու մը Սինկափուրի դահլիճին մէջ, ինչպէս նաեւ ուրիշ քաղաքական առաջնորդներու աշխարհի մէջ՝ քիչ մը ամէն տեղ:

Նոր սերունդի մարդիկ կրնան մեծապէս օգտուիլ հին սերունդի հմտութենէն: Թէեւ Մովսէս գործածուեցաւ Աստուծոյ կողմէ՝ հրաշքներ գործելու եւ փրկելու Իսրայէլը Եգիպտոսի գերութենէն, ան տակաւին մտիկ ըրաւ նաեւ իր աներոջ խրատներուն (Ելից 18. 24): Աները, երբ նկատեց իր փեսային հոգածութիւնն ու մտահոգութիւնը իր ժողովուրդին հանդէպ, անոր ուշադրութեան յանձնեց իրողութիւն մը. «Թէ՛ դուն պիտի մաշիս, թէ՛ ալ քեզի հետ եղող այս ժողովուրդը, որովհետեւ այս բանը շատ ծանր է քեզի համար» (Հ. 18): Մովսէս հետեւեցաւ իր աներոջ խրատներուն, ընտրելու եւ մարգելու ուրիշ մարդիկ եւ ներկայացուցիչներ, գործին ծանրութիւնը բաժնեկցելու համար (Հ. 22-24):

Աստուած գո՞վ ընտրած է քու կեանքիդ մէջ քեզի խրատատու ըլլալու, որպէս հովիւ եւ խորհրդատու:

**Անոնք, որոնք հասուն են իրենց հաւատքին մէջ, կրնան օգնել ուրիշներու, որ հասունանան իրենց հաւատքին մէջ:**





Երկուշաբթի  
1 Փետրուար

### Յանդգնի Տարբեր Ըլլալու

Կարդա՛  
Բ. Կորնթ. 5. 12-21

Ուրեմն մեզք  
դեսպաններ եցք  
Քրիստոսի համար:  
-Բ. Կորնթ. 5. 20

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Եփց 19-21  
■ Առակաց 11. 22-31



որ մարդիկ սիրեն մեզ եւ ամենէն ապահով ձեւը սիրուելու, իրենց պէս ըլլալ եւ իրենց մէջ խառնուելն է: Սակայն Քրիստոսի հետեւիլ բնաւ խառնուելու հարց չէ: Քրիստոսի հետեւիլ կը նշանակէ ջանալ Իրեն պէս ըլլալ: Կեանքի եւ մարդոց հանդէպ ունենալ այն վերաբերմունքը, որ Յիսուս ունէր: Երբեմն վտանգաւոր եւ անհանգստացնող բան է տարբեր ըլլալ փորձել: Սակայն այդ է, ինչ որ Առաքեալը կ'ըսէ: «Մենք դեսպաններն ենք Քրիստոսի» (Բ. Կոր. 5. 20): Այլ խօսքով, հարցը քու Թագաւորիդ ընծայած հրաշալի տարբերութիւնը բերել է հոն՝ ուր կ'ապրիս - տունդ, աշխատանքի վայրդ, շրջանակդ: Թագաւորը ներկայացնել ոչ միայն կոչում է, այլ մեծ պատիւ:

Յետադարձ ակնարկ մը կեանքիս վրայ, ցոյց կու տայ, թէ որպէս հովիւի տղայ, ես շատ պատիւ չեմ կրցած բերել հօրս: Ոչ Քրիստոնէական մեր վերաբերմունքն ալ կրնայ շատ պատիւ չբերել մեր Թագաւորին: Պէտք է յանդուգն ըլլալ տարբեր ըլլալու:

**Յանդգնէ՛ տարբեր ըլլալ - մեր Երկնաւոր Հօր սիրոյն:**



**Ք**անի հովիւի մը զաւակն էի, ընկերներս ինձի հովիւի տղայ պիտակը փակցուցած էին, ինչպէս ըրած էին այլ կրեականներու զաւակներուն: Սակայն այդ պիտակը պատճառ մը չէր որ ես կարգ մը տղայական չարութիւններ չընէի: Յաճախ լսած եմ մեր եկեղեցիի ժողովուրդէն. «Յովսէփիկ, դուն հովիւին տղան ես, պէտք է ուրիշներուն օրինակ ըլլաս»: Բայց ես չէի ուզեր օրինակ ըլլալ: Հազիւ հինգ տարեկան էի եւ կ'ուզէի զուարճանալ ընկերներուս հետ:

Օրինակ ըլլալ յաճախ կը նշանակէ տարբեր ըլլալ: Սակայն շատեր չեն ուզեր տարբեր ըլլալ: Կ'ուզենք, եւ ամենէն ապահով ձեւը սիրուելու, իրենց պէս ըլլալ եւ իրենց մէջ խառնուելն է: Սակայն Քրիստոսի հետեւիլ բնաւ խառնուելու հարց չէ: Քրիստոսի հետեւիլ կը նշանակէ ջանալ Իրեն պէս ըլլալ: Կեանքի եւ մարդոց հանդէպ ունենալ այն վերաբերմունքը, որ Յիսուս ունէր: Երբեմն վտանգաւոր եւ անհանգստացնող բան է տարբեր ըլլալ փորձել: Սակայն այդ է, ինչ որ Առաքեալը կ'ըսէ: «Մենք դեսպաններն ենք Քրիստոսի» (Բ. Կոր. 5. 20): Այլ խօսքով, հարցը քու Թագաւորիդ ընծայած հրաշալի տարբերութիւնը բերել է հոն՝ ուր կ'ապրիս - տունդ, աշխատանքի վայրդ, շրջանակդ: Թագաւորը ներկայացնել ոչ միայն կոչում է, այլ մեծ պատիւ:

Յետադարձ ակնարկ մը կեանքիս վրայ, ցոյց կու տայ, թէ որպէս հովիւի տղայ, ես շատ պատիւ չեմ կրցած բերել հօրս: Ոչ Քրիստոնէական մեր վերաբերմունքն ալ կրնայ շատ պատիւ չբերել մեր Թագաւորին: Պէտք է յանդուգն ըլլալ տարբեր ըլլալու:





Երեքշաբթի  
2 Փետրուար

**Լաւագոյնը Յու-  
ցադրութեան Մէջ**

Կարդա՛  
Մատթ. 23. 1-12

Մարդը արտաքին  
երեւոյթին կը Գայի,  
բայց Տէրը սրտին կը  
Գայի:  
—Ա. Թագ. 16. 7

ԱՍՏՈՒԾՆԱԿՆԵՐԸ ՄԵՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Մատթ. 23-28  
■ Առակաց 12. 1-14

**Շ**ատ կը սիրեմ շուներու ցու-  
ցադրութիւնը դիտել հեռատե-  
սիլի վրայ: Շուներուն տէրերը շատ  
կոկիկ հագուած եւ իրենց շուները  
զարդարած կը վազեն անոնց հետ՝  
ցոյց տալու, թէ իրենց շունը շատ  
գեղեցիկ եւ բացառիկ է: Նոյնպէս,  
շուները մարդուած են կենալու ինք-  
նավստահ, դունչներին վեր բռնած,  
խոզանակուած, երբեմն բան մը հա-  
զած: Սակայն յաճախ հարց կու տամ  
ես ինձի, թէ այդ ցուցադրութենէն  
վերջ, ի՞նչ բանի կը նմանին այդ  
շուները: Արդեօք կ'երթա՞ն ու կը  
պառկի՞ն այնպիսի տեղեր, ուր  
չուտով կ'աղտոտի իրենց մաքուր  
եւ փայլուն մուշտակները:

Աւելի կարեւորը, մենք ի՞նչ բանի կը նմանինք, երբ  
մեզ դիտող մէկը չկայ: Մատթ. 23. 2-7 հատուածին մէջ  
Յիսուս յանդիմանեց բոլոր անոնք, որոնք իրենք զիրենք  
կը փորձէին տարբեր ցուցադրել հանրութեան առջեւ եւ  
կը մոռնային կամ կ'անտեսէին Աստուծոյ առջեւ ընդու-  
նելի ներկայանալ: Աստուած կ'ուզէ, բոլորին ցոյց տանք  
մեր հնազանդութիւնը, հաւատարմութիւնն ու նուիրումը  
Իրեն, նոյնիսկ երբ ո՛չ ոք կը տեսնէ մեր ըրածը:  
Փարիսեցիներ աւելի կը կեդրոնանային ուրիշներու վրայ  
լաւ տպաւորութիւն ձգել, իրենց արտաքին երեւոյթով:  
Աստուած Իր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ մեր ներսի  
երեւոյթին վրայ: Ան կ'ուզէ, որ Իր Որդիին նմանինք:

Մենք ուրիշ հաւատացեալներու հետ մրցակցութեան մէջ  
չենք: Ան մեզ կը չափէ Իր Որդիին կատարեալ չափանիշով  
(Եփես. 4. 13): Ան սիրով կը հայթայթէ մեզի այն  
արդարութիւնը, որուն պէտք ունինք (Կողոս. 1. 21-23):

**Աստուծոյ հասունութեամբ ապրիլ աւելի լաւ է,  
քան մարդոց ծափահարութեամբ:**





2 որն քշարթի  
3 Փետրուար

**ԳԷՂ Կ՛երեւի**

Կարդա՛  
Սաղմոս 12

Ապահովութեան մէջ  
պիտի դնեմ զանիկա,  
որուն կը բաղձայ:  
—Սաղմոս 12. 5

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐԻ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 12-14

**Դ**աւիթ թագաւոր, նայելով աշ-  
խարհի մարդկութեան, անհան-  
գիատ զգաց: Համացանցի պէտք չու-  
նէր իրեն ներկայացնելու տխուր պատ-  
կերը մարդկային ընկերութեան, ոչ  
ալ լրաբեր թերթի մը՝ տեղեկացնելու  
մարդկային ոճիրներն ու տառա-  
պանքը: Նույնիսկ առանց գէշ լու-  
րեր հաղորդող հեռատեսիլի կայա-  
նի, ան տեսած էր չարին գոյութիւնը:

Դաւիթ իր շուրջը նայելով տե-  
սած էր աստուածավախ մարդոց սա-  
կաւանալը՝ իր սպրած շրջանէն: Ան  
նկատած էր մարդոց անհաւատար-  
մութիւնը, ստախօսութիւնը ու չո-  
ղոքորթութիւնը իրարու հանդէպ  
(Սաղմ. 12. 1-2): Դաւիթ թագաւորի

այս նկարագրութիւնը կրնայ հեռատեսիլի մէկ ցուցադ-  
րութեան պէս բան մը ըլլալ, սակայն ան կենցաղային  
երեւոյթ մըն էր Ն.Ք. 1000 թ-ի: Թերեւս այսօր, մեր ընկե-  
րութեան մէջ գոյութիւն ունեցող չարը ամէն ժամանակ-  
ներէ աւելի գէշ տեսնենք: Սակայն, Դաւիթ մեզի կը  
յիշեցնէ, թէ չարը 21րդ դարու յայտնութիւնը չէ երբեք:

Սակայն, Դաւիթի խօսքերը կը յայտնեն նաեւ յոյս մը:  
Նկատի առնենք անոր հակազդեցութիւնը գէշ լուրերու  
հանդէպ: Առաջին համարին մէջ կ'ըսէ, թէ Դաւիթ  
Աստուծոյ կը դիմէ եւ «օգնութիւն» կ'աղերսէ: Յետոյ  
մասնաւոր կարիքներու համար դարձեալ կը դիմէ Աստուծոյ  
եւ դրական պատասխան կը ստանայ: Աստուած կը խոստա-  
նայ, որովհետեւ Ան արդարութեամբ կ'իշխէ: Ան կը հայթայ-  
թէ նաեւ պաշտպանութիւն եւ սպահովութիւն (Հ. 5-7):

Երբ յուսախաբուած ես գէշ լուրեր լսելով, դիմէ՛  
Աստուծոյ օգնութեան եւ սպահով զգա՛: Աստուած  
տակաւին եւ միշտ կը մնայ ամէն բանի կառավարիչը:

**Մենք բանէ մը վախճալու պէտք չունինք,  
որովհետեւ ամէն բանի կառավարիչը Աստուած է:**





Հինգշաբթի  
4 Փետրուար

**Վարդանանց  
Հաստատմարտը**

Կարդա՛  
Հոովմ. 8. 31-39

**Ուրեմն, ո՞վ կրնայ  
զատել մեզ  
Քրիստոսի սէրէն,  
տառապա՞նքը, ...  
կամ սո՞ւրբ:**  
— Հոովմ. 8. 35

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՆ  
■ Ելից 22-24  
■ Առակաց 12. 15-28



էր, ու մեզ այնքան սիրեց, որ մահը յանձն առաւ, որպէսզի մենք իր մահովը ազատագրուէինք յաւիտենական մահէ: Ու քանի որ ինք չխնայեց իր անմահութեան, մենք որ կամովին մահկանացու դարձանք, պիտի կամովին մեռնինք իր սիրոյն Համար, որպէսզի Ան մասնակից դարձնէ մեզ իր անմահութեան: Մենք պիտի մեռնինք իբր մահկանացուներ, որպէսզի Ան ընդունի մեզ իբրեւ անմահներ»:

*Սիրելի բարեկամներ, եկէք այսօր նշենք Վարդանանց Հաւատամարտը առանց նօսրացնելու զայն ու վերածելու լոկ «Վասն խղճի ազատութեան ու հայրենիքի անկախութեան» քաղաքական ու փիլիսոփայական լօզունքներու եւ ընդհանրացումներուն: Թող Վարդանանց Հաւատամարտը անհատական ու գոյութենական ազդարարութիւն մը դառնայ մեզի Համար՝ մտածելու եւ որոշում առնելու մեր յաւիտենական կեանքին շուրջ: Որովհետեւ ասիկա է որ պիտի վճռէ մեր այսօրուան կեանքին որակը, ու կարող պիտի ընէ մեզ յաղթական կեանք մը վարելու: (ՊՆՏ)*

**«Վարդան Քաջ Նահատակ, որ վանեցիր գթջնամիմ, վարդագոյն արեամբդ ին պսակեցիր զեկեղեցի»:**



**Կ**րօնական Հաւատքի եւ Համոզումներու Համար նահատակուելու գաղափարը նորութիւն չէր Վարդան Մամիկոնեանի ի եւ իր կղերական թէ աշխարհական քաջամարտիկներուն Համար: Յիսուս ինք գերագոյն օրինակը եղած էր անոնց Համար: Քրիստոսի Եկեղեցին բազմաթիւ նահատակներ ունեցած է, որոնք նահատակուած են Քրիստոսի սիրոյն Համար, որոնց շաւիղին հետեւած են Վարդանանք եւ բազմաթիւ սուրբեր: Պարսից Յազկերտ Թագաւորին իրենց ուղղած պատասխան նամակին մէջ անոնք կ'ըսեն.- «Եթէ նոյնիսկ անմահ ըլլայինք, մեզի կը վայելէ մեռնիլ Քրիստոսի սիրոյն Համար, որովհետեւ ինք անձնապէս անմահ



Ուրբաթ  
5 Փետրուար

**Աւետարանից Խիստ Ուսողութիւնը**

Կարդա՛  
Մատթ. 18. 23-35

Ծառայից Տէրը՝  
գթալով անոր,  
արձակեց զայն, եւ  
ներեց անոր պարտքը:  
—Մատթ. 18. 27

ԱՍՏՈՒԾՆԱԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՁ  
■ Ելից 25-27  
■ Առակաց 13. 1-12



Սակայն, Յիսուսի առակները շնորհքի մասին, կ'ուսուցանեն Հիմնովին տարբեր ճշմարտութիւն մը: Մատթ. 18-ին մէջ կը պատմուի ծառայի մը մասին, որ մեծ գումարի պարտք մը դիզած էր (Հ. 23-24): Ասիկա կը ստորագծէ այն կէտը, թէ պարտքը աններելի է: Այսուհանդերձ, տէրը առանց տուգանքի ծառան ազատ կ'արձակէ:

Ո՛րքան աւելի խորհրդածեմ Յիսուսի առակներուն վրայ, որոնք շնորհքի մասին կը խօսին, այնքան աւելի կը փորձուիմ «դաժան» բառը գործածել նկարագրելու աւետարանի թուաբանութիւնը: Ես կը հաւատամ, որ Յիսուս իր այս առակներու պատմութեամբ, կոչ կ'ընէ մեզի դուրս գալու «աչքի տեղ աչք, ակուայի տեղ ակուայ» փոխվրէժի անշնորհ մտայնութենէն եւ ընդունիլ Աստուծոյ յաւիտենական շնորհքի կեցուածքը:

Եթէ մտիկ ընեմ, բարձրաձայն փափառք մը կը լսեմ աւետարանէն, որ կ'ըսէ՝ «Չստացայ այն, որուն արժանի էի»: Արժանի էի պատժուելու, սակայն ներում գտայ: Բարկութեան արժանի էի, սակայն սէր ստացայ: Արժանի էի խիստ յանդիմանութեան եւ ծունկի գալով ապաշխարելու, փոխարէնը ինձի խնճոյք մը սարքուեցաւ:

**Մեր մեղքը մեծ է, բայց Աստուծոյ շնորհքը աւելի մեծ է:**



**Մ**եր մանկութենէն սորված ենք ինչպէս յաջողիլ այսպիսի անշնորհ աշխարհի մը մէջ: «Ինչ որ կու տաս զայն կը ստանաս»: «Կանուխ ելլող թռչունը կ'առնէ որսը»: «Չկայ ցաւ, չկայ շահ»: Ես շատ լաւ գիտեմ այս օրէնքները, որովհետեւ անոնց համեմատ կեանք մը ապրած եմ: Կ'աշխատիմ, շահածիս համար: Կը սիրեմ շահիլ: Կը պնդեմ իրաւունքներուս համար: Կ'ուզեմ որ մարդիկ ստանան այնքան որ արժանի են:

Սակայն, Յիսուսի առակները շնորհքի մասին, կ'ուսուցանեն Հիմնովին տարբեր ճշմարտութիւն մը: Մատթ. 18-ին մէջ կը պատմուի ծառայի մը մասին, որ մեծ գումարի



Շարաթ  
6 Փետրուար

**Շրջապատային  
Մտապատկեր**

Կարդա՛  
Ղուկաս 9. 51-62

Երբ աշխարհէն  
վերնալու իր  
ժամանակը հասաւ,  
հաստատապէս  
որոշեց Երուսաղէմ  
երթալ:  
—Ղուկաս 9. 51

Աստուծո՞ւնը ՄԷՆ  
Տարու՞ն ՄԷՆ  
■ Եփց 28-30  
■ Առակաց 13. 13-25



**Շ**րջապատի մտապատկերը կարելի է կը դարձնէ մեզի գիտակցիլ մեր շուրջի իրողութեանց, միեւնոյն ատեն կեդրոնանալով մեր նպատակակէտին: Ինչ որ տեսնենք «մեր աչքին անկիւնէն», կրնայ օգտակար ըլլալ, եթէ մեզ չխցէ մեր նպատակէն:

Յարութեան սօնին նախորդող շաբաթներուն, մինչ կը խորհինք խաչի մասին, մեր ուշադրութիւնը կը գրաւէ մեր Տիրոջ նպատակադրուած մուտքը Երուսաղէմ՝ ուր գիտէր, թէ խաչելութիւնն ու յարութիւնը Իրեն կը սպասէին: «Երբ աշխարհէն վերնալու ժամանակը հասաւ, հաստատապէս որոշեց Երուսաղէմ երթալ» (Ղուկ. 9. 51): Այդ վայրկեանէն ետք, Յիսուսի աչքերը յարած էին խաչին: Բոլոր արգելքները, որոնք կը խոչնդոտէին Հօրը կամքը կատարելու, մաս կը կազմէին Իր շրջապատի մտապատկերին:

Երբ մարդ մը փափաք եւ հետաքրքրութիւն յայտնեց Յիսուսի հետեւիլ, ըսաւ Յիսուս. «Ոչ մէկը որ կը դնէ ձեռքը մաճին վրայ ու ետեւ կը նայի՝ յարմար է Աստուծոյ թագաւորութեան» (Հ. 62): Հարցը շատ հաւանաբար մարդուն ընտանիքը չէր (Հ. 61), այլ անոր կեդրոնացումը նպատակին: Մենք չենք կրնար դէպի առջեւ ընթանալ, երբ միշտ ետեւ կը նայինք, թէ ի՞նչ թողուցինք հոն:

Ո՛չ ովսանաններու աղաղակները, ոչ ալ ատելալատ պորթկումները կրցան Յիսուսը շեղեցնել Իր նպատակէն՝ «Իր կեանքը որպէս փրկանք տալու շատերու համար», վճարելու մեր փրկութեան գինը (Մատթ. 20. 28): Միւրելի՛ բարեկամ, ի՞նչ է այսօր քու կիզակէտդ: Այլ խօսքով, միտքդ ի՞նչ բանի վրայ կեդրոնացուցած ես:

Ո՛չ ովսանաններու աղաղակները, ոչ ալ ատելալատ պորթկումները կրցան Յիսուսը շեղեցնել Իր նպատակէն՝ «Իր կեանքը որպէս փրկանք տալու շատերու համար», վճարելու մեր փրկութեան գինը (Մատթ. 20. 28): Միւրելի՛ բարեկամ, ի՞նչ է այսօր քու կիզակէտդ: Այլ խօսքով, միտքդ ի՞նչ բանի վրայ կեդրոնացուցած ես:

**Պէտք չունիս գիտնալու քէ ուր կ'երթաս, երբ կը  
ճանչաս Աճ՝ որ գիտէ ո՛ւր կ'երթայ:**





Կիրակի  
7 Փետրուար

**Հեռաձայնել՝  
ես Ինձի**

Կարդա՛  
Սաղմոս 26

Ո՛վ Տէր, դատս  
պաշտպանել՝,  
որովհետեւ  
պարկեշտութեամբս  
ընթացայ:  
—Սաղմոս 26. 1

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒԼ ՄԷՋ  
■ Ելից 31-33  
■ Առակաց 14. 1-11



**վրաս խնդալ:** Այս դէպքը մտածել տուաւ ինձի, թէ որքան յաճախ իմ աղօթքներս փոխանակ Աստուծոյ ուղղելու ես ինձի կ'ուղղեմ ու ինձի հետ կը խօսիմ:

Օրինակ, երբ անիրաւ տեղ ամբաստանուիմ, կը խնդրեմ Աստուծոյն, որ դատս պաշտպանէ: Կ'ուզեմ, որ անունս մաքուր մնայ եւ յանցաւոր մարդը հաշուետու նկատուի իմ վարկիս վնասած ըլլալուն համար: Սակայն, անհամբեր կը դառնամ Աստուծոյ հետ եւ կը ջանամ ինքզինքս պաշտպանել: Այնպէս՝ որպէս թէ ես ինձի աղօթած ըլլայի:

Իրաւունքի պաշտպանութիւնը կարելի է վիճաբանութեամբ չահիլ, այլ միայն պարկեշտութեամբ (Սաղմ. 26. 1): Անիկա կեցուածք մըն է թոյլ տալու, որ Աստուած քննէ մեր սիրտն ու միտքը (Հ. 2) եւ քայլել Անոր ճշմարտութեան մէջ (Հ. 3): Ասիկա անշուշտ համբերութիւն կը պահանջէ (25. 21): Երբ Աստուծոյ դիմենք, պէտք է վստահ ըլլանք, թէ Ան մեզի պիտի օգնէ յարմար ժամանակին եւ կատարեալ ձեւով:

**Աղօթքիմ նպատակը ստանալ չէ՛ ինչ որ մեմք կ'ուզեմք, այլ ըլլայ այն՝ ինչ որ Աստուած կ'ուզէ:**





Երկուշաբթի  
8 Փետրուար

**Գաղտնի  
Պարտեզը**

Կարդա՛  
Առակ. 4. 20-27

Պահէ՛ սիրոս ամբողջ  
զգուշութեամբ, քանի  
որ կեանքի  
աղբիւրները անկէ են:  
—Առակ. 4. 23

ԱՍՏՈՒԱԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Ելից 34-36  
■ Առակաց 14. 12-24



**Գ**աղտնի Պարտեզը վէպին մէջ, Մէյրի անունով դերաստի աղջիկ մը, Անգլիա կ'երթայ՝ ապրելու իր հարուստ հօրեղբօր հետ: Այնտեղ կը ծանօթանայ Տիքըն անունով տարեկից տղու մը հետ, որ բանուոր դասակարգին պատկանող մարդու մը զաւակն էր: Օր մը, երբ անոնք կը խաղային ագարակին մէջ, չորս կողմէն ցանկապատուած պարտեզ մը կը գտնեն, որուն դուռը կղպուած էր Մէյրիի հօրեղբօր կողմէ, քանի որ այդ իր մահացած կինը կը յիշեցնէր: Պարտեզը խոպան էր, որովհետեւ երեսէ ձգուած էր: Տիքըն կ'ըսէ Մէյրիի, թէ լաւ խնամք տարուելով, պարտեզը կրնար նոր կեանք ստանալ: Մանուկներուն օգնութեամբ, գաղտնի պարտեզը կը կանաչնայ եւ կը լեցուի գոյնզգոյն ծաղիկներով:

Մենք բոլորս ալ ունինք գաղտնի պարտեզ մը մեր սրտին մէջ: Չայն Ինչպէս խնամելը պիտի որոշէ անոր ինչ տեսակի վերաբերմունք եւ խօսք յայտնաբերելը: Առակաց գիրքը իմաստութեամբ կը խրատէ մեզ, ըսելով. «Պահէ՛ սիրտդ ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են» (Առակ. 4. 23): «Պահէ՛» բառը կը նշանակէ «հսկել եւ պահել հաւատարմութեամբ»: Պահել ի՛նչ որ մեր սրտին մէջ է եւ ուշադիր ըլլալ մեր արտայայտութեան, ցոյց պիտի տայ, թէ ի՛նչ բաներ կ'արմատանան այնտեղ: Երբ այնտեղէն վերցնենք դժգոհութեան փուշերը, ցանկութեան որոմները ու դառնութեան արմատները, պիտի կարենանք զանոնք փոխարինել հոգիի պտուղներով - սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, ազնուութիւն, բարութիւն, հաւատարմութիւն եւ ժուժկալութիւն (Գաղ. 5. 22-23):

**Աստուած կ'ուզէ, որ ջրես այն հումտերը, որ ինք ցանած է սրտիդ մէջ:**





Երեքշաբթի  
9 Փետրուար

**Կեանք՝ Ծիսականէն Անդին**

Կարդա՛  
Մարկոս 1. 16-20

Անոնք ալ իսկոյն թողուցին իրենց ուրկանները եւ հետեւեցան Անոր: —Մարկոս 1. 18

ԱՍՏՈՒԱՍՏԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒԱՆ ՄԷՋ  
■ Մարկոս 1-6  
■ Առակաց 14. 25-35



**Թ**ագաւորական բարձրաստիճան անձ մը, տարեցերու տան մը իր տուած այցելութեան ընթացքին, երբ կ'ողջունէր ներկաները, զարմացաւ, երբ կին մը որոշ արտայայտութիւն ցոյց չտուաւ, երբ իրեն կը նայէր: **Ջարմացած Հարցուց անոր.** «Դուն գիտե՞ս թէ ո՛վ եմ ես»: Կինը պատասխանեց. «Ո՛չ: Բայց այդ Հիւանդապահուհին կ'օգնէ մեզի նման պարագաներուն»:

Շատեր յաճախ կը շփոթին թէ ո՛վ է Յիսուս: Բայց Անոր խօսքերուն միջոցով, Աստուած կ'օգնէ մեզի ճանչալ եւ վայելել իրաւ Յիսուսը: Դուն զԱյն պիտի գտնես մեծապէս Հիացում պարտադրող եւ մարդիկը դիւրաւ Համոզումի բերող մէկը: Օրինակ, կարծր ձկնորսները, սուրբ Հաւաքողները եւ մոլեռանդները, որոնք ամէն բան ձգելով Անոր Հետեւեցան (Մարկ. 1. 18): Կիներ ապահով զգացին Անոր Հետ ըլլալով: Ամբոխները ակնածանքով կեցան Անոր գօրութեան եւ Հեղինակութեան ի տես:

Յիսուս չի գոհանար միայն մեզի «կրակի ապահովագրութիւն» ըլլալէ, ազատելու մեզ յաւիտենական դժոխքի կրակէն: Ան կ'ուզէ, որ ճանչնանք իր ճիշդ ո՛վ ըլլալը եւ մեր յարաբերութիւնը խորացնենք իրեն Հետ, աւելի անձնական գետնի վրայ: Եթէ մտահոգուած ես օրէնքներով եւ կանոններով լեցուն կրօնքով մը, ընդունէ՛ Գրիստոսի Հրամացուցած այն կեանքը, որ ծիսականէ անդին կ'անցնի: Ողջունէ՛ յարաբերութիւն մը, ուր կրնաս գտնել ընկերակցութիւն, միխթարութիւն, իմաստութիւն եւ ճշմարտութիւն: Ողջունէ՛ այն սքանչելի առանձնաշնորհումը, որով կրնաս Յիսուսը ճանչնալ եւ իրեն Հետեւելու ուրախութիւնը ունենալ: Ճանչցի՛ր զայն, եւ օրէ օր աւելի պիտի սիրես Ջինք:

**Յիսուսը նանչնալ կը նշանակէ սիրել Յիսուսը:**







Չորեքշաբթի  
10 Փետրուար

**Վերջ ԴՆԵԼ Չարին**

Կարդա՛  
Մատթեոս 5. 38-48

Բայց ես կ'ըսեմ ձեզի.  
«Չարին մի՛ դիմադրե-  
րեր, քապա ո՛վ որ  
ապտակէ աջ այտոդ,  
դարձո՛ւր անոր միւսն  
ալ»:  
—Մատթեոս 5. 39

ԱՍՏՈՒՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 15-17



մը հարուած մը կու տայ ուրիշ տղու մը, եւ դիմացինը կը փոխադարձէ շատ մը հարուածներով եւ շուտով մեծ կռիւի մը կը վերածուի: Եղածը փոխվրէժի ընթացքն է, ուր մէկու մը արարքը կը փոխադարձուի աւելիով:

Մատթեոս 5-ի մէջ, Յիսուս նիւթ կ'ընէ կարգ մը փոխ-  
յարաբերութեանց վերաբերող կարեւոր հարցեր, շեշտելով  
այն չափանիշերը, որ Աստուծոյ քով հաճելի են եւ  
ընդունելի: «Լսեր էք որ ըսուեցաւ... բայց ես ձեզի կ'ըսեմ...»  
(Հ. 38-39): Յիսուսի խօսքերը - միւս այսը դարձնել, երկրորդ  
մղոնը երթալ, թող տալ մեր վերարկուն ալ - ոչ իրապաշտ  
կամ մարդկային կը թուին ըլլալ, ինչպէս եղաւ առաջին  
անգամ զանոնք լսողներուն (Հ. 38-42): Հարց է, թէ մենք  
ո՞րքան կը խորհրդածենք, կ'աղօթենք եւ կը փորձենք  
կիրարկել Յիսուսի այս ուսուցումները մեր առօրեայ  
կեանքով, երբ սխալ մը գործելու ըլլանք: Չարիքի դէմ  
աւելի չարիք ընթացքը վերջ կը գտնէ միայն ա՛յն ատեն,  
երբ գործադրենք Յիսուսի ուսուցանած սկզբունքը:

**Բարիքի դէմ բարիք գործել բնական է.  
Չարիքի դէմ բարիք գործել աստուածային է:**



**Ք**ատնուող եկեղեցիի մը հովիւը,  
օր մը, իր պատգամին մէջ կ'ըսէ.  
«Կարգ մը մարդիկ կան, որոնք կը  
հաւատան աչքի տեղ աչք օրէնքին:  
Բայց այս օրեր, երկու աչք մէկ աչքի  
տեղ օրէնքն է, որ կը կիրարկուի:  
Հաւասարութիւն բնաւ չկայ:  
Փոխադարձութեան չափը միշտ  
աւելի բարձր է»: Ժողովուրդը  
գլուխը կը շարժէր ընդունելով այդ  
ճշմարտութիւնը, որ կը դիմադրա-  
ւէին ամէն օր:

Նման բաներու շատերս կը հան-  
դիպինք: Անոնք կրնան պատահիլ  
դպրոցի մը խաղավայրին մէջ կամ  
մեր տուներէն ներս: Պզտիկ տղայ



Հինգշաբթի  
11 Փետրուար

**Բարեկամի Մը  
Վերջերը**

Կարդա՛  
Բ. Թագ. 12. 1-13

Բարեկամից տուած  
վերջերը հաւատարիմ  
են:  
—Առակաց 27. 6

ԱՍՏՈՒԱԾՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒԱՆ ՄԷՋ  
■ Ելից 37-38  
■ Առակաց 15. 1-11



**Ո**չ ամէն մարդ կը սիրէ, սրբա-  
գրուիլ: Բայց Սաղմոսերգու  
Դաւիթ ընդունեց: Ան ինքզինք  
պարտաւոր զգաց բոլոր անոնց, որոնք  
զինք սրբագրելով ուղղութիւն  
տուին: Ան կ'ըսէ. «Արդարը թող  
ծեծէ զիս, աստիկա կարեկցութիւն է,  
թող յանդիմանէ զիս, աստիկա օծումի  
իւղ է, իմ գլուխս պիտի չմերժէ  
զայն» (Սաղմ. 141. 5):

Սիրով եղած սրբագրութիւնը  
ազնուութիւն է: Հաւատարիմ եւ ան-  
կեղծ բարեկամները զիրար պէտք է  
սրբադրեն, եթէ նոյնիսկ այդպէս  
ընել վիրաւորիչ կամ իրենց յա-  
րաբերութիւնը վտանգող թուի  
ըլլալ: Ատիկա, ձեւ մըն է մեր սէրը  
ցոյց տալու մեր բարեկամներուն եւ օգնելու անոնց, որ  
աւելի զօրանան: Ինչպէս Առակ. 27. 6-ը կը հաստատէ.  
«Բարեկամին տուած վերջերը հաւատարիմ են»:

Սակայն, աստուածային շնորհք պէտք է անկեղծօրէն  
սրբադրելու: Նոյնպէս, աւելի հեղութիւն եւ վեհանձնութիւն  
պէտք է զայն ընդունելու: Յաճախ ճիշդ հակառակը,  
ինչպէս Դաւիթ թագաւոր ընդունեց Նաթան Սարգարէին  
զինք ուղղելու կոչը, մենք հակամէտ ենք մերժելու զայն:  
Մենք յաճախ կը դժգոհինք մեր գործերուն մարդոց  
միջամուխ ըլլալուն: Սակայն, եթէ հարցը լրջօրէն քննելէ  
ետք ճշդենք մեր դիրքը, ան իսկապէս «օծումի իւղի  
պէս» կ'ըլլայ մեր գլխուն, եւ մեր կեանքը կը համեմուխ  
քաղցրութեամբ, ո՛ւր ալ երթանք:

Շնորհքի մէջ աճիլը երբեմն կու գայ հաւատարիմ բարե-  
կամի մը ազնիւ եւ սակայն ոչ հաճելի սրբագրութեամբ:  
Մի՛ Մերժեր այդ, որովհետեւ «Ազգարարութեան ուշադիր  
եղողը խորագէտ կ'ըլլայ... եւ Իմաստուն» (Առակ. 15. 9. 8-9):

**Սրբագրութիւն մը՝ հաւատարիմ բարեկամի մը  
կողմէ, կ'օգնէ մեզի փոխուելու դէպի լաւը:**





Ուրբաթ  
12 Փետրուար

**Գիտակցելով  
Բնակիլ**

Կարդա՛  
Եփես. 5. 25-33

Ամուսիններ, գիտակցելով բնակեցե՛ք ամուսն (ձեր կիցերուն) հետ... որպէսզի ձեր աղօթքները չընդհատուին: —Ա. Պետ. 3. 7

ԱՍՏՈՒՍԻՆՆԵՐ ՄԷՆ  
ՏՈՒՆԱԼ ՄԷՋ  
■ Եփեց 39-40  
■ Առակաց 15. 12-21



**Տ**իկինս՝ Մարլէն եւ ես, 30 տարիներէ ի վեր ամուսնացած ենք եւ այդ ընթացքին, սորված՝ դնահասեղ գիրար եւ վայելել իրարու յատուկ նկարագրի յատկանիշերը: Նոյնիսկ այդքան երկար տարիներ միասին ըլլալէ ետք, տակաւին երբեմն Մարլէն նոր անակնկալներով գիտ կը հիացնէ: Վերջերս, սակայն, Մարլէն այնպիսի արտայայտութիւն մը ունեցաւ լուրերը մտիկ ընելէ ետք, որ ճիշդ հակառակն էր, այն ինչ որ կ'ակնկալէի: Ըսի իրեն. «Վա՛յ, ըսածդ ուղղակի ցնցեց գիտ: Երբեք չէի կրնար մտածել, թէ դուն այդպիսի կեցուածք մը պիտի ցուցաբերէիր այդ հարցին մասին»: Իր պատասխանը եղաւ. «Քու գործը գիտ պատկերացնել է, իսկ իմ գործս քեզի ենթադրել տալ է»: Մեր կենակիցը հասկնալու այդ պատասխանատուութիւնն է, որ ամուսնական կեանքը կը պահէ հետաքրքրական եւ ճկուն:

Ասիկա հին մարտահրաւէր մըն է: Պետրոս Առաքեալ կ'ըսէ. «Ամուսիններ, գիտակցելով բնակեցէ՛ք անոնց հետ, պատուելով կիները, իբրեւ աւելի տկար անօթներ եւ կեանքի շնորհքին ժառանգակիցներ, որպէսզի ձեր աղօթքները չընդհատուին» (Ա. Պետ. 3. 7): Առաքեալը հարցը կը նկատէ նախապատուութիւն մը ամուսինին համար՝ աշակերտ մը ըլլալու, ճանչնալու եւ հասկնալու համար իր կիներ: Առանց այդ զոհողութեան եւ նուիրումին, ամուսին մը չի կրնար գիտնալ, թէ ի՞նչ վերաբերմունքն է, որ կրնայ ուրախացնել եւ պատուել իր կիներ:

Որպէս ամուսին, եթէ կիսն սիրելու եմ, ինչպէս Քրիստոս սիրեց Եկեղեցին (Եփես. 5. 25), այդ մէկը կ'ըլլայ աստիճանաբար մտադրելով եւ ճիգ թափելով, որ զինք հասկնամ:

**Ամուսնութիւնը կ'անի ու կը զօրանայ սիրով եւ յարգանքի մթնոլորտի մը մէջ:**





Շաբաթ  
13 Փետրուար

**Թարմ**

Կարդա՛  
Սաղմոս 51. 8-13

Քու փրկութեանդ  
ուրախութիւնը ինձի  
վերադարձո՛ւր:  
—Սաղմ. 51. 12

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Ղեւո. 1-3  
■ Առակաց 15. 22-33



**Ի**՞նչ կ'անցնի մտքէդ, երբ «Թարմ»-բառը լսես: Երբ օգը պայծառ եւ հաճելի ըլլայ, ամուսինիս հետ կ'երթանք ագարակապաններու շուկան, ուրկէ կրնանք գնել թարմ պտուղներ եւ բանջարեղէն: Ինձի համար «Թարմ» կը նշանակէ նոր քաղուած - ոչ օթեկ կամ աւրուած, այլ թարմ եւ շատ համեղ:

Ես ալ նման թարմ յարաբերութեան մը պէտք ունիմ Աստուծոյ հետ: Յաճախ բազմատեսակ օթեկ կեցուածքներ կ'ունենամ, ինչպէս՝ անհամբերութիւն, քննադատութիւն եւ անձնասիրութիւն, եւ ոչ բաւարար զոհողութիւն եւ հեղութիւն... քաղցրութիւն, ազնուութիւն... որոնք «Հոգիի պտուղներն են» (Փաղ. 5. 22-23): Երբ Դաւիթ ճանչցաւ իր մեղաւոր վիճակը եւ ապաշխարեց, հետեւեալ աղօթքը ըրաւ. «Ո՛վ Աստուած, իմ մէջս մաքուր սիրտ մը ստեղծէ», ապա պաղատեցաւ Աստուծոյ, «Քու փրկութեանդ ցնծութիւնը ինձի վերադարձուր» (Սաղմ. 51. 10-12): Խոստովանութիւն եւ ապաշխարութիւն մեր մեղքերուն համար, կը նորոգէ մեր յարաբերութիւնը մեր Տէրոջ հետ եւ առիթը կը ստեղծէ ուրախութեամբ նոր կեանք մը սկսելու:

Այսօր լաւագոյն առիթն է խնդրելու Աստուծմէ՛ Հոգիի նորութիւն, հաւատքի թարմութիւն եւ իր ներումը գնահատելու նոր կեցուած մը ունենալու խիզախութիւնը:

Ո՛վ Տէր, կը խնդրենք, որ օգնես մեզի, որպէսզի մեր կեանքի պտուղները ըլլան միշտ «Թարմ եւ ծաղկուն» (Սաղմ. 92. 14): Օգնէ՛ մեզի, որ քու սիրոյդ, կարեկցութեանդ եւ հաւատարմութեանդ փորձառութիւնը ունենանք, որպէսզի «ամէն աւտու վերանորոգուինք» (Ողբք 3. 22-23): Ամէն:

**Լաւ պտուղ արտադրելու համար, պէտք է մաքրել մեղքի որոմները:**





Կիրակի  
14 Փետրուար

**Լաւագոյն  
Ընկերակիցը**

Կարդա՛  
Ա. Յովհ. 3. 1-3

Տեսէ՛ք թէ Հայրը  
ինչպիսի՞ սէր շնորհեց  
մեզի, որպէսզի մենք  
Աստուծոյ զաւակներ  
կոչուիմք:  
—Ա. Յովհ. 3. 1

ԱՍՏՈՒԱԾՈՒՆԵՐ ՄԷՑ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՑ  
■ Դեւ. 4-6  
■ Առակաց 16. 1-11



**Ե**րբեմն կարգ մը մարդիկ սէր կը փնտռեն եւ զայն կը գտնեն արտասովոր վայրերու մէջ, ինչպէս նաև Եորք քաղաքի Թաքսիի մէջ: Թաքսիի մը վարիչը կը սիրէ իր ինքնաշարժը նստող ամուրի յաճախորդներուն ժամադրութիւն կարգադրել: Զոյգեր իրարու քով բերելու իր այս ծառայութեան մասին ծանուցումներ ալ դրած է հեռատեսիլի եւ կարգ մը թերթերու մէջ: Ան երբեք չի բարեխօսեր, պարզապէս միայն դիւրութիւնը կ'ընծայէ, որ գոյգեր հանդիպին իր ինքնաշարժին մէջ եւ լրջօրէն մօտենան իրարու՝ ընտանիք կազմելու համար: Ան կը սիրէ, որ իր յաճախորդներուն սէրը ծաղկի եւ իրականութիւն դառնայ:

Լաւագոյն տեղը ճշմարիտ սէր գտնելու, ուրիշ մարդու քով չի կրնար ըլլալ, այլ միայն Գիրքի մը մէջ, որ կը կոչուի Աստուածաշունչ: Աստուածաշունչը կը խօսի Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած մեծ սիրոյն մասին: Այս ճշմարտութիւնը արտայայտուած է որպէս սիրոյ լաւագոյն արձանագրութիւնը, ինչպէս բարեկամս զայն կը կոչէ: Անիկա կը գտնուի Յովհ. 3. 16-ի մէջ. «Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ անգամ տուաւ իր Միածին Որդին, որպէսզի ով որ հաւատայ Անոր չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը»:

Աստուած մեզ կը սիրէ այնպիսի սիրով մը, որ ոչ մէկ ուրիշ մարդ կրնայ սիրել նոյնպէս: Ան ցոյց տուաւ այդ սէրը, երբ Իր Որդին՝ Քրիստոսը աշխարհ դրկեց, որ մեր Փրկիչը ըլլայ: Ան նաեւ մեր լաւագոյն ընկերակիցն է, որ կրնանք ունենալ:

Բաց Աստուածաշունչդ եւ աւելի լաւ սորվէ՛ Անոր մասին:

**Որքան շատ կարդանք Աստուածաշունչը, այնքան աւելի պիտի սիրենք անոր հեղինակը:**





Երկուշաբթի  
15 Փետրուար

**Մեծնալ Ցափ  
Մէջ**

Կարդա՛  
Սաղմ. 119. 65-80

Նպաստաւոր եղաւ  
ինձի, որ տառա-  
պեցայ, որպէսզի քու  
կանոններդ պահեմ:  
—Սաղմ. 119. 71

ԱՍՏՈՒՆԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՅ  
■ Ղեւտ. 7-9  
■ Առակաց 16. 12-21



**Կ**ին մը, որ իր 40 տարիներու ամուսինը անակնկալօրէն կը կորսնցնէ արտի տագնապով, կ'ըսէ, թէ այդ կորուստին հետեւանքը եղող վիշտը պատճառ դարձած էր, որ ինք աւելի արժէք տար սիրոյ: Երբ ան կը լսէ վիճող զոյգեր, կ'ըսէ անոնց. «Ժամանակ պէտք չէ ունենաք նման բաներու»: Ան կը շեշտէ, թէ վատնուած ժամերը մեր ամբողջ կեանքի ընթացքին աւելի թանկաւին կը նկատուին, երբ կը զգանք, որ կարելի չէ գանոնք կրկնել:

Վիշտը յաճախ կը փոխէ մեր հայեցակէտը կեանքի հանդէպ: Հին խօսք է, սակայն շիտակ, երբ կ'ըսուի, թէ մեր դիրքը վիշտին հանդէպ կա՛մ կը դառնացնէ մեզ կամ աւելի լաւ կ'ընէ: Յատկանշական խօսքով մը Սաղմոսերգուն Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնէ իր ունեցած մէկ դժուարին փորձառութեան համար, ու կ'ըսէ. «Քանի տառապած չէի, կը մոլորէի՝ բայց հիմա քու հրամաններդ կը պահեմ... նպաստաւոր եղաւ ինձի, որ տառապեցայ, որպէսզի քու կանոններդ պահեմ» (Սաղմ. 119. 67, 71):

Ձենք գիտեր, թէ ինչ էր Սաղմոսերգունին տառապանքը, բայց անոր դրական արդիւնքը կ'ըլլայ հնազանդիլ Տէրոջ եւ զգալ Անոր խօսքին ծարաւը: Այս ճշմարտութիւնը կրնանք գործածել միխթարելու համար գանոնք, որոնք վշտացած են: Փոխարէնը, Տէրոջ կարեկից սիրտէն մեզի ուղղած խօսքն է եւ իր բուժիչ ձեռքն է, որ մեզի միխթարութիւն կ'ըլլայ: Երբ վշտանանք, աւելի կը զգանք ամէն բանի մեռնիլը, քան աճիլը: Սակայն, երբ Աստուած իր սիրող բազուկները փաթթէ մեր շուրջ, մենք կ'ունենանք վատահուժիւնը իր հայրական հոգածութեան:

**Տէրոջ աչքերուն քանկարծէք է իր  
բարեպաշտներուն մահը - Սաղմոս 118. 15:**





Երեքշաբթի  
16 Փետրուար

## Ճշմարտութիւն է

Կարդա՛  
Եփես. 4. 1-6

(Կ'աղօթեմ) որպէսզի բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս Դուն՝ Հայր՝ իմ մէջս ես ես քու մէջդ:  
—Յովն. 17. 21

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԵՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Մարկոս 7-11  
■ Առակաց 16. 22-33



**Ի**ր Արմատներ դիւցազներդու-  
թիւնը գրելու ընթացքին, Ալէքս  
Հէյլի Հետազօտութեան Համար  
նաւով Ափրիկէէն գերի առնուած  
նախահայրերուն ճամբորդութիւնը  
կը կատարէ, սկսելով Մոնրովիայէն  
մինչեւ Ֆլօրիտա: Ան այս ճամբոր-  
դութիւնը կը ստանձնէ աւելի լաւ  
հասկնալու իր նախահայրերուն տա-  
ռապանքը, որոնք որպէս շղթայա-  
կապ գերիներ կը բերուէին Ամերիկա:  
Հէյլի կ'իջնէ նաւուն յատակը  
եւ գրեթէ կիսամերկ կը փորձէ  
քնանալ կարծր տախտակամածին  
վրայ: Երբորդ տանջալի գիշերէն ետք,  
չի կրնար տոկալ եւ վեր կ'ելլէ ու  
կը վերադառնայ իր խուցը: Բայց  
ան, ալ զգացած էր, թէ կրնար գրել այն տաժանելի  
փորձառութեան եւ ահաւոր տառապանքին մասին, ուրկէ  
իր նախահայրերը անցած էին:

Ըսել, թէ կը հաւատանք Յիսուսի՝ երկրորդ անձը Սուրբ  
Երրորդութեան, որ կը նոյնացնէ ինքզինք մեզի, Հետ  
մէկ բան է: Բայց բաւական տարբեր բան է զգալ օրհնաբեր  
փորձառութիւնը իրեն նմանելու: Այսուհանդերձ, պէտք  
չունինք դիմելու ծայրայեղ միջոցներու, նոյնանալու  
Համար Քրիստոսի, որպէսզի կարելի ըլլայ ըմբռնել խաչի  
այն տառապանքը, որ Ան կրեց մեր մեղքերու թողութեան  
համար (Հռովմ. 5. 10-11):

Աստուածաշունչի ընթերցումներ, աղօթք եւ Հաղորդու-  
թեան սեղանի մասնակցութիւն, կրնան օգնել մեզի որոշ  
չափով գիտակցելու եւ զգալու մեր Փրկչին տառապանքը,  
որուն մէջէն Ան անցաւ: Սակայն, անջատ մեր ինչ տեսակի  
զգացումներ ունենալէն, մեր միութիւնը Անոր հետ իրակա-  
նութիւն մըն է, որուն պէտք է կառչինք հաւատքով:

**Արդարը պիտի ապրի հաւատով,  
ո՛չ թէ զգացումով:**





Հորեքշարթի  
17 Փետրուար

**Միացի՛ր  
Երգչախումբին**

Կարդա՛  
Սաղմոս 89. 1-8

Տէրոջ կարեկցութիւնը  
յաւիտեան պիտի  
երգեմ, քու ֆաւատար-  
մութիւնդ իմ բերնովս  
սերունդէ սերունդ  
պիտի գիտցնեմ:  
—Սաղմոս 89. 1

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՅ  
■ Սաղմոս 18-20

**Ե**րբեք չեմ մոռնար, երբ առա-  
ջին անգամ տեսայ Պրուքլին  
Թէպլընէքըլ կոչուած երգչախում-  
բը, երգահանդէսի մը առիթով:  
Շուրջ 200 հոգիներէ կազմուած այդ  
երգչախումբի անդամները փրկուած-  
ներն էին Պրուքլին քաղաքի մէջ  
դեզերող գինեմոլներէ եւ բարոյա-  
պէս ինկած կիներէ, որոնք իրենց  
սիրտերը բացած էին Աստուծոյ:  
Անոնց դէմքերը կը փայլէին հոսող  
արցունքներէ, երբ անոնք կ'երգէին  
իրենց կեանքերուն մէջ կատարուած  
Աստուծոյ թողութեան եւ փրկու-  
թեան հրաշքին մասին:

Երբ կը դիտէի զանոնք, պահ  
մը ես ալ ինքզինքս փոխուած

զգացի: Որովհետեւ ես փրկուած էի, երբ տակաւին միայն  
5 տարեկան մանուկ մըն էի, չէի զգացած նոյնչափ խոր  
երախտազիտութիւն, որ այդ երգչախումբի անդամները  
կ'արտայայտէին: Ես փրկուած էի ո՛չ այնքան կարեւոր  
բաներէ, որոնց մասին կրնայի վկայել՝ ինչպէս քոյրս ծեծել  
եւ այլ մանկական բաներ:

Սակայն ետքը, Սուրբ Հոգին ինծի յիշեցուց, որ եթէ  
փրկուած չըլլայի փոքր տարիքիս, ո՞վ գիտէ կեանքի պայ-  
մանները ո՛ւր հասցուցած պիտի ըլլային ինծի այսօր: Եւ  
ինչ տեսակ կործանարար ճամբաներու մէջ դեզերած պիտի  
ըլլայի: Ինծի համար յստակ եղաւ, որ ես ալ մեծապէս պար-  
տական եմ իր շնորհքին: Կարեւոր չէ միայն մեր ազատուած  
ըլլալը, այլ մեր ի՛նչ բանէ ազատուած ըլլալն է, որ մեր  
հոգիները արժանի կը դարձնէ փրկութեան երգին միանալու:  
Ոեւէ մէկը, որ Քրիստոսը ընդունած է որպէս իր Փրկիչը,  
կրնայ միանալ այդ երգչախումբին. «Տէրոջ  
կարեկցութիւնները յաւիտեան պիտի երգեմ» (Սաղմ. 89. 1):

**Փառարանութիւնը կը հոսի ազատօրէն  
փրկուածներու երգչախումբէն:**







Հինգշաբթի  
18 Փետրուար

**Լինքընի  
Վկայութիւնը**

Կարդա՛  
Ղուկաս 24. 13-27

Միթէ Քրիստոս պէտք  
չէ՞ր այսպէս  
չարչարուէր ու մտնէր  
Իր փառքը:  
—Ղուկաս 24. 26

ԱՍՏՈՒՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Ղեւո. 10-12  
■ Առակաց 17. 1-14



**Ա**բրահամ Լինքըն, մարդկային  
ամենախոնարհ խաւէն սկսելով  
հասաւ քաղաքական բարձրագոյն  
գորութեան: Միացեալ Նահանգներու  
քաղաքացիական պատերազմի մութ  
օրերուն, ան ծառայեց որպէս  
կարեկցող եւ վճռակամ նախագահ  
մը: Վհատութիւնը, մտային եւ հոգե-  
կան ցաւեր, յաճախ իրեն բաժինը  
կ'ըլլային: Սակայն, յուզական այդ  
տակալի տառապանքները, որ ան կրեց,  
զինք աւելի մօտեցուցին Քրիստոսի,  
Զայն հաւատքով ընդունելու:

Լինքըն առիթով մը Իլինոյի իր  
քաղաքակիցներուն կ'ըսէ. «Երբ ես  
ձգեցի Սփրինկֆիլտ քաղաքը,  
խնդրեցի ժողովուրդէն, որ աղօթեն  
ինձի համար: Այն ատեն ես հաւատացեալ մը  
չէի: Երբ  
զաւակա մեռաւ, որ ամենածանր փորձութիւնն էր  
կեանքիս, ես տակաւին հաւատացեալ մը  
չէի: Սակայն, երբ տեսայ  
հազարաւոր գերեզմանները մեր  
զինուորներուն, այն ատեն  
էր, որ ես ինքզինքս նուիրեցի Քրիստոսի:  
Ես կը սիրեմ Յիսուսը...»: Այսպէս  
երբեմն կեանքի ամենէն ցաւալի  
ողբերգութիւնները մեզ կը տանին  
աւելի խորապէս ճանչնալու եւ  
ընդունելու մեր Փրկիչը:

Երբ երկու մարդիկ կը քայլին  
էմմաուսի ճամբուն վրայ, յուսախաբուած  
էին Նազովրեցի Յիսուսի անիմաստ  
սպաննութենէն: Ապա, օտարական մը  
իրենց միանալով, յիշեցուց Սուրբ  
Գրային իրողութիւններ՝ տառապող  
Մեսիայի մասին (Ղուկ. 24. 26-27):  
Այդ օտարականը՝ Յիսուս  
Ինքն էր, եւ Անոր խօսքերը անոնց  
միախառնութիւն եղաւ:

Հոգեկան տառապանքը միջոց  
մըն է ցոյց տալու Յիսուսը, որ  
կրնայ մեր ցաւին բաժնեկից  
դառնալ եւ անիմաստ թուող  
տառապանքներուն իմաստ եւ  
նպատակ տալ:

**Տառապանքը, մեզի կ'ուսուցանէ այն բաները, որ  
ոչ մէկ այլ միջոց կրնայ:**





Ուրբաթ  
19 Փետրուար

**Քաջութիւն՝  
Ապրիլ՝ Չայն**

Կարդա՛  
Բ. Տիմոթ. 1. 6-12

Վասնզի Աստուած  
մեզի երկշնորութեան  
հոգի չտուաւ, հապա  
գորութեան:  
-Բ. Տիմոթ. 1. 7

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՆ  
■ Ղեւտ. 13-15  
■ Առակաց 17. 15-28



**Ք**աջութիւնը կարեւոր առաքի-  
նութիւն մըն է, որուն պէտք  
ունինք Աստուծոյ գործը կատարե-  
լու համար: Այս իրողութիւնն է, որ  
չեշտեցի ձըմէյքայի մէջ, եկեղեցիի  
պաշտամունքի մը ընթացքին:  
Ժողովուրդին ըսի, թէ ըստ Բ.  
Տիմոթ. 1. 7-ի, Աստուած մեզի երկ-  
շնորութեան հոգի չտուաւ, հապա  
գորութեան հոգի մը:

Մի քանի օրեր ետք, ես կեցած  
էի 35 ոտք բաձրութեան մը վրայ:  
Պէ՛տք էր ցատկէի դահլիճէն վար  
ջուրին մէջ: Այն պատահիները, որ  
ինձի հետ էին, ըսին «Այո՛»:  
Անոնցմէ շատեր արդէն ըրած էին  
այդ մէկը: Անոնցմէ մէկը ըսաւ.  
«Եթէ չցատկես դուն, չես կրնար իրաւունք ունենալ  
քաջութեան մասին քարոզելու»: Ես գիտեմ, թէ երբեմն  
խիզախութիւնը ամբոխին հետ կապ ունեցող բան մը չէ,  
սակայն այս անգամ ցոյց տալու համար խիզախութիւնս,  
ցատկեցի:

Քաջութիւնը լաւ տեսութիւններ կրնայ շինել, սակայն  
երբեմն զայն գործնականի դնելը օգնութեան կը կարօտի:  
Որպէս հաւատացեալներ, շատ մը առիթներ կան դուրս  
գալու մեր հանգիստի վայրէն եւ ծառայելու՝ Աստուծոյ:  
Երբ չունինք քաջութիւն, պէտք ունինք յիշողմի Աստուծոյ  
այն խոստումին, որ արձանագրուած է Բ. Տիմոթէոսի մէջ  
եւ պէտք ունինք ուրիշներու քաջալերութեան:

Թերեւս պէտք ունիս մէկու մը, որ ըսէ քեզի, թէ որպէս  
կամաւոր ծառայես եկեղեցիիդ մէջ: Քա՛ջ եղիր Յիսուսի  
համար: Երբեմն քաջութեան այդ առաջին քայլը  
կ'առաջնորդէ երկար շրջանի ծառայութեան՝ մեր մեծ  
Աստուծոյն:

**Քաջութիւնը կը հետևի, երբ հաւատքն է որ  
կ'առաջնորդէ:**





Շաբաթ  
20 Փետրուար

**Սպառնալիք եւ  
Ազդարարութիւններ**

Կարդա՛  
Բ. Օրինաց 4. 32-40

Պահէ՛ Անոր կանոն-  
ներն ու պատուիրան-  
ները... որպէսզի  
բարիք ըլլայ քեզի եւ,  
քեզմէ ետք՝ քու  
որդիներուն:  
—Բ. Օրինաց 4. 40

ԱՍՏՈՒԾՆԵՐՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Դեւ. 16-18  
■ Առակաց 18. 1-12



**«Ա**ստուած երբեք չի սպառնար, Սատանան երբեք չազդարարներ», ըսած է Օավալտ Չէմպլըրը: Մենք երբեմն այս երկու բառերը հոմանիչի պէս կը գործածենք: Բայց Չէմպլըրը նկատած է սկզբունք մը, որ զանոնք իրարմէ տարբեր կ'ընէ: Սպառնալիքները մարդիկը արթնցնելու եւ պարտադրելու համար է, ընելու այն, ինչ, որ իրենց համար լաւագոյնն է: Այլ խօսքով, սպառնալիքներ ոյժի տիրապետութիւն կը հետապնդեն, մինչդեռ ազդարարութիւններ կը ծառայեն պաշտպանելու մարդիկը գալիք վտանգէն:

Սատանան կ'ուզէ, որ խորհինք Աստուծոյ սիրոյ ազդարարութեանց վրայ, որպէս գէշ սպառնալիք: Բայց ան կը սխալի: Ըստ Չէմպլըրի, «Ազդարարութիւն մը մեզ ձերբակալող խօսք մըն է, Աստուծոյ կարեկցութենէն եւ համբերութենէն բխած»: Այս ճշմարտութիւնը հաստատող շատ մը պատուէրներ կան Աստուծոյ խօսքին մէջ՝ սա ձեռով ըսուած. «Որպէսզի բարիք ըլլայ քեզի» (Բ. Օրինաց 4. 40, 12. 28): Իրենց սիրոյ յարաբերութեանց մէջ, մարդիկ յաճախ գիրար կ'ազդարարեն, զգուշացնելու սխալ վերաբերմունքներու վտանգաւոր հետեւանքներէն: Իսկ տկար եւ վատաւոյժ յարաբերութեանց ընթացքին, մարդիկ կը սպառնան իրարու, գիրար վախցնելու եւ պատժելու վճռակամութեամբ, երբ դիմացինը անորամբանական պահանջներու համեմատ չապրի: Մինչ կը հաղորդակցինք ուրիշներու հետ, լաւ է նկատի ունենալ մեր տուած խորհուրդին եւ պատուէրներուն բնոյթը: Կը սպառնա՞նք մեր բարօք վիճակը սպահովելու, թէ անկեղծ սիրով կը զգուշացնենք զանոնք գալիք վտանգներէ:

**Ազդարարութիւններ սիրոյ արտայայտութիւն են, իսկ սպառնալիքներ տիրապետութեան կը միտին:**





Կիրակի  
21 Փետրուար

**Յաւիտենական-  
նորութեանց Միջեւ**

Կարդա՛  
Եբր. 11. 8-16

Ասոնք բոլորն ալ մեռան ճաշատեղով՝ առանց ստացած ըլլալու խոստումները, բայց ճեղուկ տեսան զանոնք եւ ողջունեցին: –Եբր. 11. 13

ԱՍՏՈՒԱՆՈՒՄԵՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒԱՆ ՄԷՋ  
■ Դեւտ. 19-21  
■ Առակաց 18. 13-24



**Հ**եռատեսիլի վրայ ցուցադրուած կտրուած Հեռքեր ժապաւէնին մէջ, կովարած մը բարեկամի մը յուղարկաւորութեան, թէեւ քիչ մը անհանգիստ վիճակի մէջ, բայց միտիթարելու համար կ'ըսէ. «Բոլորս ալ ճամբորդներ ենք այս աշխարհի մէջ, սկսելով նուրբ խոտերէն մինչեւ մեծ միթերանոցները, ծնունդէն մինչեւ մահ, մենք կը ճամբորդենք յաւիտենականութեանց միջեւ»:

Իմաստով մը շիտակ է: Մենք ճամբորդներ ենք՝ ուխտաւորներ աշխարհի մը մէջ, որ մեզի չի կրնար տեւական խաղաղութիւն եւ հանգիստ շնորհել: Եւ քանի մէկ յաւիտենականութիւն կայ, ուրեմն անցեալի յաւիտենականութենէն կը ճամբորդենք դէպի ապագայ յաւիտենականութիւն, սպասելով տունի մը խոստումներուն եւ այն յոյսին, որ յաւիտենական է – խոստումներ, որոնք տակաւին պիտի իրականանան:

Մաքառումի եւ յուսախաբութեան շրջաններուն, երբ մեր այս կեանքի ուխտագնացութեան ընթացքը կրնայ դժուարութիւններու հանդիպիլ, օգտակար է յիշել, որ թէեւ մենք ուխտաւորներ ենք յաւիտենականութիւններու միջեւ ճամբորդող, ունինք Փրկիչ մը, որ Տէրն է յաւիտենականութեան: Ան տուած է Իրեն հետ ըլլալու եւ սպրելու յաւիտենական կեանքի խոստումը: Այս խոստումին է, որ կ'ակնարկէ հեղինակը Եբր. 11. 13-ի մէջ:

Մեր կեանքը վայրկեաններու, ժամերու եւ օրերու մէջ սահմանուած շրջան մըն է, որուն ընթացքին հաւատքով կը նայինք Բրիտանիա: Օր մը, այդ յաւիտենականութեան խոստումը պիտի իրականանայ: Եւ այդ յոյսն է, որ մեզի նայիլ կու տայ այս կեանքէն անդին՝ գալիք ուրախութեան:

**Ժամանակի եւ յաւիտենականութեան համար,  
Յիսուսն է, որուն միայն պէտք ունինք:**





Երկուշաբթի  
22 Փետրուար

**Իր Զօրաւոր Բազուկներուն մէջ**

Կարդա՛  
Եսայի 46. 1-11

Ես ստեղծեցի ու ես պիտի կրեմ... եւ ձեզ ազատեմ:  
—Եսայի 46. 4

ԱՍՏՈՒԱԾՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Դեւ. 22-24  
■ Առակաց 19. 1-15

ամենէն տկար պահուն, ան ինքն իրեն կը յիշեցնէ ըսելով: «Ահա՛ ասոր համար Քրիստոսը ունիս»:

Դարեր առաջ, մեր Երկնաւոր Հայրը ապահովութեան պատգամ մը տուաւ ծանրաբեռնուած մարգարէին, որուն մենք պէտք ունինք այսօր. «Ինծի՛ մտիկ ըրէք, ո՛վ Յակոբի տունը... որ որովայնէն ի վեր կը շալկեմ եւ արգանդէն ի վեր կը կրեմ: Մինչեւ ձեր ծերութիւնը ես նոյնն եմ, մինչեւ ձեր ալեւորութիւնը ես ձեզ պիտի կրեմ: Ես ստեղծեցի ու ես պիտի վերցնեմ: Ես պիտի կրեմ եւ ձեզ ազատեմ (Եսայի 46. 3-4):

Ինչ քաջալերական երեւոյթ երկնային շնորհքի: Ան կը յիշեցնէ Բարի Հովիւը իր տկար գառնուկը շալկած իր ուսերուն վրայ: Երիտասարդ ըլլանք կամ տարեց, գիտենք թէ Աստուած իր սիրով կը կրէ մեզ: Տկար եւ բեռնաւորուած, կրնանք կռթնիլ Անոր յաւիտենական բազուկներուն եւ յիշեցնել մենք մեզի. «Ահա՛ ասոր համար Քրիստոսը ունիմ»:

**Դուք կրնաք հանգչիլ Յիսուսի բազուկներուն մէջ:  
Ան երբեք թռչլ պիտի չտայ որ վար իյնաք:**

**Մ**իտիոնար գոյգ մը հերոսաբար կը ծառայէն Արեւմտեան Աֆրիկէի մէջ, աւելի քան 40 տարիներ: Կինը, երբ ա՛յ տարիքը կ'առնէ, կը սկսի կորսնցնել իր մարմինը կառավարելու կարողութիւնը: Երբեմնի Աստուծոյ այդ այնքան զօրաւոր ծառան, որ աներեւակայելիօրէն ծանր ճնշումներու տակ, կրցած էր տոկալ եւ իր ծառայութիւնը յառաջ տանիլ, յանկարծ անօդնական վիճակ մը ստացած էր, անկարող՝ նոյնիսկ հագուստին կոճակը կոճկելու կամ գալաթ մը ջուր շրթունքին տանելու: Այդ բոլորէն ետք, ան երբեք դժկամութիւն ցոյց չի տար եւ ո՛չ իսկ ինքն իր վրայ կը խղճայ: Իր ամենէն տկար պահուն, ան ինքն իրեն կը յիշեցնէ ըսելով:





Երեքշաբթի  
23 Փետրուար

**Ծաղկեփունջեր**

Կարդա՛  
Բ. Կորնթ. 2. 14-17

Մենք՝ Աստուծոյ  
նամար Քրիստոսի  
անոյշ հոտն ենք:  
-Բ. Կորնթ. 2. 15

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՑ  
■ Մարկոս 12-16  
■ Առակաց 19. 16-29



**Ա**ռաւօտ մը, երբ կը դիտէի մեր պատուհանին տակ հին նստարանին վրայ դրուած ծաղկամանին մէջի ծաղիկները, նկատեցի թէ թառամած էին, տերեւները թոշմած եւ ծաղիկներուն թերթերը սկսած թափիլ: Տարօրինակ զուգադիպութեամբ մը, այդ առաւօտ կարդացած էի բանաստեղծութիւն մը Կեանք խորագրով: Ոտանաւորին մէջ բանաստեղծը կը խօսի ծաղկեփունջի մը մասին, որ ինք կազմած էր, որպէսզի վայելէր ծաղիկներուն անոյշ բոյրը: Սակայն, ան կ'ըսէ, «Շատ չանցած ժամանակը մօտեցաւ եւ կէսօրուան տաքը գողցաւ անոնց թարմութիւնը եւ անոնք թառամեցան ափիս մէջ»:

Ծաղիկներուն կորուստը պատճառ կը դառնայ, որ բանաստեղծը տեսնէ «ժամանակին ազնիւ զգուշացումը»: Ան կ'ըսէ. «Ան այնպէս ազդեց մտքիս վրայ, որ մտածել տուաւ ինծի իմ ճակատագրական օրուան մասին, միեւնոյն ատեն, քաղցրացուց կասկածը»: Այդ բոլորէն ետք, հակառակ անոր, որ թառամած ծաղիկները բանաստեղծին կը յիշեցնէին իր մահը, ան այդ փոխաբերութեան մէջ կը գտնէ բան մը, որ կը քաղցրացնէ իր խորհուրդները: Ան կ'եզրակացնէ. «Մնա՛ք բարով, սիրելի՛ ծաղիկներ, քաղցրութեամբ անցուցէք ձեր ժամանակը: Յարմարեցէ՛ք, մինչ կ'ապրիք, բուրմունքի համար կամ զարդի, եւ մահէն ետք՝ դարմանումի համար: Ես կը հետեւիմ ուղղակի, առանց գանդատի կամ վիշտի, այնքան ատեն, որ իմ բուրումս լաւ եղած է: Չեմ մտահոգուիր, եթէ ան կարճ իսկ ըլլայ՝ քու բուրումիդ պէս»:

Մեր ժամանակը ո՛րքան ալ կարճ ըլլայ, կրնանք բուրել Քրիստոսի անոյշ հոտը ուրիշներու (Բ. Կոր. 2. 14-16):

**Աստուածապաշտ կեանք մը բուրմունք մըն է ուրիշները Քրիստոսի քաջելու:**





Չորեքշաբթի  
24 Փետրուար

## Աստուած Բարի է

Կարդա՛ր  
Ծննդոց 3. 1-7

Տէրը բարի եւ ուղիղ է, ճետեւաբար մեղաւորներուն կը սորվեցնէ ճամբան: –Սաղմոս 25. 8

ԱՍՏՈՒԾԱԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 21-23



**«Ա**ստուած բարի է ամէն ատեն, ամէն ատեն Աստուած բարի է» խօսքը յաճախ կը կրկնուի շատերու կողմէ: Երբեմն հարց կ'ըլլայ ինձի, թէ արդեօք անոնք իսկապէս կը հաւատա՞ն անոր, կամ կ'անդրադառնա՞ն, թէ ճիշդ ի՞նչ կ'ըսեն: Անկեղծ ըլլալու համար, պէտք է ըսեմ, որ ես երբեմն կը կասկածիմ Աստուծոյ բարութեան, մանաւանդ երբ կը զգամ, թէ կարծես Աստուած չի լսեր կամ չի պատասխաներ իմ աղօթքներուս: Կ'ենթադրեմ, որ եթէ ուրիշներ ալ անկեղծ գտնուին, անոնք ալ պիտի զգան ինձի պէս:

Օձը կասկած մը դրաւ Եւայի մտքին մէջ, Աստուծոյ բարի ըլլալուն եւ իրմով հետաքրքրուած ըլլալուն մասին: Օձը ըսաւ, «Որովհետեւ Աստուած գիտէ, թէ այն օրը, երբ անկէ ուտէք՝ (պտուղէն) ձեր աչքերը պիտի բացուին եւ աստուածներու պէս պիտի ըլլաք՝ բարին ու չարը գիտնալով» (Ծննդ. 3. 5): Սատանան փորձեց համոզել Եւան հաւատալու, թէ Աստուած իրմէ կը պահէր եւ չէր տար իրեն այն, ինչ որ իսկապէս բարի էր – աւելի գիտութիւն:

Դուն ալ կը զգաս, թէ Աստուած չի պատասխաներ աղօթքներուդ: Դուն ալ երբեմն փորձութիւնը կ'ունենանա՞ն կասկածելու իր բարութեան: Երբ ես այդպէս զգամ, ես ինձի կը յիշեցնեմ, թէ իմ կացութիւնս ջերմաչափը չէ Աստուծոյ սիրոյն եւ բարութեան, այլ խաչն է: Ան ցոյց տուած է իր որքան բարի ըլլալը, իր Որդին՝ Յիսուսը զոհաբերելով խաչին վրայ մեր մեղքերուն համար: Մենք չենք կրնար վստահիլ մեր զգացումներուն: Բայց օրէ օր, երբ իրեն աւելի վստահինք, պիտի սկսինք հաւատալ վստահութեամբ, թէ Աստուած ամէն ատեն բարի է:

**Պարագաները չեն Աստուծոյ սիրոյն եւ բարութեան ջերմաչափը, այլ Յիսուսի խաչն է:**





Հինգշաբթի  
25 Փետրուար

**Օտարներուն  
Ազնուութիւնը**

Կարդա՛  
Փիլիպ. 2. 1-8

Մի՛ մոռնաք հիւրասիրութիւնը, որովհետեւ ոմանք անով հրեշտակներ հիւրասիրեցին առանց գիտնալու: —Եբր. 13. 2

ԱՍՏՈՒՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՁ  
■ Դեւ. 25-27  
■ Առակաց 20. 1-10



**Ե**րբ թռիչքով մը Ինտոնիզիա կը մեկնէի, օդանաւի սպասարկուն սկսաւ թեթեւ ճաշ մը բաժնել ճամբորդներուն: Թռիչքս չառած, օդակայանը արդէն ճաշած էի, ուրեմն հրաժարեցայ ճաշ առնելէ եւ միայն զովացուցիչ մը ուզեցի: Ինծի անձանօթ Իտոնիզիացի մը, որ քովս նստած էր, կարծես մտահոգուած էր իմ մասիս: Մարդը հարցուց, թէ արդեօք անհաշի՞ստ էի: Փորձեցի վստահեցնել, թէ բան մը չունէի: Քիչ վերջ հարցուց, արդեօք ճաշը չէի սիրած: Իրեն պատասխանեցի, թէ պարզապէս անօթի չէի: Յետոյ աւելի զարմացուց զիս, երբ փորձեց իր ճաշէն ինծի բաժին հանել, այն համոզումով, որ եթէ փորձեմ շատ համով պիտի գտնեմ զայն: Պահ մը զգացի, թէ այդ օտար մարդը իսկապէս անկեղծ էր եւ ազնիւ՝ իր վերաբերմունքին մէջ:

Կ'ապրինք անձնակեդրոն աշխարհի մը մէջ, ուր վարժուած ենք կեդրոնանալ մեր անձնական հարցերուն վրայ, ամէն բանէ առաջ: Այսպիսի ազնիւ վերաբերմունք մը երբեք ակնկալելի չէր: Այդ օտար մարդուն պարզ շարժումները ցոյց կուտային անձ մը, որ տարբեր սիրտ ունէր եւ տարբեր արժէքներու չափանիշ: Որպէս Քրիստոսի հաւատացող հետեւորդներ, մենք կանչուած ենք նման օրինակելի կեցուածք մը ցոյց տալ մեր շուրջ գտնուող մարդոց, որ կրնայ հակադիր նկատուիլ մեր ներկայ ընկերային կեանքին (Փիլիպ. 2. 1-8):

Եբրայեցիս 13 .2-ը կ'ըսէ. «Մի՛ մոռնաք օտարները հիւրասիրելէ, որովհետեւ ոմանք անով հրեշտակներ հիւրասիրեցին առանց գիտնալու»: Ի՛նչ լաւ ձեւ մըն է Քրիստոսը ազնուութեամբ ներկայացնելու ուրիշներու:

**Ազնուութիւնը նուէր մըն էր, որ ոեւէ մէկը կրնայ մատուցանել:**







Ուրբաթ  
26 Փետրուար

**Հատուցում  
Կատարել**

Կարդա՛ր  
Ղուկաս 19. 1-9

Ան իր գործած...  
յանցանքին վնասը  
լման թող  
հատուցանէ:  
—Թուոց 5. 7

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՅ  
■ Թուոց 1-3  
■ Առակաց 20. 11-20



գինք կը չարչարէր: Վերջը զղջացած էր եւ սկսած՝ դրամ  
դրկել մարդուն այրիին եւ անոր զաւակներուն: Լեզուա-  
գէտը որպէս խելագար արգելափակուած էր այդ հաստա-  
տութեան մէջ մինչեւ մահ, սակայն գտած էր գործնական  
ձեւ մը թեթեւցնելու ցաւը, որ ինք պատճառած էր գոհին  
պարագաներուն, միեւնոյն ատեն այդ մեծ բառարանին  
կազմութեան աշխատանքին իր բաժինը բերելու:

Երբ մաքսապետ Ջաքէոս լսեց Յիսուսի պատգամը շնորհքի  
մասին, ուզեց վերադարձնել բոլոր այդ դրամները, որոնք  
որպէս կաշառ ստացած էր մարդոցմէ եւ աւելին ուզեց  
տալ: «Տէ՛ր, ահա իմ ունեցածիս կէսը աղքատներուն կու  
տամ... եթէ մէկուն գրկանք ըրած եմ, չորեքսպտիկ կը  
հատուցանեմ», ըսաւ ան (Ղուկ. 19. 8): Շնորհքի Աւետարանը  
Ջաքէոսի գուլթը շարժած էր անոնց հանդէպ, որոնց գրկանք  
ըրած էր:

Անարդար եղա՞ծ ես մէկու մը հանդէպ: Ի՞նչ քայլեր  
պիտի առնես, որպէսզի հատուցում ըրած ըլլաս:

**Հատուցում կատարելը ցոյց կու տայ իսկական  
ապաշխարութիւն:**



**Օ** քաֆըրտ անդլերէն բառարանը  
խմբագրելու ատեն, ընդհանուր  
խմբագիրը յաճախ անհամար թիւով  
բառերու սահմանումներ կը ստանար  
բառարանին մէջ դնելու, լեզուագէտի  
մը կողմէ: Անոնք միշտ նամակա-  
տան ճամբով կու գային եւ խմբա-  
գիրը շատ հետաքրքիր էր անձամբ  
հանդիպելու անդլերէն լեզուի այդ  
հմուտ մարդուն: Ուրեմն կ'երթայ  
այցելութեան եւ մեծապէս կը  
զարմանայ ու կը ցնցուի, երբ կը  
տեսնէ թէ այդ մարդը արգելա-  
փակուած էր խենթանոցի մը մէջ:

Տարիներ առաջ, այդ լեզուագէտը  
ցնորքի վիճակի մը մէջ, մարդ մը  
մեռցուցած էր, խորհելով թէ ան  
գինք կը չարչարէր: Վերջը զղջացած էր եւ սկսած՝ դրամ  
դրկել մարդուն այրիին եւ անոր զաւակներուն: Լեզուա-  
գէտը որպէս խելագար արգելափակուած էր այդ հաստա-  
տութեան մէջ մինչեւ մահ, սակայն գտած էր գործնական  
ձեւ մը թեթեւցնելու ցաւը, որ ինք պատճառած էր գոհին  
պարագաներուն, միեւնոյն ատեն այդ մեծ բառարանին  
կազմութեան աշխատանքին իր բաժինը բերելու:

Երբ մաքսապետ Ջաքէոս լսեց Յիսուսի պատգամը շնորհքի  
մասին, ուզեց վերադարձնել բոլոր այդ դրամները, որոնք  
որպէս կաշառ ստացած էր մարդոցմէ եւ աւելին ուզեց  
տալ: «Տէ՛ր, ահա իմ ունեցածիս կէսը աղքատներուն կու  
տամ... եթէ մէկուն գրկանք ըրած եմ, չորեքսպտիկ կը  
հատուցանեմ», ըսաւ ան (Ղուկ. 19. 8): Շնորհքի Աւետարանը  
Ջաքէոսի գուլթը շարժած էր անոնց հանդէպ, որոնց գրկանք  
ըրած էր:

Անարդար եղա՞ծ ես մէկու մը հանդէպ: Ի՞նչ քայլեր  
պիտի առնես, որպէսզի հատուցում ըրած ըլլաս:

**Հատուցում կատարելը ցոյց կու տայ իսկական  
ապաշխարութիւն:**



Շարաթ  
27 Փետրուար

**ԳՆԵԼ ԱՌԱՆՑ  
ԴՐԱՄԻ**

Կարդա՛  
Յասյի 55. 1-5

Դարձուձէ՛ք ձեր  
ականջը, ու եկէ՛ք  
ինձի: Մտիկ ըրէ՛ք, ու  
ձեր անձը պիտի  
ապրի:  
—Յասյի 55. 3

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐԸ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՁ  
■ Թուոց 4-6  
■ Առակաց 20. 21-30

**Հ**արուստ մարդ մը կը գգայ, թէ իր գաւակը երախտագէտ ըլլալ սորվելու էր: Ասոր համար, ան կը դրկէ գայն, որ ժամանակի մը համար բնակէր աղքատ ագարակապանի մը ընտանիքին հետ: Ամիս մը ետք, գաւակը կը վերադառնայ: Հայրը կը հարցնէ. «Հիմա չե՞ս գնահատեր ինչ որ մենք ունինք»: Տղան պահ մը կը մտածէ եւ կ'ըսէ. «Ընտանիքը, ուր մնացի, շատ լաւ վիճակի մէջ էր: Անոնք իրենց ցանածէն կերակուր պատրաստելով, միասին կը ճաշէին եւ մեծ ուրախութեամբ կը վայելէին իրենց ճաշը: Եւ կարծես միշտ ժամանակ ունէին իրարու հետ ըլլալու»:

Այս պատմութիւնը մեզի կը յիշեցնէ, թէ դրամը չի կրնար ամէն բան գնել: Թէեւ մեր մարմինը կրնայ ապրիլ այն, ինչ որ դրամը կը գնէ, բայց դրամը չի կրնար պաշտպանել մեր հոգին, թաւամելէ: Յասյի 55-րդ գլուխին մէջ, կը կարդանք. «Ով բոլոր ծարաւածները, ջուրերուն եկէ՛ք, դրամ չունեցողներ, եկէ՛ք, գնեցէ՛ք ու կերէ՛ք» (Կ. 1):

Իսկապէս արդեօք կարելի՞ է գնել բան մը, որ մեզի կը յաղեցնէ առանց դրամի: Այո՛, Յասյի մարգարէ կ'ակնարկէ Աստուծոյ շնորհքին: Այս պարզեւր այնքան անգին է, որ որոշուած ո՛չ մէկ գին կարելի է յարմար նկատել: Եւ Ան որ այդ գինը վճարած է, Յիսուս Քրիստոս Ինքն է, իր խաչին մահով: Երբ ընդունինք Աստուծոյ հանդէպ ունեցած մեր հոգիին ծարաւը, խնդրենք իր թողութիւնը մեր մեղքերուն համար եւ ընդունինք Յիսուսի խաչին վրայ աւարտած գործը, գտած պիտի ըլլանք հոգեւոր սնունդ, որ պիտի գոհացնէ մեր հոգիները ապրելու յաւիտենապէս: Ան կոչ կ'ընէ. «Եկէ՛ք ինձի» (Յասյի 55. 3):

**Միայն Յիսուս՝ կենդանի ջուրը, կրնայ գոհացնել մեր ծարաւած հոգիները:**





Կիրակի  
28 Փետրուար

### Ինքնութեան Գողութիւն

Կարդա՛  
Մատթէոս 5. 21-26

Ո՛վ որ զուր տեղը  
բարկանայ իր եղբօր  
դէմ, արժանի պիտի  
ըլլայ դատաստանի:  
—Մատթէոս 5. 22

ԱՍՏՈՒՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Թուոց 7-9  
■ Առակաց 21. 1-10



**Տ**արիներ առաջ, երբ բարեկամի մը հետ նստած՝ ճաշարանի մը մէջ կը ճաշէինք, մարդ մը զիս «տղայ» կոչեց: Այդ բառը վիրաւորեց եւ բարկացուց զիս: Թերեւս հարց տրուի, թէ ինչո՞ւ: «Տղայ» բառը նախատական բառ մըն էր, որ սեւամորթ մարդոց կը գործածուէր Ամերիկայի մէջ, երբ անոնք տակաւին գերի կը նկատուէին: Այդպէս ընելով, ճերմակամորթ մարդիկ կ'ուզէին նուաստացնել զանոնք բնական մարդու աստիճանէն վար դասելով: Ուզեցի իմ կարգիս, ես ալ նախատական անուն մը տալ այդ մարդուն, սակայն մեր Տէրոջ կողմէ ըսուած խօսքեր, սպաննութեան եւ բարկութեան մասին, փոխեցին միտքս:

Երբ Յիսուս կը քարոզէր, չչակերտեց վեցերորդ պատուիրանը - «Սպաննութիւն մի՛ ըներ» - եւ տուգանքը օրինազանց ըլլալուն (Մատթ. 5. 21): Յետոյ, ամբողջական մեկնաբանութիւն մը կատարեց: Մէկը մեռցնել չի նշանակեր միայն անոր ֆիզիքական գոյութեան վերջ դնել: Դուն կրնաս անարգանքով մէկուն նուաստացնող անուն մը տալով մեռցնել փորձել, եւ նոյնչափով յանցաւոր նկատուիլ: Հրէական մշակոյթին մէջ, մէկու մը «սպուշ» կոչել (Հ. 22), հաւասար է այդ մարդը «խենթ» կոչելու: Այդ բառը կը գործածուէր ստորնացնելու եւ ցածցնելու համար մէկը: Մարդու մը անուն մը կախելը որքան որ նուաստացնող անարգանք մըն է անձին, նոյնքան ալ Աստուծոյ, որ Իր պատկերով ստեղծած է զայն:

Յիսուս սորվեցուց սիրել մեր դրացիները մեր անձին պէս: Եթէ հետեւինք Անոր ուսուցումներուն, յանցաւոր պիտի չնկատուինք ուրիշը անարգելէ:

**Վիրաւորել արարած մը կը նշանակէ վիրաւորել Արարիչը:**





Երկուշաբթի  
29 Փետրուար

**Լաւագոյն  
Բարեկամը**

Կարդա՛  
Յովհ. 15. 9-15

Ո՛չ մէկը ունի աւելի մեծ սէր, քան այն՝ երբ մէկը իր անձը կ'ընծայէ իր բարեկամներուն համար: —Յովհ. 15. 13

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒԼ ՄԷՆ  
■ Թուոց 10-12  
■ Առակաց 21. 11-21



**Ի**նծի համար պատիւ է, եւ կ'ուզեմ պահել այդ զգացումը, բայց միշտ չեմ յաջողիր: Ատիկա առանձնաշնորհումն է, որ կը լսեմ երբեմն տիկինէս, որ կ'ըսէ: «Դուն իմ լաւագոյն բարեկամն ես»: Թէեւ շատ կը սիրեմ զինք, սակայն երբեմն բաներ կ'ընեմ, որ «լաւագոյն բարեկամ» մը պիտի չընէր:

Իսկութեան մէջ, ո՛րքան ալ ջանք թափենք, չենք կրնար լաւագոյն բարեկամի մը այն բարձր չափանիշով ապրիլ: Յաճախ կը պատահի, կամայ կամ ակամայ թերանալ եւ քիչ մը նուաստացնել նոյնիսկ մեր այնքան շատ սիրած մարդիկը եւ փոքր անձնասիրութեամբ մը, արդելք կը ստեղծենք մեր եւ մեր ընկերակիցին միջեւ:

Որպէս հաւատացեալներ, կրնանք միխթարուիլ, գիտնալով, որ մենք բարեկամներ կոչուած ենք Աստուծոյ կողմէ: Եւ Ինք ճշմարիտ բարեկամ մըն է, որ երբեք չի վարանիր: Հոգեւոր երգ մը կայ «Աստուծոյ Բարեկամները» խորագրով, որ ճիշդ Աստուած եւ մարդ յարաբերութեան կ'ակնարկէ, ըսելով: «Ո՞վ եմ ես, Աստուած, որ դուն այդքան ուշադիր ես իմ վրայ»:

Աբրահամ կոչուած էր «Աստուծոյ բարեկամը», եւ այդ բարեկամութիւնը կապ ունէր անոր հաւատքին հետ (Բ. Կորնթ. 20. 7, Յակոբ 2. 23): Յիսուս ալ բացատրեց, թէ ինչպէս կրնանք ստանալ այդ անուանումը: Ան ըսաւ իր աշակերտներուն, «Դուք իմ բարեկամներս էք, եթէ ընէք ի՛նչ որ ես կը պատուիրեմ ձեզի» (Յովհ. 15. 14): Լաւ բարեկամ մը կը փնտռես: Չկայ աւելի լաւ բարեկամ մը քան Յիսուս Ինք, որովհետեւ Ան խոստացած է երբեք չթողուլ ու չլքել մեզ (Եբր. 13. 5):

**Յիսուս է միակ անսխալական բարեկամը, որ կարելի է գտնել:**





Երեքշաբթի  
1 Մարտ

**Երգող Թռչուն  
Մուրից Մէջ**

Կարդա՛  
Ղուկա 1. 67-80

Ծագող արեւը  
բարձրերէն այցելեց  
մեզ:  
—Ղուկա 1. 78

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՅ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Ղուկա 1-6  
■ Առակաց 21. 22-31



**Ա**րեւածագէն անմիջապէս առաջ, յաճախ կը լսենք երգող թռչուններու ճռուողիւնը՝ աւետելով արշալոյսը: Հակառակ տակաւին տիրող մասնակի մութին, գիտենք, թէ շուտով պիտի յայտնուին արեւուն փայլուն ճառագայթները: Նշանաւոր երգահան Ֆէնի Բրոզպի կոչուած էր «Մութին մէջ երգող թռչուն», որովհետեւ թէեւ աչազուրկ, բայց գրած էր երգեր, որոնց միջոցով շատեր ներշնչուելով Յիսուսի մօտեցած էին եւ զայն ընդունած՝ որպէս իրենց Տէրն ու Փրկիչը: Իր Մանկութեան, Ֆէնի երազ մը տեսած էր, որուն ընթացքին, իր առջեւ բացուած էր երկնային փառաւոր եւ գեղեցիկ տեսարան մը: Իր շատ մը երգերուն նիւթերը արդիւնքը եղած էին իր այդ տեսիլքին: Մինչեւ իր մահը, ան գրած է շուրջ 8000 հոգեւոր երգեր, ինչպէս «Պատմէ՛ ինծի Յիսուսի Պատմութիւնը» եւ «Փառք Ըլլայ Աստուծոյ» երգերը, որոնք տակաւին սիրուած են:

Երբ Զաքարիա մարգարէ զԱստուած փառաբանեց Մեսիայի գալուստը նախատեսելով, ան նաեւ յոյսով նայեցաւ հոգեւոր արշալոյսի մը ծագումին: Մէջբերելով Մաղաքիայի 4. 2 համարը, ան կը ծանուցանէ. «Ծագող արեւը, բարձրէն այցելեց մեզ, փայլելու խաւարի եւ մահուան շուքին մէջ բնակողներուն վրայ» (Ղուկ. 1. 78-79): Այս Մեսիան եկաւ երկիր, մեռաւ մեր մեղքերուն համար, յարութիւն առաւ, երկինք համբարձաւ եւ խոստացաւ վերադառնալ մեզի համար:

Դուն ալ կը զգաս՝ մթութեամբ եւ անորոշութեամբ շրջապատուած ըլլալ: Մի՛ յուսահատիր, աչքերդ յարէ՛ Բրիստոսի՝ Անոր բերելիք փայլուն ապագային:

**Հաւատացեալին համար օր մը այս երկրի մութ վիշտերը, պիտի փոխուին երկնային փայլուն երգերու:**





Չորեքշաբթի  
2 Մարտ

**Մենք եւ Ես**

Կարդա՛  
Եփես. 4. 25 - 5. 1

Ուստի թօթափելով  
ատելը՝ ճշմարտու-  
թիւնը խօսեցէք  
իրարու հետ, որով-  
հետեւ մենք իրարու  
անդամներ ենք:  
-Եփես. 4. 25

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 24-26



*ուստի թօթափելով  
ատելը՝ ճշմարտու-  
թիւնը խօսեցէք  
իրարու հետ, որով-  
հետեւ մենք իրարու  
անդամներ ենք:*  
«Ուստի թօթափելով  
ատելը, ճշմարտութիւնը  
խօսեցէք  
իրարու հետ, որովհետեւ  
մենք իրարու անդամներ  
ենք:  
...Ո՛չ մէկ վատ խօսք  
թող ելլէ ձեր բերանէն,  
հապա ինչ որ բարի է,  
չինութեան կարիքին  
համեմատ, որպէսզի  
չնորհ-  
տայ լսողներուն»  
(Եփես. 4. 25-29):

Երկու ծայրայեղութեանց միջեւ - վնասակար  
չփացնող եւ կործանիչ քննադատող - մենք պէտք է պարկեշտօրէն  
նպատակ ունենանք ճշմարտութիւնը լսելու, իրարու  
օգտակար ըլլալը միշտ նպատակ ընելով: «Մենք»ի հաւա-  
տացեալներու համախմբումին մէջն է որ կը ձեւաւորուի  
«Ես»ի անձնաւորութիւնը: Մեծ առանձնաշնորհում է եւ  
պատասխանատուութիւն հաւատացեալներու համար՝ իրարու  
օգնել, բացայայտելու համար իրենցմէ իւրաքանչիւրին  
ո՛վ ըլլալը Քրիստոսով:

**Ճշմարիտ քրիստոնէական համայնքը կազմակեր-  
պութիւն մը ըլլալէ աւելի մարգումի վայր մըն է:**

**Թ**ուսիկներս իրենց էլէքդրոնիկ  
խաղերու միջոցով ուզեցին ինծի  
ներկայացնել գնդակի սքանչելի եւ  
իրական խաղ մը: Խաղը սկսելէ  
առաջ, պէտք էր քիչ մը ինծի նմա-  
նող դէմք մը ստեղծէին: Շուտով  
կրցան պատկեր մը ստեղծել ինծի  
նմանող: «Հէ՛յ, մեծ հայրիկ, ասիկա  
դուն ես», ըսին:

Մեր ըմբռնումը մեր մասին,  
ընդհանրապէս կու գայ ուրիշներէն:  
Մեր ընտանիքի անդամներուն եւ  
բարեկամներուն կարծիքը կենսական  
է օգնելու համար մեզի՝ մենք մեր  
ինքնուրոյն շնորհքները գտնելու  
համար: Որպէս Քրիստոսի հետեւորդ-  
ներ, մենք պարտաւորութիւն  
ունինք, անկեղծ եւ  
գրական օժանդակութիւն բերելու  
իրարօգնութեան ճամբով: Այս տեսակէտով կրնանք  
օգտուիլ, հետեւելով Պօղոս Առաքեալի թելադրութեան:  
«Ուստի թօթափելով ատելը, ճշմարտութիւնը  
խօսեցէք  
իրարու հետ, որովհետեւ  
մենք իրարու անդամներ  
ենք:  
...Ո՛չ մէկ վատ խօսք  
թող ելլէ ձեր բերանէն,  
հապա ինչ որ բարի է,  
չինութեան կարիքին  
համեմատ, որպէսզի  
չնորհ-  
տայ լսողներուն»  
(Եփես. 4. 25-29):

Երկու ծայրայեղութեանց միջեւ - վնասակար  
չփացնող եւ կործանիչ քննադատող - մենք պէտք է պարկեշտօրէն  
նպատակ ունենանք ճշմարտութիւնը լսելու, իրարու  
օգտակար ըլլալը միշտ նպատակ ընելով: «Մենք»ի հաւա-  
տացեալներու համախմբումին մէջն է որ կը ձեւաւորուի  
«Ես»ի անձնաւորութիւնը: Մեծ առանձնաշնորհում է եւ  
պատասխանատուութիւն հաւատացեալներու համար՝ իրարու  
օգնել, բացայայտելու համար իրենցմէ իւրաքանչիւրին  
ո՛վ ըլլալը Քրիստոսով:

**Ճշմարիտ քրիստոնէական համայնքը կազմակեր-  
պութիւն մը ըլլալէ աւելի մարգումի վայր մըն է:**





Հինգշաբթի  
3 Մարտ

**Անկարելի  
Մարտահրաւէր**

Կարդա՛  
թուոց 14. 1-5, 26-27

Ըրէ՛ք ամէն ինչ՝  
առանց տրտունջներու  
եւ առարկութիւններու:  
–Փիլիպ. 2. 14

Աստուծոյ Մէջ  
Տարուաւ Մէջ  
■ Թուոց 13-15  
■ Առակաց 22. 1-8



**Հ**ողեւոր հովիւ մը, անկարելի  
թուող կոչ մը կ'ընէ իր ժողո-  
վուրդին.– 21 օր անցընել առանց  
տրտունջի (ժամանակի տեւողութիւն  
մը, որուն ընթացքին կարելի է նոր  
բնաւորութիւն մը զարգացնել): Յա-  
տուկ ապարանջաններ կը բաշխէ  
ժողովուրդին, որպէս յուշարար  
առանց տրտունջի կեանք ապրելու:

Այդ կոչով, շարժում մը սկսած  
է եւ միլիոնաւոր ապարանջաններ  
ցրուած՝ աշխարհի ամէն կողմ:

Աստուածաչնչական սկզբունքը՝  
«Ըրէ՛ք ամէն ինչ առանց տրտունջ-  
ներու եւ առարկութիւններու» (Փիլիպ.  
2. 14) կարեւոր բան մըն է: Հին Կտա-  
կարանի ժողովուրդը իրագեկ դար-  
ձաւ այս ճշմարտութեան, որովհետեւ անոնց շարունակական  
տրտունջները անապատին մէջ, պատճառ դարձած էին, որ  
անոնք դատապարտուէին Աստուծոյ կողմէ եւ թոյլ չտրուէր  
իրենց՝ մուտք գործել խոստացեալ երկիրը (Թուոց 14):

Ի՞նչ պէս կրնանք մեր մէջ զարգացնել առանց տրտունջի՝  
դրական կեցուածք մը, որ հաճելի ըլլայ Աստուծոյ:

• Մեր խորհուրդները կարգաւորելով (Հռովմ. 12. 2): Պէտք  
է խորհրդածել Աստուծոյ խօսքին վրայ եւ միշտ յիշել  
մեր օրհնութիւնները:

• Խոստովանելով մեր քննադատական ոգին եւ կրկին  
անգամ, փորձելով հնազանդիլ Աստուծոյ խօսքին, ամէն  
անգամ որ ձախողինք (Ա. Յովհ. 1. 9):

• Արձանագրելով Աստուծոյ օրհնութիւնը եւ մեր շուրջ  
եղող մարդոց օգնութիւնը: Հոգին պիտի զօրացնէ մեզ,  
երբ Անոր վստահինք (Յովհ. 14. 26):

Քանի որ Աստուած կ'օգնէ մեզի, ամէն ինչ առանց  
տրտնջալու ընել անկարելի կոչ մը չէ երբեք:

**Տրտնջացող հաւատացեալ մը ձեռով մը կը  
հակասէ իր հաւատքին:**





Ուրբաթ  
4 Մարտ

### Չսպումի Հրաշքը

Կարդա՛ր  
Ղուկաս 4. 1-13

Մենք կը սիրենք  
Զայն, որովհետեւ  
նախ Ան սիրեց մեզ:  
-Ա. Յովն. 4. 19

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐԸ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՆ  
■ Թուոց 16-18  
■ Առակաց 22. 9-16



**Ո**ւս մեծ վիպագիր Տոմարեանի Քարամագով Եղբայրները վէպին մէջ, Իւան Քարամագով կ'ակնարկէ «զսպումի Հրաշքին» - Աստուծոյ ընտրանքը Իր գորութիւնը զսպելու: Որքան աւելի Յիսուսը ճանչնալ փորձեմ, այնքան աւելի այդ նկատառութիւնը կը տպաւորէ զիս:

Հրաշքները որ Աստուան պահանջեց Յիսուսէն (Ղուկ. 4. 3, 9) եւ նշանները, որոնք Փարիսեցիները պահանջեցին (Մատթ. 12. 38, 16. 1) որպէս փաստ, մեծ եւ անկարելի բաներ չէին ամենակարող Աստուծոյ Համար: Սակայն աւելի զարմանալին այն է, թէ Ան մերժեց կատարել զանոնք Իր գորութիւնն ու յաղթանակը ցոյց տալու:

Աստուծոյ դրած շեշտը մարդկային ազատութեան վրայ այնքան բացարձակ է, որ մեզի կու տայ ազատութիւնը ապրելու այնպէս, որպէս թէ Ինք գոյութիւն չունի: Յիսուս գիտէր այս մէկը, երբ անապատին մէջ դիմադրաւեց փորձիչը: Ան Իր գորութիւնը զսպումի ենթարկեց:

Ես կը հաւատամ, որ Աստուած կը պնդէ այդպիսի զսպումի մը վրայ, որովհետեւ պահանջուած Հրաշքները պիտի չտան այն արդիւնքը, որ կ'ակնկալէ մարդոցմէ: Միայն սէրն է, որ կրնայ սիրոյ փոխազդեցութիւն ստեղծել: «Ես ալ երբ բարձրանամ երկրէն, բոլորդ ալ պիտի քաշեմ ինծի», ըսաւ Յիսուս (Յովհ. 12. 32): Ան ըսաւ այս խօսքը ցոյց տալու Համար, թէ ի՛նչ տեսակ մահով Ինք պիտի մահանար: Աստուծոյ բնութիւնը անձնագոհութիւնն է:

Ինչո՞ւ Աստուած կը գոհանայ Իր դանդաղ եւ խորհրդաւոր գործելակերպով Իր արդարութիւնը հաստատել, երբ կրնայ վրէժխնդիր ըլլալ: Ահա այս է Աստուածային սէրը, որ իւրայատուկ գորութիւն ունի տիրելու մարդկային հոգիին:

**Չսպումը վրէժխնդրութիւն մը կը նկատուի շահուած յաղթանակ մը:**







Շաբաթ  
5 Մարտ

**Ստիպել Ցատկելու  
Համար**

Կարդա՛  
Յեսուի 22. 10-16, 21-29

Եթե... լսեն աճօրէն  
մարդիկ կ'ըսեն,  
«Երթանք եւ ուրիշ  
աստուածներ պաշ-  
տենք» ... որ ճանչցած  
չէք, որոնք, պրպտե՛  
ն եւ լաւ հարցուփորձէ:  
—Բ. Օրինաց 13. 12-14

Աստուծու Մէջ  
Տարուաւ Մէջ  
■ Թուոց 19-21  
■ Առակաց 22. 17-29

**Ա**պրիլ 2006ին, մարդ մը անկար-  
բարձր շէնքէ մը վար ցատկել: Վեր-  
ջին վայրկեանին, ոտիկանութիւնը  
կեցուց զայն եւ դատարան յանձնեց  
իր այդ վտանգաւոր արարքին համար:  
Դատաւոր մը, հարցին բոլոր երես-  
ները քննելէ ետք, ազատ արձակեց  
զայն, նշելով, թէ յանցաւոր մարդը,  
այդպէս ընելով, քայլեր առած էր  
երաշխաւորելու ուրիշներուն ապահո-  
վութիւնը: Անկարգելով մը, այդ  
մարդը աւելի քան 3000 նման ցատ-  
կումներ ապահով եւ յաջողութեամբ  
կատարած էր, որոնցմէ մէկը Փարիզի  
նշանաւոր 1483 ոտք բարձրութիւն  
ունեցող էյֆէլ աշտարակն էր:

Այդ մարդուն ծայրահեղ մարզանքէն աւելի ապահով  
ոստումի մը կը հանդիպինք Յեսուի 22-րդ գլուխին մէջ:  
Հին Կտակարանի ժողովուրդը եօթը տարիներու պայքարի  
մը մէջ բռնուած էր Քանանու երկրին տիրանալու համար:  
Յանկարծ ահագանգի պէս խօսք մը կը սկսի տարածուիլ  
քաղաքացիական պատերազմի մը մասին: Տարածուող այդ  
խօսքը կ'ըսէր, թէ այն ընտանիքները, որոնք Յորդանան  
գետի արեւելեան կողմը հաստատուած էին, շինած էին  
կռապաշտութեան զոհասեղան մը (Հ. 10):

Ազգային աղէտ մը մէկդի դրուած էր այդ օր, որով-  
հետեւ մէկը ժամանակ տրամադրելով քննած էր իրողու-  
թիւնը եւ մտիկ ըրած՝ հարցին երկու կողմերն ալ (Հ. 16-  
29): Մտկալի եւ սուղ արժող թիւրիմացութենէ մը  
խուսափած էին բոլորն ալ: Աստուծոյ իմաստութիւնը  
յարգուած էր (Հ. 31): Աստուած սորվեցուցած էր իր  
ժողովուրդին, թէ մտիկ ընելու գինը այնքան մեծ չէր,  
որքան սխալ եզրակացութեան մէջ իյնալու գինը:

**Սխալ եզրակացութեանց մէջ ցատկելը ամենէն  
մեծ վտանգներէն մէկը կը նկատուի:**





Կիրակի  
6 Մարտ

### Ոչինչէն

Կարդա՛  
Ծ'ննդոց 1. 1-13

Սկիզբէն Աստուած  
երկինքն ու երկիրը  
ստեղծեց:  
–ԾՆՆԴՈՑ 1. 1

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՁ  
■ Թուոց 22-24  
■ Առակաց 23. 1-11



**Ոչինչ:** Բացարձակապէս ոչինչ: Ոչ լոյս: Ոչ երկինք: Ոչ գետին: Անհասկնալի մեր սահմանափակ մտածողութեան համար: Դատարկ ոչնչութիւն մըն էր Ծ'ննդոց 1. 1-էն առաջ:

Յետոյ՝ յանկարծ Ամենակարող Աստուծոյ ստեղծագործութեամբ, այդ պարապութիւնը լեցուած էր «երկինքով ու երկիրով»: Երկնային ձեռքը հասած էր պարապութեան մէջէն եւ ստեղծած՝ աշխարհ մը, տիեզերք մը: Միանական սքանչելի աշխատանքով, Հայր Աստուծոյ եւ Որդի Աստուծոյ, եւ Սուրբ Հոգիին ներգործող ներկայութեամբ, ոչինչը եղաւ բան մը: Պատմութիւնը իր ճամբորդութիւնը սկսաւ շարունակել մինչեւ այսօր: Ծ'ննդոց գիրքի առաջին համարը մեզի բաւարար գաղափար կու տայ խորհրդածելու այդ բոլորին վրայ մշտապէս: Այդ նախադասութիւնը, որպէս նախաբան կը խօսի բաւարար չափով Աստուծոյ արարչութեան, փառքին, մեծափառութեան մասին: Իրողութիւն մը, որուն մասին ըսելիք մը չունինք Աստուծոյ ներկայութեան:

Այսօրուան մեր ունեցած կեանքը, շնչելը եւ գոյատեւելը առանց Արարիչ եւ կառավարիչ Աստուծոյ գոյութեան կարելի պիտի չըլլար: Ո՛չ ալ պիտի ունենայինք այս տիեզերքը իր ամէն տեսակ կենդանութեամբ, եթէ չըլլար Ամենակարող Աստուծոյ հրաշագործ ստեղծագործութիւնը:

Երբեմն ակնածանքով մենք մեզի հարց կու տանք: Ի՞նչ կար եւ պատահեցաւ «Սկիզբէն» առաջ: Մեծ փառաբանութեամբ կը սքանչանանք այն խօսքին վրայ, որ կ'ըսէ. «Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը»: Ոչինչ կարելի է սակէ աւելի հիանալի գտնել:

**Բնութիւնը անուն մըն է ազդեցութեան մը՝ որուն պատճառը Աստուած ինքն է:**





Երկուշաբթի  
7 Մարտ

## Նոր Ասպարեզ Մը

Կարդա՛  
Մատթ. 4. 18-22

Աճոճք ալ իսկոյն  
թողուցին ճաճ ու  
իրենց հայրը եւ  
հետեւեցան Աճոր:  
—Մատթ. 4. 22

ԱՍՏՈՒԱՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՅ  
■ Թուոց 25-27  
■ Առակաց 23. 12-28



**Կ**արգ մը մարդոց համար, ձկնորսութեան տարեկան աւանդական պտոյտը կարեւոր տեղ կը գրաւէ իրենց օրացոյցին վրայ: Անոնք կը գտնեն հանգատաւէտ խրճիթներ եւ երկար օրեր կ'անցնեն այնտեղ, պարզապէս ձուկ որսալու հաճոյքին համար: Մենք կրնանք վստահ ըլլալ, թէ Յիսուսի ձկնորս աշակերտներուն պարագան նոյնը չէր: Անոնք արձակուրդի մէջ չէին, երբ հանդիպեցան Յիսուսի: Ձկնորսութիւնը իրենց գործի ասպարէզն էր: Ապրուստի միջոցը:

Մեր ապրուստի միջոցները յաճախ ամենէն աւելի ժամանակ եւ կեդրոնացում կը պահանջեն: Սակայն, Յիսուս ունի շատ հետաքրքրական ձեւ մը, միջամուխ ըլլալու համար մեր զբաղումներուն: Իսկութեան մէջ, Անոր ծրագիրն է հրաւիրել մեզ միանալու իր ասպարէզին:

Նկատենք իր խօսքին յաջորդականութիւնը ձկնորսներուն ուղղուած. — «Հետեւեցէք ինձի, եւ ես ձեզ պիտի ընեմ մարդոց որսորդ» (Մատթ. 4. 19): Յաճախ կը փորձուինք մտածել, թէ մենք պէտք է մեր կեանքի զբաղումը ունենանք եւ միեւնոյն ատեն հետեւինք նաեւ Քրիստոսի: Ասիկա սխալ է: Ան մեզ կը կանչէ առաջ իրեն հետեւիլ եւ յետոյ ցոյց կու տայ մեզի մեր կեանքի զբաղումը: Ան կ'առաջնորդէ մեզ նախապատուութիւն ունենալու, որպէսզի տեսնենք մարդոց կարիքները եւ անոնց յաւիտենականութիւնը որպէս նպատակ մեր ջանքին: Աստուած կրնայ չպահանջել քեզմէ, որ գործի ասպարէզը ձգես: Սակայն իրեն հետեւիլը վստահաբար պիտի փոխէ դիրքդ քու ամէնօրեայ գործիդ հանդէպ: Կարեւոր չէ ուր կ'ընես «Ձկնորսութիւնը»: Բայց եթէ իրեն հետեւող ես, պէտք է որասս:

**Ձգէ՛ ուրկաններդ եւ հետեւէ՛ Քրիստոսի:**





Երեքշաբթի  
8 Մարտ

### Ընելիք Գործերու Ցանկ Մը

Կարդա՛  
Գաղ. 5. 16-26

Բայց Հոգիին պտուղն է սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, փառասիրութիւն, քաղցրութիւն, բարութիւն, փառասիրմութիւն: —Գաղատ. 5. 22

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Դուկաս 7-12  
■ Առակաց 23. 29-35



**Ի**՞նչ կայ ընելիք գործ քու այսօրուան ցանկիդ վրայ: Խճողուած պահարան մը մաքրե՞լ: Նիւթական տեղեկագիրի մը հաշիւները կատարե՞լ: Ամսուան հաշուեցոյցերդ վճարե՞լ: Բոլորս ալ գործեր ունինք, որոնք պէտք է կատարուին այսօր, անոնց ցանկը պատրաստած ըլլանք կամ ոչ: Անոնք կարելոր են մեզի համար եւ պէտք է կատարուին:

Երբ մեր ընելիք ամէնօրեայ գործերը ցանկագրելը կրնայ օգտակար ըլլալ, միւս կողմէ, կայ ուրիշ ցանկի մը պատրաստութիւնը, որ կրնայ աւելի արժէքաւոր նկատուիլ: Այդ մէկը «ընելէ» աւելի «ըլլալու» ցանկն է: Մեծ գիտնական՝ Այնըշթայն ըսած է. «Յաջող մարդ մը ըլլալէ աւելի, փորձէ՛ արժէքաւոր մարդ մը ըլլալ»:

Պօղոս Առաքեալ կը քաջալերէ Գաղատացի հաւատացեալները եւ կը պատուիրէ անոնց աւելի հոգ տանիլ իրենց նկարագրին: Առաքեալը կ'ըսէ, եթէ թոյլ տանք, որ Սուրբ Հոգին ղեկավարէ մեզ, այն ստեն Աստուած պիտի ստեղծէ յատկանիշներ մեր նկարագրին մէջ, ինչպէս՝ «սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն եւ ժուժկալութիւն» (Ճ. 22-23):

Երբ կը նայինք նկարագրի այս յատկանիշերուն, հարց է, թէ մենք՝ դուն եւ ես, ո՞ր մէկուն աւելի պէտք ունինք: Աւելի համբերութի՞ւն մեր գործակիցներուն եւ կամ մանուկի մը հանդէպ: Կամ քիչ մը աւելի ազնուութի՞ւն եւ հեզութի՞ւն դրացիի մը հանդէպ:

Երբ մօտենանք Աստուծոյ, Ան կարողութիւնը պիտի տայ ըլլալու այն անձը՝ որ ինք կ'ուզէ, որ ըլլանք:

**Կարելորը մեր ինչ ընելէն աւելի,  
մեր ո՛վ ըլլալն է:**





Չորեքշաբթի  
9 Մարտ

## Տէրոջ Սպասէ՛

Կարդա՛  
Սաղմոս 27

Տէրոջ սպասէ՛,  
ուժովցի՛ր ու  
քաջասիրտ եղի՛ր,  
դարձեալ Տէրոջ  
սպասէ՛:  
—Սաղմոս 27. 14

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐԸ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 27-29

**Չ**ինական բարբառի մէջ «սպասել» բառը կը հնչուի «դասակարգ» բառին շատ մօտ. հնչումով: Հոնք Քոնկի մէջ, կարգ մը մարդիկ բառախաղ մը ընելով, այս երկու բառերով իրենք զիրենք «երրորդ դասակարգի քաղաքացիներ» կը նկատեն, որ կը նշանակէ նաեւ «երեք սպասումներու մարդիկ»: Անոնք կը սպասեն իրենց զաւակներուն տուն վերադարձին: Կը սպասեն առաւօտեան արեւածագին՝ ցրուելու անքուն գիշերները: Կը սպասեն մահուան՝ հրաժարումի հառաչանքով մը»:

Աստուծաշունչին մէջ «սպասել» բայը աւելի կեցուածք ցոյց կու տայ քան գործունէութիւն մը: «Սպասել Տէրոջ» կը նշանակէ վստահիլ Անոր: Սաղմոս 27-ն ցոյց կու տայ Սաղմոսերգուին կենսունակ հաւատքը Աստուծոյ հանդէպ: Ան Տէրը կը նկատէ իր փրկութիւնը (Հ. 1): Վտանգի պարագային, ան վստահաբար գիտէ, թէ Աստուած զինք պիտի պահէ (Հ. 5): Ան կը յիշէ, թէ Աստուած իրեն ըսած էր «Իր երեսը փնտռել», ուրեմն կը խնդրէ Աստուծմէ, որ իր երեսը չծածկէ Իրմէ: Որովհետեւ, մանուկի մը պէս, ան կը կարօտի Աստուծոյ երեսը տեսնել, իր գործերը հաստատելու համար (Հ. 8-10): Իր ամենէն մոլթ վայրկեաններուն, Դաւիթ կը յայտարարէ. «Վստահ եմ, թէ Տէրոջ բարութիւնը պիտի տեսնեմ ապրողներու երկրին մէջ» (Հ. 13):

Թէեւ ո՛չ մէկը գիտէ, թէ կեանքը ի՛նչ պիտի բերէ, սակայն կրնանք որոշել ամէն ատեն եւ ամէն բանի համար, վստահիլ Աստուծոյ եւ մեր միտքը կեդրոնացնել Անոր վրայ: Որովհետեւ բոլոր անոնք, որոնք Տէրոջ կը սպասեն, խոստումը տրուած է:— Մեր սիրտը պիտի զօրացնէ (Հ. 14):

**Տէրոջ յուսացողներում ոյժը պիտի նորոգուի:  
Եսայի 40. 31:**





Հինգշաբթի  
10 Մարտ

### Արագ Ուտքեր

Կարդա՛  
Փիլիպ. 4. 10-19

Տէր Եհովան է իմ  
զօրութիւնս: Ան իմ  
նոտքերս եղնիկի  
նոտքերուն պէս պիտի  
ընէ, եւ ինծի քալել  
պիտի տայ իմ բար-  
ձունքներու վրայ:  
—Ամբակում 3. 19

Աստուծո՞ւնք Մէջ  
Տարուա՞ն Մէջ

- Թուոց 28-30
- Առակաց 24. 1-12



Կօշիկին վրայ գրած էր Ամբակում 3. 19 եւ «Յիսուս է ճամբան» խօսքը: Այս հաւատքի եւ յոյսի արտայայտութիւնը զօրաւոր վկայութիւն մըն էր այդ մարգիկին նախապատուութեան եւ տուած արժէքին:

Այդ համարը պարզապէս երկնային յոյսի եւ յարատեւող հաւատքի մը արտայայտութիւնը չէ որ կը նկատուի: Այնտեղ կարելի է հետեւցնել գործնական արժէքի մը գոյութիւնը՝ յատկապէս մարգիկի մը համար, որուն յաջողութիւնը կախեալ է իր արագութեամբ: Այդ համարը կ'ըսէ: «Տէր Եհովան իմ զօրութիւնս է: Ան իմ նոտքերս եղնիկի նոտքերուն պէս պիտի ընէ, եւ ինծի քալել պիտի տայ իմ բարձունքներուս վրայ»:

Կեանքի ամբողջ տեւողութեան, պէտք ունինք Աստուծոյ զօրութեան: Միայն Ան կրնայ տալ այն «նոտքերը», որոնք արագ եւ զօրաւոր են: Ան կրնայ գինել մեզ կեանքի անորոշութեանց դէմ: Առաքեալին հետ կրնանք վատահ ըլլալ. «Իմ Աստուածս պիտի լեցնէ ձեր բոլոր կարիքները» (Փիլիպ. 4. 19):

**Մե՞նք միշտ բաւարարաչափ կրճամք ունենալ, երբ Աստուած է մեր հայրաբայիչը:**





Ուրբաթ  
11 Մարտ

### Շնորհքի Գործելակերպը

Կարդա՛  
Ղուկաս 15. 11-24

Մինչ ինք դեռ շատ  
հեռու էր, հայրը  
տեսաւ զայն եւ  
գթաց, վազելով՝ անոր  
վիզին վրայ ինկաւ ու  
համբուրեց զայն:  
— Ղուկաս 15. 20

Աստուծո՞ւնը ՄԷ՛ս  
Տարու՞ն ՄԷ՛ք  
■ Թուոց 31-33  
■ Առակաց 24. 13-22



**Յ**իսուսի ամենէն յիշատակելի պատմութիւնը՝ Անառակ Որդիին առակը, կ'աւարտի ճաշկերոյթի մը տեսարանով, ուր որպէս հերոս կը ներկայացուի անպէտ մարդ մը, որ արատաւորած էր իր ընտանիքին պատիւը: Անոնք, որոնք այսպէս անբաղձալի եւ դատապարտելի կը նկատուին մարդոց կողմէ, յաւիտենապէս բաղձալի են Աստուծոյ կողմէ: Երբ այն անբաղձալներէն մէկը դառնայ Աստուծոյ, խնճոյք կը սարքուի (Ղուկ. 15. 22-24):

Հին Կտակարանին մէջ Ղեւտացիներ օրէնքներ ունէին մարդիկը հեռու պահելու վարակումէ: Բաներ, որոնք կրնային անձ մը վարակել, կենդանիի մը, դիակի մը կամ հիւանդի մը հետ շփման մէջ ըլլալով: Բայց կը տեսնենք, որ Յիսուս փոխեց այս ընթացքը: Փոխանակ վարակուելու վախով անմաքուր կամ հիւանդ մարդէն հեռու մնալու, Ան առողջացուց հիւանդը:

Այստեղ ես կը տեսնեմ Յիսուսի օրէնքին կատարելագործելու յատկութիւնը: Աստուած սրբացուց ստեղծագործութիւնը, գատելով սուրբը պղծուածէն, մաքուրը՝ անմաքուրէն: Յիսուս չչնջեց սրբացումի այդ սկզբունքը, հապա փոխեց անոր աղբիւրը:

Աստուծոյ մեծ շնորհքին շնորհիւ, մենք կրնանք գործակատարներ ըլլալ Անոր սրբութեան, քանի որ Ան հիմա կը բնակի մեր մէջ: Կրնանք Յիսուսի նման փնտել միջոցներ սրբութեան աղբիւր ըլլալու: Հիւանդ եւ հաշմանդամ մարդիկ վարակումի պատճառներ չեն, այլ կարելիութիւններ Աստուծոյ կարեկցութեան արժանանալու: Եւ մենք կոչ ունինք այդ կարեկցութիւնը տարածելու եւ փոխանցելու եւ ոչ թէ վարակումներէ խուսափելու:

**Ոչ ոք անհասանելի կը նկատուի Աստուծոյ շնորհքին հասնելու:**





Շաբաթ  
12 Մարտ

**Ծանոթաուճի  
Հեղեղը**

Կարդա՛  
Հոութ 1. 8-17

...Քու ժողովուրդդ իմ  
ժողովուրդս պիտի  
ըլլայ, ու քու  
Աստուածդ՝ իմ  
Աստուածս պիտի  
ըլլայ:  
—Հոութ 1. 16

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՑ  
■ Թուոց 34-36  
■ Առակաց 24. 23-34



յուսալքուած գգացին: Քաղաքի առաջնորդներ, իրենց ուղերձներով եւ քարոզչութեամբ, յուսադրեցին ժողովուրդը, որ կարելի պիտի ըլլար կարճ ժամանակուան մը մէջ վերակառուցանել ամէն բան: Այդ քարոզչութիւնը բուժող բալասանի պէս իր ազդեցութիւնը ունեցաւ եւ վերապրողներ ուժգին աշխատանքի լծուեցան: Ճանաթաուն քաղաքը վերաշինուեցաւ եւ այսօր շուրջ 28000 բնակչութիւն ունի:

Աստուածաշունչը կ'ըսէ, երբ Նոյեմի յուսահատած էր իր ամուսինը եւ գաւակները կորսնցուցած ըլլալուն համար, իր հարսը՝ Հուութ մերժեց զայն լքելով հեռանալ: Փոխարէնը, ան իր յարաբերութիւնը զօրացուց Աստուծոյ հետ եւ իր ապագան վստահեցաւ Անոր: Աստուած անոր հաւատքը վարձատրեց եւ անոր սերունդէն ծնունդ տուաւ Յիսուսի (Մատթ. 1. 15-16): Աղետալի կորուստէ մը ետք, պէտք է կառչինք մնացած աղբիւրներուն եւ յարաբերութեանց եւ, Աստուծոյ վստահելով, զանոնք բարիի գործակից դարձնենք:

**Ոչ ոք կրնայ անյոյս ըլլալ, երբ անոր յոյսը  
Աստուծոյ վրայ է:**







Կիրակի  
13 Մարտ

**Կատարեալ  
Պարկեշտութիւն**

Կարդա՛  
Գործք 5. 1-11

Ինչո՞ւ այս բանը դրիք  
սրտիդ մէջ, դու՛ն  
ստեցիր ո՛չ թէ  
մարդոց, ճապա  
Աստուծոյ:  
—Գործք 5. 4

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Բ. Օրինաց 1-3  
■ Առակաց 25. 1-14

**Հ**արցուր գետնուղիի արկածի մը պատճառով փապուղիի մէջ թաղուած այն վեց մարդոց բարեկամներուն եւ ընտանիքներուն կատարեալ պարկեշտութեան մասին: Անոնք կ'ըսեն, իրենց սիրելիները փրկելու գործը ուշացաւ ժամերով, երբ վերակացուն անմիջապէս պատահարը չտեղեկացուց իշխանութեանց: Փոխարէնը, ընկերութիւնը կնքեց վայրը եւ բռնագրաւեց բջիջային հեռաձայները: Բոլորովին «սուտ» չէր ըսուածը, բայց ծածկել էր: Այս անպարկեշտ արարքը ցոյց կու տար անտեսումը մարդկային կեանքին:

**Գործք Առաքելոց գիրքին մէջ Աստուած մեզի կու տայ զգաստութեան օրինակ մը, թէ ինչպէս Ան կը նայի անպարկեշտութեան (Վ. 32-5.11):** Կարգ մը մարդիկ, իրենց ստացուածքները ծախելով, ամբողջ եկամուտը բաժնած էին եկեղեցիին հետ: Անանիա եւ Սափիրա չուզեցին այդ մէկը ընել: Անոնք, դրամին մէկ մասը իրենց քով պահեցին, հակառակ անոր, որ ըսած էին, թէ ամբողջ գումարը տուած էին: Երբ գովասանք կը սպասէին, զարնուեցան եւ մեռան:

Արդեօք անոնց պատիժը ին՞չ էր: Անոնց «թեթեւ» սուտը կենաց եւ մահու հարց չէր: «Սուտ առատաձեռնութեան վրայ պարծեցողը, անանձրեւ ամպերու եւ հովի պէս է», կ'ըսէ առակագիրը (Առակ. 25. 14): Պետրոս Առաքեալ հարցուց Անանիայի. «Ինչո՞ւ Սատանան լեցուց սիրտդ, որ ստես Սուրբ Հոգիին» (Գործք 5. 3): Ապա աւելցուց, «Ի՞նչն ստեցիր ոչ թէ մարդոց, հապա՛ Աստուծոյ» (Վ. 4):

Եթէ մենք ամբողջովին պարկեշտ ենք մենք մեզի հանդէպ, կրնա՞նք ըսել, թէ միեւնոյն ատեն մենք կատարելապէս պարկեշտ ենք նաեւ Աստուծոյ հանդէպ:

**Պարկեշտութեան համար աստիճաններ չկան:**





Երկուշաբթի  
14 Մարտ

**Սրբավայր**

Կարդա՛  
Սաղմոս 71. 1-16

Բնակութեան վէմ եղիր  
ինձի, որպէսզի  
շարունակ ճոճ երթամ,  
դու՛ն պատուիրեցիր  
զիս փրկել:  
—Սաղմոս 71. 3

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՁ  
■ Բ. Օրինաց 4-6  
■ Առակաց 25. 15-28



**Ա**րհեստավարժ մարդիկ մը, պալատի նման ութ ննջարանով մեծ տուն մը շինել տուաւ եւ անոր մէջ բնակեցաւ առանձին: Մեկուսացած այդ տունը կը բովանդակէր շարժապատկերի սրահ մը, մարդարան մը, լողաւազան մը եւ հինգ ինքնաշարժերու կառատուն մը:

Նիւ Եորք Թայմզ թերթի թղթակիցին հետ ունեցած իր հարցազրոյցին ընթացքին, այդ մարդիկը ըսած է, թէ ութ միլիոն տոլար արժող այդ պալատը ինք կառուցած չէր որպէս իր յաջողութեան յուշարձանը: Այլ, ան կը նկատէր զայն սրբատեղիի պէս բան մը, որ միշտ իրեն կը յիշեցնէր իր ցաւալի, աղքատ եւ եղծանուած մանկութիւնը: Ան ճոխութեան մը վայելքներէն աւելի խոր տրամադրութիւն մըն էր, որ կը փնտռէր:

Բոլորս ալ յաճախ ունեցած ենք ընկճուած զգալու այդ փորձառութիւնը: Երբ ներկան վհատեցնող է եւ անցեալը՝ ցաւալի, ո՞ր կարելի է դիմել ձերբազատումի համար: Ո՞ր եւ որո՞նք կը դիմենք մխիթարութիւն եւ խաղաղութիւն գտնելու: Սաղմոսերգուն կ'ըսէ. «Ազատէ զիս քու արդարութեամբ ու փրկէ՛ զիս, դարձուր ականջդ ինձմէ եւ ազատէ զիս: Բնակութեան վէմ եղիր ինձի, որպէսզի շարունակ հոն երթամ» (Սաղմ. 71. 2-3): Սաղմոսերգունին համար Աստուած իր յոյսն է, իր վստահութեան վէմը, եւ իր ապահով ապաստան գտնելու միակ վայրը, կեանքի փոթորիկներուն դիմաց (Հ. 5-8):

Քիչ են մարդիկ, որոնք ունին կարողութիւնը ֆիզիքական տուն մը ունենալու, բայց ամէն մարդ, որ Տէրը ճանչցած է, կրնայ գտած ըլլալ ապաստան մը եւ իր խաղաղութիւնը Անոր ներկայութեան մէջ:

**Երբ մեր հարցերը դնենք Աստուծոյ ձեռքերուն մէջ, Ան իր խաղաղութիւնը կը դնէ մեր սրտին մէջ:**





Երեքշաբթի  
15 Մարտ

**Պահանջուած**

Կարդա՛  
Ղուկաս 19. 29-40

Տէրոջը պէտք է:  
– Ղուկաս 19. 34

ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Ղուկաս 13-18  
■ Առակաց 26. 1-16

**Ե**րբ Յիսուս տօնի առիթով վերջին անգամ Երուսաղէմ մուտք պիտի գործէր, զրկեց իր երկու աշակերտները մօտակայ գիւղաքաղաք մը, իրեն համար աւանակ մը բերելու: Ան ըսաւ իր աշակերտներուն. «Եթէ մէկը հարցնէ ձեզի, ինչո՞ւ կարձակէք, սա ըսէք անոր.– Տէրոջը պէտք է» (Ղուկ. 19. 31):

Մինչ կը մօտենանք դէպի մեր կեանքի արեւամարը տանող տարիներուն, կարելի է հարց տալ մենք մեզի. «Տակաւին կրնամ օգտակար ըլլալ Աստուծոյ: Կա՞յ ծառայութիւն մը, որ կրնամ մատուցանել՝ որ իմ կեանքիս օրերը կրնան արժեւորել: Կա՞յ մէկը, որ ինծի պէտք ունի»:

Անշուշտ Աստուած պէտք ունի քեզի, ինչպէս Յիսուս պէտք ունեցաւ աւանակին զինք տանելու համար Երուսաղէմ: Ան միշտ բանի մը, կամ մէկու մը պէտք ունեցաւ իր գործը կատարելու համար: Ան տակաւին կարեւոր եւ օգտակար գործեր ունի քեզի համար, որ կրնաս ընել:

Թերեւս քու գործը կրնայ շատ աննշան եւ փոքր աշխատանք մը նկատուիլ: Կամ աշխատանք մը, որ գրաւէ կեանքիդ վերջին տարիները: Այդ մէկը կրնայ առիթ մը ըլլալ, որ քու հաւատքի փորձառութիւնդ բաժնեկցիս մէկու մը հետ, բարեխօսես անոր համար, կամ սիրես զայն, կարեկցութիւն ցոյց տաս անոր, զայն բարեկամաբար այցելելով կամ անոր հանդէպ յարգանք ցուցաբերես: Միշտ պիտի ըլլայ բան մը, որ դուն կրնաս ընել եւ պէտք է ընես: Այդ միջոցին, դուն եւ ես պէտք է սպասենք աղօթելով, Աստուծոյ խօսքը ընթերցելով եւ լուռ մտիկ ընելով՝ միշտ պատրաստ այն վայրկեաններուն համար, երբ Տէրը մեզի պէտք ունի:

**Աստուած գործ ունի իր բոլոր զաւակներուն համար, առանց տարիքի եւ կարողութեան նկատառութեան:**





Չորեքշաբթի  
16 Մարտ

**Մուր և Լոյս**

Կարդա՛  
Յովհ. 3. 1-21

Ես աշխարհ եկայ իբր լոյս, որպէսզի ով որ հաւատայ ինձի՝ չմնայ խաւարի մէջ:  
—Յովհ. 12. 46

ԱՍՏՈՒԱՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 30-32



**Լ**ատ Յովհաննէս Առաքեալի, Նիկողեմոս «Յիսուսի քով եկաւ գիշեր ատեն» (Յովհ. 3. 2): Արդեօք այդ Փարիսեցին կը փորձէր ինքզինք թաքցնել գիշերուան մութին մէջ, ամչնալով թերեւս, որպէս իշխող դասակարգի մարդ, եւ չէր ուզեր, որ մարդիկ զինք տեսնէին Յիսուսով հետաքրքրուած:

Ոմանք կը խորհին, թէ գիշեր ատեն եկաւ, որովհետեւ պարզապէս աւելի գոյլ էր: Ուրիշներ կ'ենթադրեն, թէ գիշերը աւելի լաւ եւ հանդարտ ժամանակ էր Յիսուսի հարցումներ հարցնելու, որովհետեւ ընդմիջողներ աւելի քիչ կ'ըլլային:

Մենք իսկապէս չենք գիտեր, թէ ճիշդ ի՞նչ էր պատճառը: Սակայն, այնպէս կը թուի, թէ Առաքեալը մասնաւոր իրողութիւն մը կ'ուզէ շեշտել «գիշեր ատեն» գալը շեշտելով: Ամէն անգամ, որ խօսելու ըլլայ Նիկողեմոսի մասին, ատուգելու համար անոր ինք-նութիւնը, առաքեալը կ'ըսէ ասոր պէս բան մը. «Գիտէք որո՞ւ մասին է խօսքս, - այն մարդը որ գիշեր ատեն եկաւ Յիսուսի քով» (Յովհ. 7. 50, 19. 39):

Նիկողեմոս բարոյականի տէր մարդ էր եւ կ'ապրէր Մովսիսական օրէնքին համեմատ: Մարդիկ շատ հաւանաբար կը խորհէին, թէ ան շատ լաւ եւ բարի մարդ մըն էր: Իրողութեան մէջ, ան մութին մէջ էր տակաւին, Յիսուսը ճանչնալու տեսակէտէ, եւ ուրեմն ուզեց ճշմարտութիւնը գիտնալ: Ուրեմն Նիկողեմոս մութին դուրս ելած եւ եկած էր ներկայութեան՝ «Աշխարհի լոյսին» (Յովհ. 8. 12):

Յիսուս մեզ ալ դուրս կը կանչէ «խաւարէն սքանչելի լոյսին» (Ա. Պետ. 2. 9) եւ կը խոստանայ մեզ երբեք խաւարի չմատնել, եթէ Իրեն հաւատանք (Յովհ. 12. 46):

**Հաւատալ Գրիստոսի չի նշանակեր ցատկել մութիւն մէջ, այլ քայլ մըն է դէպի լոյս:**





Հինգշաբթի  
17 Մարտ

**Ներսէն Դուրս**

Կարդա՛  
Մարկոս 7. 9-23

Մարդոց սրտէն կ'ելլեն չար մտածումներ, շնութիւններ, պողոկոպիւթներ, սպանութիւններ, գողութիւններ, ազամութիւններ, Եւզոբութիւն, ցոփութիւն... հացնոյութիւն, ամբարտաւանութիւն, անմտութիւն: —Մարկոս 7. 21-22

ԱՍՏՈՒԱԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՁ  
■ Բ. Օրինաց 7-9  
■ Առակաց 26. 17-28



որպէսզի ձեր աւանդութիւնը պահէք» (Մատթ. 7. 9): Ան նոյնիսկ զանոնք «կեղծաւորներ» կոչեց եւ բացատրեց, որ ինչ որ կու գայ մարդու մը ներսէն, ան կը պղծէ զայն եւ ո՛չ թէ հակառակը:

Եթէ ուշադիր չըլլանք, կը խաչուինք դուրսէն լաւ երեւցածով եւ կը մոռնանք նկատի ունենալ ներսը եղածը: Իսկութեան մէջ, երբեմն մենք կը խորհինք, որ մեր կեցուածքը շիտակ է, բոլոր շիտակ օրէքները կը պահենք, եւ ատով հպարտանալով, կը սկսինք քննադատել ուրիշները: Սակայն, մեր հոգիին մէջ դառնութիւն պահելով, միշտ քննադատական կեցուածք կը ցուցաբերենք եւ կը խորհինք, թէ մենք միշտ լաւն ենք եւ շիտակը: Նման վերաբերմունքներ կ'արատաւորեն մեր նկարագիրը եւ պատճառ կը դառնան, որ մենք զմեզ յանցաւոր զգանք Յիսուսի դիմաց որպէս «կեղծաւոր»:

Կարեւորը ներքին բաներն են, մեր սրտին եւ մտածումներուն մէջ եղածը, մեր դիրքը մարդոց եւ հարցերու հանդէպ:

**Յիսուսի համար, կարեւորը մեր ներսիդին գտնուածն է:**



**Զ** մերուկ մը գնել դժուարին պարտականութիւն մըն է: Կարեւոր չէ դուրսէն ան ո՛րքան լաւ կ'երեւի: Դժուար է գիտնալ, թէ մէջը ինչպէ՞ս է: Ուրեմն, երբեմն գիտցողի պէս մատներովս կը գարնեմ, եւ եթէ մարդ մը չի նայիր ինձի, երկու ձեռքերով կը սեղմեմ զայն: Երբեմն ի յայտ կու գայ, որ ներսէն շատ գէշ ձմերուկ մը գնած եմ:

Երբ փարիսեցիները բարկացած էին, որ Յիսուսի աշակերտները հաց ուտելէ առաջ իրենց ձեռքերը չէին լուար, եւ անոնք իրենց օրէնքը ոտնակոխ կ'ընէին: Յիսուս անմիջապէս կոչ ըրաւ անոնց, ըսելով. «Լաւ կ'անարգէք Աստուծոյ պատուիրանը,



Ուրբաթ  
18 Մարտ

### Որպեսզի Ուրիշները Կարենան Ապրիլ

Կարդա՛  
Հոովմ. 9. 1-5

Քանի որ կ'ըղծայի ես  
ինքս նզովուած ըլլալ  
Քրիստոս է իմ եղբայր-  
ներուս՝ մարմինի  
կողմէ ազգական-  
ներուս համար:  
—Հոովմ. 9. 3

ԱՍՏՈՒՍԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՅ  
■ Բ. Օրինաց 10-12  
■ Առակաց 27. 1-14



ժայրահեղ նուիրում եւ զոհաբերութիւն կը պահանջեն:  
Այդ գիրքին մէջ յիշուած են հաւատացեալներու պատ-  
մութիւններ, որոնք տառապելով մեռած են Յիսուսի սէրն  
ու փրկութեան բարի լուրը տարածելու համար: Գիտնալով  
հանդերձ, թէ իրենց ըրածը կրնար իրենց մահուան պատճառ  
դառնալ, անոնք շարունակած են իրենց Փրկիչը ծանօթացնել  
աշխարհին, որուն այնքան պէտքը ունին:

Պօղոս Առաքեալ ինքն ալ նահատակ մը եղաւ Քրիստոսի  
համար: Ան իր կարեկցութիւնը սա ձեւով կ'արտայայտէ  
մարդոց՝ հոգիներու փրկութեան համար. «Քանի որ  
կ'ըղծայի ես ինքս նզովուած ըլլալ Քրիստոսէ, իմ եղբայր-  
ներուս՝ մարմինի կողմէ ազգականներուս համար» (Հոովմ.  
9. 3): Առաքեալը այնքան մտահոգուած է իր ազգա-  
կիցներուն Քրիստոսի գալով, որ պատրաստ է ամէն ինչ  
զոհաբերել «որպէսզի ուրիշները ապրին»: Կրնանք մենք  
ալ ունենալ նոյն նախանձախնդրութիւնը մարդոց  
հոգիներուն յաւիտենական փրկութեան համար:

**Քրիստոսի խաչը ցոյց կու տայ Աստուծոյ  
կարեկցութիւնը կորսուածին հանդէպ:**





Շաբաթ  
19 Մարտ

### Ստեղծէ՛ Քու Անձ- նական Աստուածդ

Կարդա՛  
Սաղմոս 146

Ճանչնալ քեզ՝ միայն  
ճշմարիտ Աստուածը,  
ու Յիսուս Քրիստոսը,  
որ դուն դրկեցիր:  
—Յովհ. 17. 3

ԱՍՏՈՒԱԾՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՅ  
■ Բ. Օրինաց 13-15  
■ Առակաց 27. 15-27



**Մ**եր տան գետնայարկին մէջ  
բաղնիք մը կառուցանեցի: Պէտք  
եղած թելերը անցուցի եւ ամէն բան  
կարգի դրուած եւ վերջացած կարելի  
էր նկատել: Ես շատ կը սիրեմ տան  
մէջ ես ինծի գործեր ընել, այնքան  
ատեն որ շինութեան նիւթեր եւ  
գործիքներ ծախող խանութ մը կը  
գտնուի մեզի մօտ: Սակայն կարգ  
մը մարդիկ, իրենք իրենց ըրած  
գործերը քիչ մը շատ հեռուն կը  
տանին: Անոնք կը ստեղծեն իրենց  
անձնական Աստուածը: Վերջերս  
թերթի մը մէջ կարդացի երիտա-  
սարդաց հոգեւոր հովիւի մը մասին,  
որ իր պատանիներուն կը հարցնէ,  
թէ իրենք ի՞նչ կը խորհին Աստուծոյ  
մասին: Մէկը կ'ըսէ, թէ Աստուած իր մեծ հօր պէս մէկն  
էր: Ուրիշ մը կ'ըսէ, «Ան հոն՝ տեղ մըն է, գոր երբեք չեմ  
տեսած»: Իսկ ուրիշ մը կ'ըսէ. «Ան չար մէկն է, որ կ'ուզէ  
միշտ գիտ պատժել»: Վերջին պատանին եզրափակելով կ'ըսէ.  
«Բոլորին ըսածները շիտակ են, քանի որ այդ է, ինչ որ  
անոնք կը հաւատան»:

Արդեօք պէ՞տք է Աստուծոյ ո՛վ ըլլալը որոշել մարդոց  
մեծամասնութեան քուէով: Ան մէկն է, որ մենք կրնա՞նք  
արդեօք հաստատել մեր մտածելակերով: Այսօր, շատ կը  
խօսուի եւ ժողովրդականացած խօսք է. «Ստեղծէ՛ քու  
անձնական աստուածդ»: Եւ ասիկա չափազանց աւելի վտան-  
գաւոր պարագայ մըն է: Ան կը քանդէ մեր ծանօթութիւնը  
Երկնաւոր Հօր հետ: Աստուածաշունչը կ'ըսէ, Աստուած  
այն է որ «ստեղծած է երկինքն ու երկիրը» (Սաղմ. 1 Թ.  
6), եւ «միակ ճշմարիտ Աստուած» ինքն է (Յովհ. 17. 3):

Կարդա՛ Աստուածաշունչը եւ իսկապէս գիտցի՛ր, թէ  
ո՛վ է Աստուած, եւ Քրիստոսով հաղորդակցէ՛ Անոր հետ:

**ՁԱստուած կարելի չէ չափել սահմանափակ  
մարդով:**





Կիրակի  
20 Մարտ

**Ի՞նչ՝ ... Փոխուած**

Կարդա՛  
Մատթէոս 21. 1-11

Անա թագաւորդ կու  
գայ քեզի:  
—Մատթ. 21. 5

ԱՍՏՈՒՆԱՆՆԵՐՈՒՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՁ  
■ Բ. Օրինաց 16-18  
■ Առակաց 28. 1-14

սկսաւ պրոպա՛ «Թող խաչուի»: Ամէն բան սկսաւ դէպի գէշը ընթանալ, երբ Յիսուս ըսաւ անոնց այն բաները, որ չէին ուզէս լսել: Ան դուրս դրաւ տաճարէն լուսաշարձները (Մատթ. 21. 12): Ուսուցանեց, թէ մաքսաւորներն ու պրոստիտուտներն ալ կրնան մտնել Երկինքի Թագաւորութեան մէջ, կրօնականներէ առաջ իսկ, երբ դարձի դան (21. 31): Ան ըսաւ, որ պէտք է տուրք տալ (21. 21): Յետոյ ներկայացուց շարք մը «վայ»եր, կրօնական առաջնորդներուն դէմ. «Վայ՛ ձեզի, կեղծաւորներ, դպիրներ եւ փարիսեցիներ», ըսաւ անոնց (23. 13-31):

Ահա այն է Յիսուս Իրեն հաւատացողներուն համար: Արդար մարդը, միակ կատարեալը, Մարմնացած Աստուած: Ան քաղաք եկած չէր ժողովրդականութիւն շահելու: Անոր գործը ճշմարտութիւնը յայտարարել էր եւ մարդոց փրկութիւն ապահովել: Այդ մէկը ընելը Անոր համար Իր կեանքը արժեց: Փառաբանենք Չայն Իր կատարելութեան եւ սիրոյն համար:

**Յիսուսի գամերէ ծակուած ձեռքերը ցոյց կու տան սիրով լեցուն Աստուծոյ սիրտը :**







Երկուշաբթի  
21 Մարտ

### Յիշէ՛ Զիս

Կարդա՛  
Ղուկաս 23. 39-43

Տէ՛ր, յիշէ՛ զիս, երբ  
գաս քու  
թագաւորութեամբդ:  
– Ղուկաս 23. 42

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՅ  
■ Բ. Օրինաց 19-21  
■ Առակաց 28. 15-28



**Մ**արդիկ կը յիշուին յաճախ իրենց կատարած գերբնական գործերուն համար: Երբեմն անոնք կը յիշուին մարդկային պատմութեան մէջ մեծ բարեգործութիւններ կատարած ըլլալուն համար: Իսկ երբեմն ալ, կան կարգ մը մարդիկ, որոնք կը յիշուին իրենց չար եւ վնասակար արարքներուն համար: Նշանաւոր ըլլալու եւ անմահութիւն ձգտելու փափաքը մարդուն մէջ բնածին երեւոյթ մըն է եւ կը մղէ զանոնք մեծ եւ աչքաւու գործեր կատարելու:

Սակայն, այն անմահութիւնը, որ Յիսուս մեզի կու տայ, երբեք կապ չունի մեր ըրած գործին հետ: Իսկութեան մէջ, Յիսուս իր աշակերտներուն յատկանշական գործեր ընելու հեղինակութիւնը տալէ ետք (Ղուկ. 10. 17-19), ըսաւ անոնց. «Բայց դուք մի՛ ուրախանաք, որ չար ոգիները կը հպատակին ձեզի, այլ մանաւանդ ուրախացէ՛ք, որ ձեր անունները գրուած են երկինքը» (Հ. 20):

Գողգոթայի խաչին վրայ, անանուն աւազակ մը հաւատաց Յիսուսի այդ պատգամին, ճիշդ ժամանակին (Ղուկ. 23. 40-42): Այդ աւազակը հասկցած էր, որ յաւիտենական կեանքի հասնիլը կապ չունէր իր անցեալին մէջ ըրած բարի եւ կամ չար գործերուն հետ: Այլ ան կախեալ էր ի՛նչ որ Յիսուս կ'ընէր իրեն համար – խաչին վրայ իր կեանքը զոհաբերելով իրեն պէս մեղաւորներուն համար: Նոյնիսկ իրեն պէս անարժան եղողներ, երբ հաւատային Յիսուսի զոհաբերութեան եւ ընդունէին Չայն որպէս իրենց Տէրն ու Փրկիչը, Աստուած պատրաստ էր զիրենք ողջունելու երկինքի մէջ: Կարեւորը յիշուիլն էր ո՛չ թէ ուրիշ մարդոց կողմէ, այլ միայն Աստուծոյ կողմէ:

**Մեր կեանքը շատ կարեւոր է Աստուծոյ հոյ, որովհետեւ ԱՅ կը սիրէ մեզ:**





Երեքշաբթի  
22 Մարտ

### ԱՆՃԿատ Ձգուած Արուեստագէտ Մը

Կարդա՛  
Հոովմ. 1. 18-23

Աճոր անտեսանելի  
բաները... կը տեսնուի՞ն  
աշխարհի արարչու-  
թեցէ ի վեր՝ ու կը  
հասկցուի՞ն:  
—Հոովմ. 1. 20

ԱՍՏՈՒԾԱԾՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Դուկաս 19-24  
■ Առակաց 29. 1-7



**Մ**արդ մը Հասարակ տափառ,  
շապիկ եւ գլխարկ հագած,  
կեցած էր աղբամանի մը քով,  
Վաշինկիթընի Հրապարակներէն  
մէկուն վրայ: Քիչ ետք, ձեռքի  
պայուսակը բանալով, դուրս կը  
բերէ ջութակ մը եւ կը սկսի նուա-  
գել: Ցաջորդող 43 վայրկեաններուն,  
դասական վեց կտորներ կը նուագէ  
եւ հազարաւոր մարդիկ կ'անցնին  
իր առջեւէն առանց նկատելու զինք:  
Անցորդներէն ոչ մէկը ճանչցած էր  
Ճաշուայ Պէլը, դասական աշխար-  
հահուչակ երաժիշտը, որ կը նուագէր  
դասական ամենէն գեղեցիկ եւ  
ճանչցուած երաժշտութիւնները 3-5  
միլիոն տոլար արժող Սթրադի-  
վարերս կոչուած ջութակին վրայ: «Տարօրինակ երեւոյթ  
եւ զգացում, մարդիկ իրապէս աննկատ ձգեցին զիս»,  
կ'ըսէ մեծ արուեստագէտը:

Աստուած ալ գիտէ եւ կը զգայ, թէ ի՛նչ ըսել է աննկատ  
ձգուիլ: Պողոս Առաքեալ կ'ըսէ, Աստուած իր գոյութեան  
գերակայութիւնը դրած է մարդ արարածին բնութեան մէջ:  
Ստեղծագործութիւնը իր գեղեցկութեամբ, գորութեամբ եւ  
նկարագրով, անսխալական պատգամ մը ունի իր Արարիչին  
մասին: Թէեւ Աստուած իր վեհութիւնը յայտնաբերած է  
չատ մը ձեւերով, շատեր տակաւին կը մերժեն ճանչնալ եւ  
երախտապարտ ըլլալ Անոր: Բայց Աստուած պատասխանատու  
պիտի նկատէ բոլոր անոնք, որոնք կ'ուրանան իր ով ըլլալն  
ու իր օրհնութիւնները: «Թէպէտ իրենք կը ճանչնային  
զ'Աստուած, սակայն Աստուծոյ պէս չփառաւորեցին կամ  
չնորհակալ չեղան (Հոովմ. 1. 20-21): Ճանչնանք եւ շնորհա-  
կալութիւն յայտնենք երկինքի մեծ Արուեստագէտին, որ  
հրաշափառ կերպով Ինքզինք յայտնած է մեզի:

**Ամբողջ ստեղծագործութիւնը ցուցամատ մըն է՝  
ուղղուած Աստուծոյ:**





2որեքշաբթի  
23 Մարտ

**Մենք կը  
Հաւատանք**

Կարդա՛  
Հոովմ. 8. 11-18  
Օրհնեալ ըլլայ  
Աստուած... որ  
վերստին ծնաւ մեզ  
կենարար յոյսին  
ճամար, Յիսուս  
Քրիստոսի մեռելներէն  
յարութեամբ:  
—Ա. Պետրոս 1. 3  
ԱՍՏՈՒԾՈՒՆԵՐԸ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 33-35

**Ք**աղերնա կոչուած Հեղեղը 2005ին ջուրին տակ ծածկեց Նիու Օրլէյընը քաղաքը: Սակայն, այդ անհաւանական աղէտը պատճառ դարձաւ, որ ճիշդ 17 ամիսներ ետք, Հոն սխի նոր եւ աւելի ուրախ կեանք մը: Նիու Օրլէյընցի Ամերիկեան Ֆութպոլի խումբը, որ միշտ տկար եւ ցաւալի վիճակ մը ունէր, փոխանութեան աւարտական խաղին հասաւ: Ամբողջ շրջանը մեծ խանդավառութեան մէջ էր: Պատասխան կ'ըսէին. «Մենք կը Հաւատանք», աւետելով ծագած նոր օրը:

Թղթակից մը, ակնարկելով այդ երեւոյթին, ըսաւ. «Երբ ֆութպոլի եղանակը վերջնայ, քաղաքին աւերուած



տարածքը պիտի մնայ աւերուած»: Ապա աւելցուց, ըսելով. «Եթէ այս հրաշքը պատահեցաւ Նիու Օրլէյընցի, ուրեմն որեւէ բան կրնայ պատահիլ Նիու Օրլէյընցի»:

Թէեւ ֆութպոլի այդ խումբը մէկ խաղով կորսնցուց փոխանութիւնը, բայց երեւոյթը մնաց հրապուրիչ: «Անկարելի» թուող բան մը կարելի դարձած էր:

Յաւիտենապէս եւ աւելի կարեւոր ձեւով այս է, այն ինչ որ մենք կ'ունենանք Յիսուսի մարմնական յարութեամբ: Քրիստոս, իր յարութեամբ յաղթեց մահուան, յայտարարելով Աստուծոյ զօրութիւնը՝ մեզի տալու նոր կեանքի յոյսը: Առաքեալը կ'ըսէ. «Ուրեմն, Ան՝ որ մեռելներէն յարուց Քրիստոսը, կեանք պիտի տայ նաեւ ձեր մահկանացու մարմիններուն, իր հոգիով, որ կը բնակի ձեր մէջ (Հոովմ. 8. 11):

Ասկէ աւելի կարեւոր դէպք չկայ պատմութեան մէջ: Ոչ մէկ ուրիշ դէպք այսքան լեցուն է անմիջական յոյսով եւ Քրիստոսով սրբուածներու վերջնական յաղթնակով:

**Քրիստոսի յարութիւնը խոստումին կոկոնն է, իսկ մեր յարութիւնը իրագործման ծաղիկը:**





Հինգշաբթի  
24 Մարտ

**Խաչից Նշանա-  
կուրթիւնը**

Կարդա՛  
Մատթ. 27. 22-26  
Բայց ես ամե՛նցեւից  
պիտի չպարծենամ, այլ  
միայն մեր Տէրոջ՝  
Յիսուս Քրիստոսի  
խաչով. անով աշխար-  
հը խաչուած է ինձի  
համար, ես ալ աշխարհի:  
— Գաղատացիս 6. 14

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Բ. Օրինաց 22-24  
■ Առակաց 29. 8-20

**Կ**արգ մը Հաւատացեալներ սովո-  
րութիւն դարձուցած են խաչ  
մը կրել: Այդ կրնայ ըլլալ մանեակ  
մը կամ զարդասեղ մը: Շատեր խաչը  
կը կրեն որպէս զարդեղէն, առանց  
անոր իմաստին անդրադառնալու,  
իսկ ուրիշներու համար ատիկա կը  
նկատուի իրենց անձնական  
Հաւատքի ցուցանիշը:

Ապրիլ 2006-ին Անգլիոյ Տապլի  
քաղաքի Մեթոտական եկեղեցիի մը  
Հոգաբարձութիւնը տեղեակ եղաւ,  
որ իրենց կառուցած մէկ նոր շէնքին  
վրայ եթէ խաչ մը զետեղէին, պէտք  
էր տուրք վճարէին, որովհետեւ, ըստ  
անգլիական օրէնքին, խաչը  
առեւտրական ծանուցում ընելու

պէս բան մըն էր: Խաչը՝ ըլլայ շէնքի մը վրայ կամ անձի  
մը վրայ, կը ծանուցանէ արիւնդուայ Գողգոթայի խաչը,  
որ մեր միակ յոյսն է ներում եւ փրկութիւն գտնելու:

Այսօրուայ մեր Աստուածաշունչի ընթերցանութեան  
Հատուածը մեզի կ'ըսէ, թէ խաչը որպէս մահապատիժի  
գործիք գործածուած է մեր Փրկիչին համար (Մատթ. 27.  
22-26): Ամբոխը բարկացած, պռուց. «Թող խաչուի»: Խաչը  
նշան մըն է Յիսուսի մահուան եւ պէտք չէ թեթեւ առնուի:  
Այս ճշմարտութիւնը պէտք է մեզի թելադրէ քննել մեր  
անձը, թէ ի՞նչ կ'ըսէ խաչը մեզի համար: Արդեօք անիկա  
վկայութիւնն է մեր յաւիտենական յոյսին՝ Գողգոթայի  
խաչին վրայ Յիսուսի փրկարար մահով: Յիսուս ըսաւ.  
«Եթէ մէկը կ'ուզէ գալ իմ ետեւէս... թող ամէն օր իր  
խաչը վերցնէ ու հետեւի ինձի» (Ղուկ. 9. 23): Այս կը  
նշանակէ պատրաստակամութիւն՝ ազատ կամքով Յիսուսի  
աշակերտելու սուղ գինը վճարել եւ հետեւիլ իրեն:

**Քանի որ Յիսուս խաչը ելաւ մեզի համար, մենք  
պէտք է գայն վերցնենք իրեն համար:**





Ուրբաթ  
25 Մարտ

### Յիսուսի Գերեզմանը

Կարդա՛  
Ղուկաս 24. 1-12

Աճ հոս չէ, հապա  
յարութիւն առաւ:  
—Ղուկաս 24. 6

ԱՍՏՈՒՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՄԷՁ  
■ Բ. Օրինաց 25-27  
■ Առակաց 29. 21-27



**Ի**ր վաւերագրական գործին՝ Յիսուսի կորսուած Գերեզմանը գիրքին մէջ, ձէյքոպվիչ կ'ըսէ, թէ կան Հնագիտական վկայութիւններ, որոնք կը հերքեն Յիսուսի յարութիւնը: Ան կ'ըսէ, թէ Երուսաղէմի մօտ գերեզմանէ մը գտնուած դագաղի մը վրայ «Յիսուս՝ Որդի Յովսէփի» բառերը գրուած են: Ան կ'ըսէ նաեւ, թէ ինք ստուգած է Յիսուսի ինքնութիւնը անոր ծիներու քննութեամբ:

Որքա՞ն վաւերական է այս եզրակացութիւնը: Հրէական Հնախուզութեանց Հեղինակութիւնը զայն անիմաստ կը նկատէ: Այլ կրօնական եւ ոչ կրօնական գիտնականներ կը համաձայնին ըսուածին: Յիսուս եւ Յովսէփ անունները շատ գործածուած անուններ էին առաջին դարուն՝ Յուդայի մէջ: ձէյքոպվիչ պէտք էր, որ ունենար Յիսուսի ծիներէն, որպէսզի կարենար բաղդատել իր գտած ոսկորներուն հետ:

Սակայն, շատ զօրաւոր փաստեր կան ի նպաստ Յիսուսի յարութեան: Ամենէն համոզիչը, բոլոր աշակերտներուն (բացի Յովհաննէսէ) նահատակուիլն է Յիսուսի յարութիւնը քարոզելուն համար (Գործք 2. 29-32): Եթէ Քրիստոս յարութիւն առած չէր, ինչո՞ւ աշակերտները պիտի յօժարէին մեռնիլ, երբ կրնային ուրանալ զայն:

Բռնաբարութիւններ մեր հաւատքին եւ Աստուծոյ Խօսքին դէմ յաճախ կու գան ու կ'երթան: Պէտք է ազդուել այդպիսի անհիմն յարձակումներէ: Երկու հազար տարիներ առաջ, Յիսուսի աշակերտները ականատես եղան իրական գերեզմանին: Հրեշտակները ըսին. «Ինչո՞ւ ողջը կը փնտռէք մեռելներուն մէջ: Ան հոս չէ, հապա յարութիւն առաւ» (Ղուկ. 24. 5-6):

**Յիսուսի յարութիւնը պատմական իրողութիւն մըն է, գայն ընկալելը կը պահանջէ հաւատք:**





Շաբաթ  
26 Մարտ

**Քաթակը Որո՞ւն  
Չեոքն է՝**

Կարդա՛  
Մատթ. 26. 36-46

Միթէ պիտի չխմե՞մ  
այն բաժակը՝ որ ֆայրը  
տուա ինձի:  
—Յովհ. 18. 11

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ԱՒԷՁ  
■ Բ. Օրինաց 28-30  
■ Առակաց 30. 1-9



**Ա**րդեօք դուն ալ կանչուած<sup>՞</sup> ես ճաշակելու ցաւի եւ կորուստի դառն բաժակը: Փորձուած<sup>՞</sup> ես գայն հեռացնել քեզմէ: Հաւանաբար դուն ալ զարմացած հարց կու տաս, արդեօք Աստուած տեղ ունի՞ր<sup>՞</sup> այս կացութեանս մէջ: Եթէ այսպէս է քեզի համար ալ, յիշէ՛ այն մութ եւ տառապեցնող փորձառութիւնը, որ Յիսուս ունեցաւ իր մատնուած գիշերը:

Պէտք չէ երբեք մոռնանք, որ Յիսուս Աստուած-մարդ էր, թէ երկնային եւ թէ մարդկային բնութեամբ: Ան՝ պահ մը ընկրկումը ունեցաւ, իր աչքին առջեւ ունենալով խաչին տանջալի հեռանկարը, անմեղութեամբ կրեց աշխարհի մեղքը դիզուած իր հոգիին վրայ: Եւ ամենէն դժուարը, ան ցնցուեցաւ պահ մը, խորհելով, թէ լքուած էր իր Հօրմէ: Անոր համար, Ան աղերսեց ըսելով. «Եթէ կարելի է, այս բաժակը թող անցնի ինձմէ (Մատթ. 26. 39): Այդ բոլորէն ետք, սակայն, կատարեալ վստահութեամբ եւ հնազանդութեամբ, ըսաւ. «Բայց ո՛չ թէ ինչպէս ես կ'ուզեմ, հապա ինչպէս դուն կ'ուզես»: Իսկ Յովհաննու Աւետարանին մէջ յիշուած է Յիսուսի սա խօսքը. «Միթէ պիտի չխմե՞մ այն բաժակը, որ Հայրը տուա ինձի» (18. 11): Ան գիտէր, թէ այն ձեռքը, որ բաժակը պիտի բռնէր իր շրթներուն, մեր փրկութեան համար, Յուդայի, Կայստայի կամ Պիղատոսի ձեռքերը չէին, հապա իր սիրող Հօրը ձեռքը:

Նման խորհրդաւոր սիրոյ մը անարժանաբար արժանի դարձած, մենք կը կենանք Գողգոթայի խաչին առջեւ, եւ կը հաւատանք, թէ որեւէ բաժակ խմելու ըլլանք, ան մեր շուրթներուն կը մօտեցուի մեր Երկնաւոր Հօր կողմէ, Անոր անչափելի սիրոյն եւ իմաստութեան շնորհիւ:

**Վստահութեան դասը փորձութեան դպրոցին մէջ  
կը սորվինք:**





Կիրակի  
27 Մարտ

### Փխրուն Գառնուկ Մը

Կարդա՛  
Ա. Կորնթ. 11. 23-26

Բայց Անկա մեր յանձնաքննումն համար վիրաւորուեցաւ, մեր անօրէնութիւններուն համար ճգնուեցաւ: —Եսայի 53. 5

ԱՍՏՈՒՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Բ. Օրինաց 31-32  
■ Առակաց 30. 10-20



Հանդարտեցնելու համար երեք տարեկան զարմուհիս, որ շոքոլային տէրն է, հանդարտ խօսք մը ըսաւ, որ բոլորիս ալ զարմանք պատճառեց. «Հոգ չէ, հօրեղբայր, արդէն գառնուկը պիտի կոտրուէր երբ գայն ուտելու ըլլայինք»:

Մինչ մենք՝ չափահասներս կը փորձէինք նուիրական յիշատակներ դուրս բերել Ջատկուան աւանդութիւններէն, երեք տարեկան աղջնակ մը նուիրական պահ մը ստեղծեց մեզի համար: Ան մեզի յիշեցուց, որ Ջատիկը Աստուծոյ կատարեալ գառնուկին մասին է, որ կը փշրուի, որպէսզի մենք մնանք միասնական: Անոր անմեղ եւ իմաստուն խօսքը ինձի յիշեցուց այն խօսքերը, որոնք կ'արտասանենք հաղորդութեան մատակարարութեան ընթացքին. «Այս է իմ մարմինս, որ ձեզի համար կը կտրուի»:

Կրնանք համտեսել եւ տեսնել, թէ այն կեանքը՝ որ մեր Տէրը գոհաբերեց մեզի համար, շատ աւելի քաղցր է քան որեւէ այլ պատրաստութիւն մեզի համար:

Ոչ մէկ բան այնքան յստակօրէն կը խօսի  
Աստուծոյ սիրոյն մասին, որքան Յիսուսի խաչը:



**Ջ**ատկուան հակիրթներու եւ շոքոլայներու կողովները բանալէ ետք, հօրեղբայրս ուզեց գիտնալ, թէ ճերմակ շոքոլայէ գառնուկին մէջը պարահպ էր թէ լեցուն: Առանց մտածելու հետեւանքին մասին, ան սեղմեց շոքոլայէ գառնուկը: Յանկարծ անոր ամբողջ մարմինը ցնցուեցաւ եւ կարծես թէ թունաւորումի պէս բան մը պատահեցաւ: Անոր փթամատը մնաց մխրճուած եւ փակած ճգմուած շոքոլային մէջ:

Սպասեցինք ներկաներուն հակազդեցութեան: Ամէն կողմէ սկսան ափսոսանքի ձայներ լսուիլ ճգմուած շոքոլային համար: Մինչ մեծերը կը ջանային բառեր գտնել հանդարտեցնելու համար երեք տարեկան զարմուհիս, որ շոքոլային տէրն է, հանդարտ խօսք մը ըսաւ, որ բոլորիս ալ զարմանք պատճառեց. «Հոգ չէ, հօրեղբայր, արդէն գառնուկը պիտի կոտրուէր երբ գայն ուտելու ըլլայինք»:

Մինչ մենք՝ չափահասներս կը փորձէինք նուիրական յիշատակներ դուրս բերել Ջատկուան աւանդութիւններէն, երեք տարեկան աղջնակ մը նուիրական պահ մը ստեղծեց մեզի համար: Ան մեզի յիշեցուց, որ Ջատիկը Աստուծոյ կատարեալ գառնուկին մասին է, որ կը փշրուի, որպէսզի մենք մնանք միասնական: Անոր անմեղ եւ իմաստուն խօսքը ինձի յիշեցուց այն խօսքերը, որոնք կ'արտասանենք հաղորդութեան մատակարարութեան ընթացքին. «Այս է իմ մարմինս, որ ձեզի համար կը կտրուի»:

Կրնանք համտեսել եւ տեսնել, թէ այն կեանքը՝ որ մեր Տէրը գոհաբերեց մեզի համար, շատ աւելի քաղցր է քան որեւէ այլ պատրաստութիւն մեզի համար:

Ոչ մէկ բան այնքան յստակօրէն կը խօսի  
Աստուծոյ սիրոյն մասին, որքան Յիսուսի խաչը:



Երկուշաբթի  
28 Մարտ

**Անկեղծ  
Կասկածներ**

Կարդա՛  
Մատթ. 28

Երբ տեսան զայն  
(Յիսուս)  
երկրպագեցին Անոր,  
բայց ոմանք  
կասկածեցան:  
—Մատթ. 28. 17

ԱՍՏՈՒԱՍՏՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒԱԼ ՄԷՋ  
■ Բ. Օրինաց 33-34  
■ Առակաց 30. 21-33



**Մ**եր մարդկային փորձառու-  
թիւնը կ'ըսէ, թէ մարդիկ չեն  
վերադառնար գերեզմանէն: Երբ  
մահը գայ իր սարսափելի  
իրականութեամբ, մեզ կատարեալ  
յուսալքումի կը մատնէ, եւ գիտենք,  
թէ անգամ մըն ալ այս կեանքի մէջ  
պիտի չտեսնենք մեր սիրելիները:  
Մենք ներկայ կ'ըլլանք  
յուզարկաւորութիւններու, յարգելու  
համար մեռնողներուն յիշատակը եւ  
կ'ողբանք անոնց կորուստը: Բայց  
երբեք չենք ակնկալեր, որ դրան  
առջեւ պիտի ողջունէ մեզ այն  
սիրելին, որ մեռած էր ու թաղուած:  
Այս իրողութեան լոյսին տակ,  
զարմանալի չի թուիր, որ Յիսուսի  
աշակերտները առաջին առիթով չուզեցին հաւատալ, որ  
իրապէս իրենց Տէրը մեռնելէ ետք յարութիւն առած էր:  
Հետեւելով կիներու վկայութեան, որոնք հրեշտակ մը տեսած  
էին պարսպ գերեզմանին վրայ, եւ ապա տեսած էին Յիսուսը  
անձնապէս (Մատթ. 28. 1-10): «Տասըմէկ աշակերտները  
գացին Գալիլիա՝ այն լեռը, որ Յիսուս որոշած էր իրենց  
համար: Երբ տեսան Չայն, երկրպագեցին Անոր, բայց ոմանք  
կասկածեցան» (Հ. 16-17):

Յիսուսի մօտ եղողներէն, Անոր սքանչելի ուսուցում-  
ները լսողներէն եւ Անոր զօրաւոր հրաշքները վկայողներէն  
ոմանք սկսան կասկածիլ, որ Յիսուս իրաւ ողջնցած էր:  
Սակայն, աշակերտներուն անկեղծ կասկածները, շուտով  
փոխուեցան ուրախութեան եւ յոյսի, երբ անոնք դէմ առ  
դէմ եկան իրականութեան առջեւ յարուցեալ Տէրը տեսնելով:

Ի՞նչ կասկածներ ունինք Յիսուսի մասին: Յարութեան  
ուօնին թարմ յիշատակներով, լաւ է, որ վստահինք մեր  
Արարիչ Հօր Աստուծոյ, թէ ինք կ'ընայ ընել ամէն բան:

**Մէկ նայուածք գողգոթայի խաչին, կրնայ  
հեռացնել կասկածներդ:**







Երեքշաբթի  
29 Մարտ

## Տեսնել Ամբողջ Չարիքը

Կարդա՛  
Եփես. 5. 1-17

Որովհետև անոնց  
ըրած գաղտնի  
բաներուն մասին  
խօսիլն իսկ ամօթ է:  
—Եփես. 5. 12

ԱՍՏՈՒՇԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՌՈՒՆ ՄԷՋ  
■ Ցովճ. 1-5  
■ Առակաց 31. 1-9



չ'ակնկալեր մեզմէ, որ ամէն տեսակի կապեր խզենք  
չարութեան հետ: Յիսուս, որպէս մարմնացած Աստուած  
սիրեց եւ կը շարունակէ սիրել մեղաւորները: Սակայն,  
Եփեսացիներուն գրուած նամակին մէջ Առաքեալը կ'ըսէ.  
«Ընկերակից մի՛ ըլլաք խաւարին անպտուղ գործերուն,  
այլ փոխարէնը կշտամբեցէ՛ք զանոնք: Որովհետեւ անոնց  
ըրած գաղտնի բաներուն մասին խօսիլն իսկ ամօթ է»  
(Եփես. 5. 11-12): Մեր պատասխանատուութիւնն է ընդի-  
մանալ չարին, ապրելով «բարութեան, արդարութեան եւ  
ճշմարտութեան օրինակելի կեանք մը» (Հ. 9), «Մասնակից  
չըլլալով խաւարին անպտուղ գործերուն» (Հ. 11):

Նոր Կտակարանի մեկնաբան մը կ'ըսէ, թէ Հաւատացեալի  
մը վարքն ու բարքը՝ որպէս լոյսի զաւակ, երեւան կը  
Հանէ խաւարին մէջ եղողներուն գործերը եւ ցոյց կու  
տայ անոնց մեծ եւ Հակասական տարբերութիւնը: Պէտք  
չունինք չարը տեսնել, Հասկնալու մեր մեղքին ցաւալի  
վախճանը: Պէտք է խափանել խաւարը, լոյսի մէջ ապրելով:

**Լոյսի զաւակներ հանգիստ չեն զգար մութիմ մէջ:**





Չորեքշաբթի  
30 Մարտ

**Խոնարհութեան  
Հարստութիւնը**

Կարդա՛  
Ա. Կորնթ. 3. 1-10

Ուստի ո՛չ տնկողը բաց  
մըն է, եւ ոչ ջրողը,  
մապա Աստուած, որ  
աճեցուց:  
—Ա. Կորնթ. 3. 7

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՆ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Սաղմոս 36-38

**Ա**ն սպրեցաւ հոգեւոր համես-  
տութեան կեանք մը, երբ ամէն  
իրաւունք ունէր հպարտանալու  
մարդկային չափանիշով: Եօթա-  
նասունէ աւելի գիրքերու հեղինակ  
եւ շատ մը ուրիշ գիրքերու  
թարգմանիչ Անալու Մարաս շատ  
մը պատճառներ ունէր պարծենալու:  
Սակայն, ան աւելի մտահոգուած էր  
Քրիստոսը պատուելով քան իր անձը  
յառաջ մղելով: Ան միշտ կը սիրէր  
Աստուածաշունչի համաժողովնե-  
րու կազմակերպչական աշխատանք-  
ներուն մեծագոյն բաժինը բերել,  
առանց բեմին վրայ երեւելու:  
Խոնարհ ծառայի մը պէս, իր գործը  
կ'ընէր միշտ թախտ մը դէմքին եւ

ուրախ հոգի մը պահելով: Իրեն համար շատ բնական էր  
եւ դիւրին, եւ արժանի ալ էր մարդոց ուշադրութիւնը իր  
վրայ կեդրոնացնելու: Սակայն, այդ բոլորին փոխարէն,  
ան լռութեան մէջ ծառայեց, ուրախութեան արցունք  
թափեց, երբ տեսաւ, որ Աստուած կը գործէր մարդոց  
հոգիները փոխելու համար: Անոր ունեցածը շատ տպաւորիչ  
խոնարհութիւն մըն էր՝ կատարեալ հարազատութեամբ:

Առիթով մը լսեցի անոր ըսածը. «Կրնանք սքանչելի  
իրագործումներ կատարել եթէ կարեւոր չնկատենք, թէ  
ո՛վ կը ստանայ վարկը»: Այս մէկը ճշմարտութիւն է  
քրիստոնէական ծառայութեան մէջ: Առաքեալը կ'ըսէ. «Ես  
տնկեցի, Ապօղոս ջրեց, բայց Աստուած աճեցուց» (Ա. Կոր.  
3. 6-7): Պօղոս Առաքեալ հեզութեամբ ծառայելու այդ  
մեծ եւ կարեւոր դասը սորված էր Տէրոջմէ: Մենք ի՛նչ որ  
կ'ընենք, միայն իր գորութեամբ եւ շնորհքով է որ կ'ընենք,  
եւ անոր համար բոլոր փառքը պէտք է իրեն երթայ:

**Հպարտութիւնը եւ շնորհքը չեն կրնար բնակիլ  
նոյն տեղը:**





Հինգշաբթի  
31 Մարտ

### Յիսուսը Գտնել

Կարդա՛  
Յայտ. 3. 14-22

Ահա՛ կայնա՞ծ եմ դրան առջեւ ու կը բախեմ: Եթէ մէկը լաւ իմ ձայնս ու բանայ դուռը, պիտի մտնեմ անոր քով, ու պիտի ընթրեմ անոր հետ, եւ ան ալ ինձի հետ: —Յայտ. 3. 20

Աստուծո՞ւնը Մէջ  
Տարուա՛ն Մէջ  
■ Յետո՛ւ 1-3  
■ Առակաց 31. 10-31



կարելի է գտնել Յիսուսը: Ան չի պահուիր մեզմէ: Ան կ'ըսէ. «Տեսէ՛ք, ահա կայնա՞ծ եմ դրան առջեւ ու կը բախեմ» (Յայտ. 3. 20): Յիսուսը կրնաս գտնել սրտիդ դրան առջեւ: Քու գոյութեան կորիզը կազմող ճշմարտութիւնը թոյլ տալ է, որ քեզի համար սպասող Յիսուսը ներս մտնէ: Ան անպատճառ չ'ուզեր քեզի հանդիպիլ եկեղեցիի մէջ, կամ կեանքիդ վերջին ժամանակաշրջանին: Այլ, կ'ուզէ հիմա քու երազներուդ, խորհուրդներուդ, եւ փափաքներուդ կեդրոնական տեղը գրաւել: Ան կ'ուզէ իսկական յարաբերութիւն քու իսկական ինքնութեանդ հետ:

Թէեւ սքանչելի բան մը պիտի ըլլայ Անոր՝ սրտիդ մէջ բնակիլը, սակայն պէտք է զգուշանալ: Կրնայ այդ տեղաւորուիլը կատարեալ չըլլալ: Անկասկած սրտիդ մէջ կան կարգ մը պահուած բաներ, որոնց Ան չի հաճիր եւ կ'ուզէ հեռացնել զանոնք: Չկայ աւելի արժեքաւոր բան քան Անոր հետ մտերմութիւն հաստատել: Տե՛ղ տուր Յիսուսի սրտիդ մէջ:

**Յիսուս կեցած է սրտիդ դրան առջեւ: Ընդունէ՛  
Չայն՝ ներս:**



**Մ**եր կեանքը, շատ մը այլ բաներու կողքին, է նաեւ փնտռուք մը: Շատ մը բաներ, որոնց անմիջականորէն պէտք ունինք, չենք կրնար ունենալ մինչեւ փնտռելով չգտնենք զանոնք: Փնտռել եւ ընտրել զիրար լրացնող մարդկային պարտաւորութիւններ են յաճախ: Մենք կը փնտռենք երբեմն նիւթական բաներ եւ երբեմն ալ վերացական-հոգեկան բաներ: Որպէս մարդ, երբեմն մեր նմանը կը փնտռենք:

Երկու հազար տարիներ առաջ, մարդիկ, լսած ըլլալով Յիսուսի մասին, ելան Չայն փնտռելու: Մինչեւ այսօր Յիսուսը փնտռողներ կան: Փառք Աստուծոյ: Շատ դիւրաւ